—5000 ր. առաջին 500 ր. համար 5 ր., մին-
չած գումարին խրաքանչիւր 100 ր.—50 կոպ.:

3. Ցուցակագրած առարկաները կնքելու
և ստորագրելու համար 5—ական կոպ. մինչև
50 առարկան, 4—ական կոպ. մինչև 100 առար-
կան, 3—ական կ. 100-ից աւելի առարկաների
համար:

4. Տիրապետելու իրաւունքը վաւերացնե-
լու համար 2 կոպ.:

Անշարժ կայքը ցուցակագրելու համար
մինչև 500 ր. գումարը, 2 ր. 50 կոպ., 500—

1000^ա 5 ր., 1000—2000^ա 6 ր., 2000—3000^ա 7 ր.,
3000—4000^ա 8 ր., 4000—5000^ա 9 ր. իսկ 5000-ից
բարձր գումարին առաջին 5000 ր.—9 ր., իսկ
մասցածից խրաքանչիւր 1000 ր.—50 կոպ.:

ՆՕՏԱՐՆԵՐԻՆ ՎԱՐՉԱՑՔՈՒ ՀԱՓԸ

1. Նօտարական արձանագրութիւն (ակտե)
կազմելու համար պէտք է վճարել մինչև
500 ր. գումարը 2 ր., 500—1000 ր.—3 ր.,
գումարից աւելի գումարին 4 ր. և բացի գրա-
նից պայմանագումարի խրաքանչիւր 100 ր.
—10 կոպ.

2. Մոււրեակներ վաւերացնելու և նրանց
մասին բողոք գրելու համար մինչև 500 ր.
գումարը—50 կ., 500-ից բարձր գումարին—
1 ր. և բացի գրանից մուրհակագումարի խր-
աքանչիւր 100 ր.—10 կ.:

3. Պայմաններ վաւերացնելու համար
մինչև 500 ր.—1 ր., 500—1000 ր.—1 ր. 50 կ.,
1000-ից բարձր գումարին—2 ր. և բացի գր-
անից պայմանագրի խրաքանչիւր 100 ր.—
10 կոպ.:

4. Երբ արձանագրութեան կամ պայմա-
նագրութեան գումարը չի կարելի որոշել,
այն ժամանակ պէտք է վճարել այնքան, որ-
քան վճարում է 1000 բուրիանոց արձանա-
գրութեան կամ պայմանագրութեան համար:

5. Պատճեն վաւերացնելու համար առա-
ջին թերթին—25 կ., հետեւալ թերթերի խ-

բարանչիւրին—10 կ. (թերթը հաշւում է 25
տող):

6. Ստորագրութիւնը վաւերացնելու հա-
մար—10 կոպ. ամեն մի ստորագրութեան
համար:

7. **Հաւատարմարդքեր** (довѣренность),
հաշտութեան թղթեր (мировая запись) և միջ-
նորդական թղթեր (третейская запись) կազմե-
լու կամ վաւերացնելու համար—1 թերթին
1 ր., հետեւալ թերթերին 30-ական կոպ.:

8. **Փաստաթղթերի ներկայացման ժամա-
նակի վաւերացնելու համար—25 կոպ.:**

9. Մէկի կողմից մէկ ուրիշի յայտարա-
րութիւն տալու և դրա մասին վկայաթուղթ
տալու համար—50 կոպ.:

10. **Զանազան բղբեր նոտարական
գրքի մէջ անցկացնելու համար իւրաքանչիւր
տողին—2 կոպ.:**

11. **Պետական գանձարանից կենսաթոշակ
ստացողի կենսանութեան մասին վկայելու
համար—3 կոպ., երբ կենսաթոշակի գումարն
է տարեկան մինչև 30 ր., 10 կ.՝ երբ 30—300
ր. և 20 կ.՝ երբ 300-ից աւելի է: իսկ ուրիշ
դէպքերում նոյնպիսի վկայութեան համար
—50 կ.:**

12. **Փառտարդքեր պահելու համար
(փողարին թղթերից) իւրաքանչիւր թղթին
ամսական 25 կ. և փակած ծրարին ամսական
—50 կ.:**

13. **Նոտարական մի որևէ է արձանագրու-
թեան ժամանակին իւմանալու և այդ մասին**

Վկայագիր ստանալու համար—50 կ.:

14. Երկրորդ կամ ամելի անգամ քա-
ղուածք (ենիսէ) տալու համար տողին—1 կոպ.:

15. Նոտարական գրասնենակից գուրս
կատարած գործողութիւնների համար պէտք է
վճարել բացի վերեւում նշանակած գումարնե-
րից ևս 3 ր.—մայրաքաղաքում, 2 ր.—նահան-
գական քաղաքում, 1 ր.—գաւառական քաղա-
քում, իսկ քաղաքի սահմանից գուրս անմերու
համար պէտք է վճարել և ճանապարհածախս
փեստին 10 կ.՝ թէ գնալու և թէ վերաքառ-
նալու համար, իսկ երկաթուղի եղած տեղե-
րում, II կարգի տոմսակի արժէքը: Բացի այդ
ճանապարհորդութեան ժամանակի համար
պէտք է վճարել օրավան հ բուրլի—մայրաքա-
ղաքում, 3 ր.—նահանգական քաղաքներում և
2 ր.—գաւառական քաղաքներում:

Մ Ո Ւ Բ Շ Ա Կ

Մուրհակ (վեշտը) տալ կարող են այն բո-
լոր անձներ, որոնք իրաւունք ունին պարտա-
թուղթ տալու: Պարտաթուղթ չեն կարող տալ
անշափահաները, ինչև պարները, վատնիչ յայ-
տարարութաները, բոլոր քաղաքացիական ի-
րաւունքներից զրկուածները և այլն:

Մուրհակ տալ չեն կարող. 1) հոգևորա-
կանները, 2) այն գիւղացիները, որոնք ոչ
անշարժ կայք ունեն, բացի իրանց հողարած-
նից (նաղեր), և ոչ էլ առևտրական վկայական:

Պահուած կանայք կարող են միայն ա-
մուսնությունութեամբ մուրհակ տալ, իսկ

Մուրհակի գումար մինչեւ	Մուրհական կարգը	Մուրհական կարգը
Բուրփի	R	Կ.
50	—	10
100	—	15
200	—	30
300	—	45
400	—	60
500	—	75
600	—	90
700	1	05
800	1	20
900	1	35
1000	1	50
1500	2	25
2000	3	
3000	4	50
4000	6	—
5000	7	50
6000	9	—
7000	10	50
8000	12	—
9000	13	50
10000	15	—
20000	30	—
30000	45	—
40000	60	—
50000	75	—

օրիբորդները (նոյն իսկ չափահանները) ծնողների թոյլտութեակամք, եթէ նրանցից բաժանուած չեն: Բայց եթէ նրանք իրանց անունով մի որևէ է առևորական հաստատութիւն կամ զործ ունին, այն ժամանակ կարող են և առանց ամուսնու կամ ծնողի համաձայնութեան մուրհակ տալ:

Մուրհակ տալու իրաւունք չունեցաների տուած մուրհակները չեն կարող իսկական մուրհակի ոյժ ունենալ, սակայն նրանք առ ոչինչ չեն համարւում, այլ նոյն ոյժն ունին, ինչ որ հասարակ պարագաները:

Մուրհակները զրուամ են առանձին մուրհակաթղթիվրա, որոնց արժեքը կարելի է որոշել այս երեսի աղիսակով:

Եթէ մուրհակը հասարակ թղթի վրա է զրած, այն ժամանակ նա չի համարւում մուրհակ և չունի մուրհակի ոյժ:

Մուրհակները լինուամ են երկու տեսակ՝ 1. հասարակ մարհակ և 2 փօխանակագիր: Առաջին գէպրում մուրհակ տաղը ինքը պիտի վճարէ

գումարը, իսկ երկրորդ գէպրում —նա մէկ ուրիշին է յանձնարարում վճարել:

Մուրհակները զրուամ են արկու տեսակը բայ առաջին պահին նեցման (ու որդեյալենից) կամ օրու ժամանակով (ըրունակ): Առաջին գէպրում պարտապանը իր պարտքը պիտի վճարէ իսկոյն, եթէ որ պահանջին երկրորդ գէպրում որոշած ժամանակը լրանալուց յետոյ: Եթէ այդ ժամանակամիջոցներում պարտապանը իր պարտքը չվճարէ, պէտք է մուրհակները ներկայացնել նօտարին, որը օրինական ձեռվ մակագրում է շվաճարման մասին (պրոտեստ): Դրանից յետոյ պարտապերը զատարանի միջոցով կարող է պահանջել գումարը:

Մուրհակները իրանց ոյժը կրցնեմ են. 1) Եթէ զրուած են «ըստ առաջին պահանջման», բայց 12 ամսուայ ընթացքում չեն ներկայացրած նօտարին բողոքելու (պրոտեստանու) համար: 2) Եթէ զրուած են որոշ ժամանակուի կամ «ըստ առաջին պահանջման», բայց բողոքելուց յետոյ 5 տարուայ ընթացքում չեն առաջարկուած վճարելու: Այդ երկու գէպրում էլ մուրհակները պահպանում են իրանց նշանակութիւնը 10 տարի, իբրև պարտապութիւն (օլգ. օնհատ.):

Մուրհակները զրուամ են որոշ ձեռվ. օրինակ.

ա. Հասարակ մուրհակ.

Բագու 4 նոյեմբերի 1904թ.:

Մուրհակ 2000 թ.: Այս օրից վեց ամիս յետոյ պարտապը եմ այս մուրհակով վճարե-

լու Երեանցի պ. Վարդան Մարտիրոսեան Շահնշանցին երկու հաղար բուրլիի Բագուեցի շ-ըդ կարգի վաճառական Սահակ Բզնունի:

Թիֆլիս. 1906 թ. 25 յունուարի: Մուրհակ 100 բուրլու: Առաջիկայ 1906 թ. յունուարի քսան և հինգին այս իմ մուրհակով պարտաւոր եմ վճարել Թիֆլիսի վաճառական Ք... Մ... հարիւր բուրլի:

• • • Կար. Առաքելեան:

Կարս, 22 մայիսի 1904 թ.

Մուրհակ 100 բուրլ: Հստ առաջին պահանջման—(կամ վերայիշեալ թւից քառասուն օր յիսոյ)՝ վճարեցէր այս մուրհակի համեմատ Ալեքսանդրապոլիցի վաճառական Սմբատ Մանուկեանցին հաղար բուրլի: Արամ Աթահանց:

2-րդ կարգի վաճառական Արամ Աթահանցին, Շուշի քաղաքում:

ՄՈՒՐՀԱԿԻ ԶԵՂՋԸ

Զեղջը և առհասարակ մի որե է զրամազլիքի տօկոսը հեշտութեամբ հաշուելու համար, ոլէտք է զրամազլուխը բազմապատկել օրերի թուի վրա և արտադրեալը բաժանել համապատասխան բաժանարարի վրա, հետեւ աղիւսակի համեմատ.

0/0	Բանձնաւոր
3	12000
3½	11077
3⅓	10286
3⅔	9600
4	9000
4½	8000
5	7200
5½	6545
6	6000
6½	5538
7	5143
7½	4800
8	4500
8½	4235
9½	3789
10	3600
11	3273
12	3000

Ա. օրինակ. 1000 բուրլու լու մուրհակի 25 օրուայ զեղջը 3% -ով = 4000 × 25 = 60000 : 12000 = 5 բուրլու:

Բ. օրինակ. 6950 բուրլու լին 6% -ով 34 օրում կը բերէ 6950 × 34 = 236,300: 6000 = 39 թ. 38 կ. տօկոս:

Այդ ձևով կարելի է գանել և ուրիշ գումարների տօկոսոր:

ԳՐՈՇՄԱՏՈՒԹՅ

(Գերօնում սօնը)

5 կոպէկանց զրուագաւոր զրուագաւոր հանիլ պէտք է կազմուել այն բուրլ հաշիւների, ստացականների և այլ նմանօրինակ թղթերի

գրա, որոնց գումարը 5 թ. աւել է: Մինչև 5 թ. գումարը զրուամնից չէ պահանջում:

10 կոպ. զրուամուրքի ենթարկում է իւրաքանչիւր թերթը՝ հաւատարմաթուզթ մի որե է հիմնարկութիւնից 5 բուրլուց աւելի գումար—(առնիկ, կենսաթոշակ, ընծայ կամ օժանդակութիւն)՝ ստանալու: Փաստաթղթեր, որոնց գումարը 50 թ. աւել չէ:

Գրեսոյկնիւր—(80 երես, ոչ աւել)՝ որոնցով

ապառիկապրանք են վերցնում վաճառատներից։
 15 կրագ. զրոշմատուրը ենթարկում է
 իւրաքանչիւր թերթը՝ զատաստանական ա-
 տեհանները արւոր խնդիրների կամ այլ թրղ-
 թերի, ստացականների փող, փաստաթղթեր
 կամ այլ առարկաններ ստանալու մասին ապա-
 հովագրական պօլիմիները, եթէ ապահովութեան
 պրեմիան 9—15 րուբլի է, անշարժ կայրերի և
 յանձնարարութիւնների մասին կատարուած
 արձանագրութիւնները, եթէ գումարը 50—100
 րուբլի է։ Խւարանիւր փաստարուղր—տոմ-
 սակ, հաշիւ, ստացական և այն, եթէ արժեքի
 գումարը 50 րուբլուց աւել է տարեկան։

60 կրագ. իւրաքանչիւր թերթը մասնաւոր
 մարդկանց կամ հիմնարկութիւնների տուած
 խնդրագրերի, յայտարարութիւնների, գան-
 գառների, բացարարութիւնների և այլն։ Ա-
 պահովագրական պօլիմիները, եթէ պրեմիան
 15—30 րուբլի է, յանձնարարութիւնների կամ
 անշարժ կայրի մասին կազմած արձանագրու-
 թիւնները, եթէ գումարը 100—300 րուբլի է։

1 րուբլի իւրաքանչիւր թերթը, փաճա-
 ռականութեամբ կամ արեւստներով պարապե-
 լու թոյլատութեան վկայականները։ Ամեն
 տեսակ հաւատարմական նամակներ, կասկա-
 թղթերը։ Պայմանաթղթերը և վաճառականա-
 կան ամեն տեսակ կապակցութիւններ, երբ
 գումարն անյայտ է։ Ապահովագրական պօլի-
 ները, եթէ պրեմիան 30 ր. աւել է, պարա-
 թղթերը և գրաւաթղթերը, եթէ արժեքի գու-
 մարը 1000 ր. աւել է։

ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ

ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ
 ՎԵՐՑԻՈՒՄ Է ՀԵՏԵՒԵԱԼ
 ՀԵՏԻՆ

Актовый сборъ.

Կապակցութեան տուր-
 քը լինում է 2 տեսակ՝
 ա) բարձր և բ) սորբին։

Բարձր տեսակին են-
 թարկում են՝ I գլխա-
 րապէս տիրապետու-
 թեան վերաբերեալ կա-
 պակցութիւններ, որոնց
 գումարը 50 ր. աւել է.
 այն է՝ 1) շարժական
 կամ անշարժ կալուածք
 գնելու, գրաւ գնելու,
 բրենելու, տիրելու կամ
 օգտուելու մասին պայ-
 մանագրերը, 2) պայմա-
 նագրեր ընկերութիւն-
 ների մասին, 3) կապա-
 կների տուանքի, հաշ-
 տութեան և այլ նման
 օրինակ թղթեր։ II ակ-
 ցիաները, պայերը, օր-
 մեզացիաները, գրաւա-
 թղթերը և այլն։

Սորբին տեսակին
 ենթարկում են 50 ր.
 աւել գումար պարունակող կապակցութիւննե-
 րը. 1) վաճառականական գործողութիւնների

Թերթ.	Կինը:	Բարձր	Անհամ	Առան	Կի.
40		100		1.000	
80		200		2.000	
120		300		3.000	
160		400		4.000	
2—		500		5.000	
240		600		6.000	
280		700		7.000	
320		800		8.000	
360		900		9.000	
4—		1.000		10.000	
8—		2.000		20.000	
12—		3.000		30.000	
16—		4.000		40.000	
20—		5.000		50.000	
24—		6.000		60.000	
28—		7.000		70.000	
32—		8.000		80.000	
36—		9.000		90.000	
40—		10.000		100.000	
80—		20.000		200.000	

աւել գումար պարունակող կապակցութիւննե-
 րը. 1) վաճառականական գործողութիւնների

մասին. 2) նորմանական կապակցաթուղթ (ձեռագիրը վաճառելու մասին). 3) պարտաւորաթուղթը ուրիշին յանձնելու մասին ստորագրութիւն:



ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՐԿ

Բնակարանների հարկ վերցնելու համար կառավարութիւնը բաժանել է բոլոր քաղաքներն ու գիւղաքաղաքները 5 կարգի: Կովկասին քաղաքներց պատկանում են.

II Կարգին—նազու, Բաթում, Թիֆլիս:

III Կարգին—մեծացած բոլոր նահանգական ու գաւառական քաղաքները, որտեղ մտցրած է քաղաքային ինքնավարութիւն:

IV Կարգին—Սևերսանդրապոլ, Անսալա, Արմաւիր, Գրօնի, Դերբենդ, Երևան, Մայկոպ, Շուշի, Պատրիարքական, Տեմիր-Խան-Շուրա:

V Կարգին—Սխալցխա, Ախալցխակ, Քոսի, Լենքորան, Ղպար, Ղուբա, Մոզկով, Նախիջևան, Նուբի, Շեմախի, Սղնախ, Թելաւ:

Բնակարանների հարկից ազատ են՝

1) այն շինութիւնները, որոնք ծառայում են պետական, հասարակական, գիտական կամ պարոցական հիմնարկութիւնների, հիւանդանոցների և վաճառառների համար—մի խօսքով՝ այն բոլոր աները, որտեղ մարդիկ չեն բնակուում. 2) Վանքերը, ասածնորդարանները, տպարանները, առհասարակ բարեգործական

նպատակների ծառայող բնակարանները, զինուորանոցները (կազարման), բացի օֆիցիենների բնակարաններից, բանուորների բնակարանները՝ զործարանին կից և այն:

Հարկի վեցում է բնակարանների բրեհի համեմատ:

Բնակարանային հարկ որոշելու համար իւրաքանչյուր քաղաքում կազմում է «Քաղաքային վարչութիւն հարկերի համար», որունենում է 4—6 անգամ բնակարանատէրերից և մի նախագահ—տեղական հարկային վերատեսուչը (ուստիով հիսուսութեան համար):

Իւրաքանչյուր տնատէր պարտաւոր է տարին մի անգամ—մինչև Յունուարի 7-ը տեղիութիւններ տալ այդ վարչութիւննը, թէ իր տանը քանի բնակարան կայ և դրանցից իւրաքանչյուրը ատրեկան որբան ըրեն է բերում եթէ նա այդ տեղեկութիւնները իր ժամանակին չներկայացնէ կամ կեղծ տեղեկութիւններ առյ, այն ժամանակ պատճի կենթարկութիւնը վճարելով առաջին դէպքում մինչև 50 ը., իսկ երկրորդ դէպքում մինչև 300 ը. տուգանք:

Բնակարանային վարչութիւնը մինչև Մարտի 7-ը ուղարկում է բնակարանատէրերին յայտարարութիւն հարկերի քանակի մասին: Ով որ դժո՞ն է, կարող է այդ մասին բողոքել «նահանգական վարչութիւննը», 1 ամսուայ ընթացրում:

ՏԵՐԵՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

100 զուտի սովորականից կ'աելլէ *).

15	12,50	14,58	16,66	18,75	20,83	22,91	27,03	31,25	41,66
16	13,33	15,55	17,77	20,00	22,22	24,44	28,88	33,33	44,44
17	14,16	16,52	18,89	21,25	23,61	25,97	30,69	35,41	47,22
18	15,00	17,50	20,00	22,20	25,00	27,50	32,50	37,50	50,00
19	15,83	18,47	21,11	23,25	26,38	29,02	34,30	39,58	52,77
20	16,66	19,44	22,22	25,00	27,77	30,55	36,11	41,66	55,55
21	17,59	20,41	23,38	26,25	29,16	32,08	37,91	43,75	58,33
22	18,33	21,39	24,44	27,50	30,25	33,61	39,72	45,83	61,11
23	19,16	22,36	25,55	28,75	31,94	35,13	41,52	47,91	63,89
24	20,00	23,33	26,66	30,00	33,33	36,66	43,33	50,00	66,66
25	20,83	24,30	27,77	31,25	36,11	38,19	45,13	52,08	69,42
26	21,66	25,27	28,89	32,50	34,72	39,72	46,94	54,16	72,24
27	22,50	26,25	30,00	33,75	37,50	41,25	48,75	56,25	75,00
28	23,33	27,22	31,11	35,00	38,89	42,77	50,55	58,33	77,77
29	24,16	28,19	32,22	36,25	40,27	40,30	52,36	60,41	80,55
30	25,00	29,16	33,33	37,50	41,66	45,83	54,16	62,50	83,33

*) Մահօք. Այս պրիմակի միջնորդ կարդինալ է Հեղապահության նախարարը, իսկ գովորությունը՝ Պատմական պատրիարքը է այդ.

ԲՈՐԴ ՏՕԿՈՒՄՆԵՐ

1 ր. գրամագլուխը կը դառնայ.

ԱՄՓԱ.	3%/ ₀	3½%/ ₀	4%/ ₀	4½%/ ₀	5%/ ₀	5½%/ ₀
1	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.
2	25	—	29,166	—	37,500	—
3	—	50	—	66,666	—	83,333
4	—	75	—	87,500	—	125,000
5	1	100	1	16,666	1	33,333
6	1	25	1	45,833	1	66,666
7	1	50	1	75,000	2	100,000
8	2	75	2	04,166	2	33,333
9	2	100	2	33,333	2	66,666
10	2	25	2	62,500	3	90,000
11	2	50	2	91,666	3	125,000
12	2	75	3	20,833	3	66,666
	3	100	3	50,000	4	80,000

ԱՄՓԱ. 6%/₀-ով կլինի 6,66 կ. \times 2=13,32 կ., 20 օրում, 3½%/₀-ով=19,44 կ.,
ԱՄՓԱ. 7%/₀ կլինի 19,44 կ. \times 2=38,88 կ. Ա. այլն. Երկրորդ աղիւսակում
էլ նոյն ձևով պարունակվ. կարել 100 ր. տօկութ նաև 7, 8,
9, 10, 11%/₀-ով:

Քանի տարից յիսոյ.	3%/ ₀ .	4%/ ₀ .	5%/ ₀	6%/ ₀ .	6½%/ ₀
1	1,030	1,040	1,050	1,060	1,065
2	1,061	1,082	1,103	1,124	1,134
3	1,093	1,125	1,158	1,191	1,208
4	1,126	1,170	1,216	1,262	1,286
5	1,159	1,217	1,276	1,338	1,370
6	1,194	1,265	1,340	1,419	1,459
7	1,230	1,316	1,407	1,504	1,554
8	1,267	1,369	1,477	1,594	1,655
9	1,395	1,423	1,551	1,689	1,763
10	1,344	1,480	1,629	1,791	1,877
15	1,558	1,801	2,179	2,397	1,572
20	1,806	2,191	2,653	3,207	1,524
25	2,094	2,666	3,386	4,292	4,828
30	2,427	3,243	4,322	5,743	1,614
35	2,814	3,946	5,516	7,686	1,062
40	3,262	4,801	7,040	10,286	12,416

Այս միենոյն աղիւսակով կարելի է հաշուել, թէ բարդ տօկոսով տուած մի սրե է զրամագլուխ որոշ տարիներից յետոյ ինչպիսի գումար է գառնում. զրա համար պէտք է վերցնել համապատասխան տօկոսի ու տարիների անկիւնի թիւը և բազմապատկել տուած գումարը վրա:

**ՓՈՔՐԻԿ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆԻՑ ՄԵԾ
ԳՈՒՄԱՐ**

իւրաքանչիւր տարի 1 ը. խնայելով և տօկոսով տալով կարելի է ստանալ հետեւել զումարները.

Տարի:	3 ⁰ /0		4 ⁰ /0		4 ¹ /2 ⁰ /0		5 ⁰ /0		5 ¹ /2 ⁰ /0	
	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.
1	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2	203.0	204.0	204.5	205.0	205.5					
3	309.1	312.2	313.7	315.3	316.7					
4	418.4	424.6	427.8	431.0	434.1					
5	530.9	541.6	547.1	552.6	558.0					
6	646.8	663.3	671.7	680.2	688.0					
7	766.2	789.8	801.9	814.2	826.5					
8	889.2	921.4	938.0	954.9	971.9					
9	1015.9	1058.3	1080.2	1102.7	1125.3					
10	1146.4	1200.6	1128.8	1257.8	1287.2					
15	1859.9	2002.4	2078.4	2157.9	2240.4					
20	2687.0	2977.8	3137.1	3306.6	3490.0					
25	3645.9	4164.6	4456.5	4772.7	5119.3					
30	4757.5	5608.5	6100.7	6643.9	7248.7					
35	6046.2	7365.2	8149.7	9032.0	10021.8					
40	7540.1	9502.6	10703.0	12080.0	13661.0					
45	9272.0	12102.9	13885.0	15970.0	18412.4					
50	11279.7	15266.7	17850.3	20934.8	24622.1					

ԲԱՆԱՀՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրավարձի հաշուարտը:

Փող վճարելու կամ ստանալու ժամանակ բաւական գժուար է լինում արագ կերպով հաշուել, թէ օրական հրբան պէտք է ստանայ ամսական ոռնիկով աշխատող բանուորբ: Այդ գժուարութիւնը զգալի չափով թիթեացնել կարելի է հետեւել աղիւսակի միջոցով:

Անուն-կան	Օրա-վար-	Անուն-կան	Օրավար-ձի պէտք է լինի	Անուն-կան	Օրավար-ձի պէտք է լինի	Անուն-կան	Օրավար-ձի պէտք է լինի
ր.	կապ.	ր.	կապ.	ր.	կապ.	ր.	կապ.
5	16 ^{2/3}	23	—	76 ^{2/3}	41	1	36 ^{2/3}
6	20	24	—	80	42	1	40
7	23 ^{1/3}	25	—	83 ^{1/3}	43	1	43 ^{1/3}
8	26 ^{2/3}	26	—	86 ^{2/3}	44	1	46 ^{2/3}
9	30	27	—	90	45	1	50
10	33 ^{1/3}	28	—	93 ^{1/3}	46	1	53 ^{1/3}
11	36 ^{2/3}	29	—	96 ^{2/3}	47	1	56 ^{2/3}
12	40	30	1	—	48	1	60
13	43 ^{1/3}	31	1	3 ^{1/3}	49	1	63 ^{1/3}
14	46 ^{2/3}	32	1	6 ^{2/3}	50	1	66 ^{2/3}
15	50	33	1	10	51	1	70
16	53 ^{1/3}	34	1	13 ^{1/3}	52	1	73 ^{1/3}
17	56 ^{2/3}	35	1	16 ^{2/3}	53	1	76 ^{2/3}
18	60	36	1	20	54	1	80
19	63 ^{1/3}	37	1	23 ^{1/3}	55	1	83 ^{1/3}
20	66 ^{2/3}	38	1	26 ^{2/3}	56	1	86 ^{2/3}
21	70	39	1	30	57	1	90
22	73 ^{1/3}	40	1	33 ^{1/3}	58	1	93 ^{1/3}

է միակ աշխատաւոր որդուն, երբ նրա եղբայրները փոքրահասակ են (18 տարեկանից փոքր), իսկ հայրը աշխատանքի անընդունակ:

Երրորդ կարգի արտօնութիւն տրւում է այն զինուրացուին, որի մի եղբայրը արդէն զինուրական ծառայութեան մէջ է, կամ մեռել է այդ ծառայութեան ընթացքում: Բայց եթէ զինուրների թիւը չբանալ, այն ժամանակ այդ արտօնութիւնները կորցնում են իրենց ոյժը: ծառայութեան կանչում են նաև 3-րդ կարգի արտօնութեան երիտասարդները և ապա 2-րդ կարգինը:

Վիճակի հանկուց յետոյ զինուրացուները և նիթարկում են բժեկական բնինութեան: ընդունակ են համարւում միայն նրանք, որոնք բոլորովին առողջ են (յօդ. 45) և որոնց հասակը 2 արշ. 2½ վերշոկից պակաս չէ (յօդ. 46): Բայց հասակին պիտի համապատասխանէ կուրծքը, այսինքն կրծքի վանդակի շրջապատը պիտի լինի հասակի կեսը + 1/4 վերշոկ (յօդ. 46, յաւելուած VII). օրինակ եթէ հասակը 2 արշ. 4 վերշոկ է, կրծքի վանդակը պիտի լինի 1 արշ. 2 վերշոկ + 1/4 վերշ. = 1 արշ. 2 1/4 գ. և այն: Կրծքի վանդակը չափում է 7 կողի վրայից, թիհակների տակից:

Եթէ զինուրացուն մի որ և է հիւանդութեան կամ ֆիզիքական պակասութեան պատճառով բոլորովին անընդունակ է ծառայութեան, այն ժամանակ ազատում է, իսկ եթէ նա վատառողջ է կամ կրծքի վանդակը պա-

ԶԻՆԻՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ռուսահայատակ բոլոր տղամարդիկ անխտիք կերպով ենթակայ են զինուրագրութեան: Յօդ. 1-ին. Մասայութեան մտնելը ուղղուում է վիճակով: Վիճակ հանելու կանչում են այն երիտասարդները, որոնք մինչև վիճականութեան տարուայ հոկտեմբերի 1-ը արդէն լրացըել են 21 տարին:

Երտօնութիւն: Զինուրական կանոններով սահմանուած է երեք տեսակի արտօնութիւն—ընտանեկան զրութեան համեմատ (յօդ. 48):

Առաջին կարգի արտօնութիւն տրւում է ա) մէկուճար որդուն, երբ հայրը մեռած է կամ աշխատանքի անընդունակ է *), բ) միակ աշխատաւոր եղբօրը, երբ բոլոր միւս եղբայրներն ու քոյրերը որբ ու փոքրահասակ են, գ) միակ աշխատաւոր թոռին, երբ պապն ու մամը աշխատանքի ընդունակ որդի չունին, դ) ընտանիքի մի հասիկ որդուն և ե) ապօքինի ծնուած որդուն, երբ նա մօր միակ ինամորին է:

Երկրորդ կարգի արտօնութիւն տրւում

*). Աշխատանիք անբնույնակ են հոմարում այն մարդիկ, որոնք միւսնոյն են կամ արդէն լրացը, են 55 տարեկան հասակի:

հանջած չափից պակաս *) է, այն ժամանակ նրան մի տարի ժամանակ է տրւում կազդուրուելու համար (յօդ. 47). եթէ հետեւել տարին նոյն պակասութիւնն ունենայ, դարձեալ մի տարի ժամանակամիջոց կտրուի, իսկ եթէ երրորդ տարին էլ նոյնը նկատուի, այն ժամանակ նա բոլորովին կազմատուի:

Եթաձգումներ (օտքաշի): եթէ զինուրացուն իր անունով գործ ունի կամ սովորում է, այն ժամանակ կարող է ժամանակ խընդրել՝ գործերը կարգի բերելու կամ ուսումը վերջացնելու համար: Առաջին գէպրում նրան ամենաշատը ժամանակամիջոց կտրուի 2 տարի, իսկ երկրորդ գէպրում ծառայութիւնը կը յետաձգուի (յօդ. 61)՝ մինչև 22 տարեկան հասակը շըրդ կարգի զպրոցներում սովորողներին, բ) մինչև 24 տարեկան հասակը հոգեկը սեմենարիսներում . . . և երկրագրական զպրոցներում սովորողներին, գ) մինչև 27 տարեկան հասակը բարձրագոյն զպրոցներում սովորողներին և այն անձանց, որոնք թէկ ուսումը վերջացրել են, բայց պատրաստում են ուսուցչութեան համար և դ) մինչև 28 տարեկան հասակը՝ հոգեկը ճեմարաններում սովորողներին և այն անձանց, որոնք պատրաստում են պրօֆեսորական պաշտօնի համար:

*) Երեմին զինուրագրական վարչութիւնը կարող է ուսակութիւն դրանել կերծի չին պակասի վրա, եթէ զինուրացուն բոլորովին առողջակամ է: Սական այլ դեպքում պակասը ամենաշատը կէս վերօնից աւել չպիտի լինի:

Քօդոյ: Քաղաքային կամ զաւառական ցինուրագրական վարչութեան» մի որ և է վճռից կամ կարգավորութիւնից գդգոն եղողը կարող է բողոք ուղարկել «նահանգական զինուրագրութեան վարչութիւնը»—վճիռը կայանալուց յետոյ, չորս շաբաթուայ ընթացքում (յօդ. 228). բողոքը պէտք է ուղարկել անպատճառ այն «զինուրագրական վարչութեան» միջոցով, որի գէմ ուղղուած է նա: Հակառակ զէպրում բողոքը անհետեանք կմնայ: Քաղաքային կամ զաւառական «զինուրագրական վարչութիւնը» այդ բողոքը ստանալուն պէս 7 օրուայ ընթացքում պիտի ուղարկէ ըստ պատկանելոյն իր բացատրութեան հետ միասին (յօդ. 229), Զինուրութեան վերաբերեալ բոլոր ինպիրներն ու բողոքները ազատ են զրոշմատուրքից, այսինքն առանց մարկայի:

Կամաւոր զինուր (Յոլիօօպրեձլայօնիայ): Որոշ կրթութիւն ունեցող երիտասարդները կարող են կամաւոր զինուր զառնար: Այդ գէպրում նորա կծառայեն 1 տարի, եթէ աւարել են բարձրագոյն կամ միջնակարգ զպրոց, (գիմնազիայի և բէալականի 6-րդ դաս, ոչ պակաս) և 2 տարի, եթէ համապատասխան ծրագրով սահմանած քննութիւնն են բանել:

Կամաւոր զինուր զառնարու համար պէտք է խնդիր տալ ամենաշը վիճակահանութեան օրից 2 ամիս առաջ:

Ահա մի աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ որքան պիտի լինի կրծքի վանդակի շրջապատը զանազան հաստիների համեմատ (յօդ. 46, յաւելուած VII).

Հաստիք	Կրծքի վանդակը	Մրջ. վերջուկ.	Մրջ. վերջուկ.
2	$2^4/8$...	1 $1^{14}/8$
2	$2^6/8$...	1 $1^{5}/8$
2	3	...	1 $1^{6}/8$
2	$3^2/8$...	1 $1^{7}/8$
2	$3^4/8$...	1 2
2	$3^5/8$...	1 $2^{1}/16$
2	$3^6/8$...	1 $2^{1}/8$
2	$3^7/8$...	1 $2^{1}/8$ և $1/16$
2	4	...	1 $2^{2}/8$
2	$4^1/8$...	1 $2^{2}/8$ և $1/16$
2	$4^2/8$...	1 $2^{3}/8$
2	$4^3/8$...	1 $2^{3}/8$ և $1/16$
2	$4^4/8$...	1 $2^{4}/8$
2	$4^5/8$...	1 $2^{4}/8$ և $1/16$
2	$4^6/8$...	1 $2^{5}/8$
2	$4^7/8$...	1 $2^{5}/8$ և $1/16$
2	5	...	1 $2^{6}/8$
2	6	...	1 $3^{2}/8$



ԲԺՇԿԻ ԿՈՉԵՐ ՄՆԱՊԱՇՏԱՐԴԿԱՆՑ*)

Ի՞նչեր չի անում սնապաշտութիւնը. Բնչ փորձանքներ ասես, որ առաջ չեն զալիս մարդկային մաքի մոլորութիւնից: «Սնապաշտութիւնը, իրաւացի կերպով ասում է մի գիտնական, սաւանի նման ծածկում է մարդու աչքերը և թոյլ չի տալիս տեսնելու իսկական իրողութիւնը...»: Սակայն մեր լուսաւոր դարում խելահաս մարդիկ արգեն ամեն կերպ աշխատում են ոչնչացնել այդ սաւանը, հեռացնել տգիտութեան այդ թանձր քողը:

Դեռ շատ հին ժամանակներից սկսած սնապաշտ մարդիկ կարծում են, թէ աշխարհում գոյութիւն ունին շշար դեեր», որոնք աշխատում են ամեն տեսակ չարիքներ հացնել մարդկանց՝ հիւանդացնել, դժբաղդացնել, եւ մարդկային զարգացման մակերեսոյթի համեմատ միջոցներ են մշակում այդ թշնամուն դուրս արտաքսելու համար: Սկզբում նա պատկերանում էր մարդանման յատկութիւններով, իսկ վերջին ժամանակներում—աւելի վերացական ձևով՝ իրք եղեա, «սատանայ»,

*). Մանուկի մասին աւելի մասնաւուն գրուած է ք. Ա. Բաղդուդեանի «Սնապաշտութիւն և կախարդութիւն» գրքին, որից և խորածօրուն, նեղինակի խերագրաւթեամբ, առաջ է ընդուած ներկայ գրուածք:

«մոլորեցնող», իբրև մի որևէ յանցանք կամ հիւանդութիւն:

Սկզբում փորձում են հւոացնել չար ոգին հիւանդի մարմնից ծիծալով, զանգակի ձայնով կամ բզաւոցով: Այսպէս օրինակ. Կալիֆօրնիայում չար ոգուն վախեցնել են աշխատում զանազան շարժումներով, ծամածոռութիւններով, հիւանդի վրա հաշելով և այլն: Ամերիկայի վայրենիները նոյն նպատակի համար տրաքեցնում են մի բան, հրացան են արձակում, թմբակահարում են և այլն և այլն: Կիրզիվները բզաւում են հիւանդի վրա, ծեծում են մորակով, կծոտում են նրան, թքում են երեսին, նրա առաջ զանակ են շարժում և այլն:

Ռուսաստանի շատ տեղերում էլ «հերիմները» երկու բուռնցորով պինդ սեղմում են հիւանդի փորը, որպէսզի չար ոգին գուրս զայ:

Ծառայութիւնից ազատուած զիւղական մի զինւոր տենդ ունեցող հիւանդներին բժշկելու համար մի ամբողջ ժամ անզագար փողոցային հայնոյանքներ էր թափում...

Եթէ չար ոգին արգէն բուն է զբել մարդու մէջ և վախեցնելը նրա վրա չէ ազգում, այն ժամանակ աշխատում են զանազան միջոցներով «թունաւորել նրա զոյսութիւնը», զզուեցնել նրան իր բնակավայրից: Նրան «ծուխ են տալիս», հիւրասիրում են զզուելի նիւթերով և այլն:

Խուլ զիւղերից մէկում ազրում էր մի

պառաւ հերիմ, որը գեղձախտաւոր երեխաներին կերակրում էր բաղի ձուի գեղնուցից և հաւի աղբից բաղկացած խառնուրդով: Հիւանդներին ծուխ տալու համար զործ էին ածում ոչխարի աղի և ուրիշ նիւթեր, որոնք ծանր-կծու ծուխ, էին առաջացնում:

Զափազանցութիւն չէ դա, այլ գառն իրականութիւն, որին ականատես եմ եղել անձամբ, երբ զեռ զիմնալիստ ժամանակս որսի էի զնացել և հանգստանալու համար զիւղմանը:

Այդպիսով տգետ ժողովրդի մէջ արմատացած է այն կարծիքը, թէ շատ ու շատ հիւանդութիւններ առաջ են գալիս չար ոգու աղքեցութիւնից: Եթէ մի որևէ դեղ կամ միջոց թժշկում է այդ հիւանդութիւնը, նրանք այդ զեղին ու միջոցին էլ զերբնական զօրութիւն են վերագրում:

Օրինակ. շատ բոյսեր բուժիչ աղքեցութիւն ունին և զարնական մի երեսոթ է, բայց սնապաշտ ժողովուրզը այդ աղքեցութիւնը զերբնական է համարում և ոգիներին վերագրում:

Հասարակ մարդիկ կարծում են, թէ բույր զեղերը զերբնական ոյժ, մի ինչ որ խորհրդաւոր աղքեցութիւն ունին: Նրանց կարծիքով հիւանդը որոշ զեղ ընդունելու յետոյ խոյոյն պէտք է առողջանայ, որովհետեւ չար ոգին անհարով է իր համար անտանելի մըթնոլորտում մնալ. նա հիւանդանում է:

Հէնց այդ պատճառով էլ զեղը որքան

զգուելի է, նոյնքան ուժեղ է լինումնը աղ-
դեցութիւնը. այդպէս է համոզուած տգէտ
ժողովուրդը:

Թերթերունքների բորբոքում ունեցող մի
հիւանդ կին պատում է, թէ մի անգամ մորի
է կերել և խսկոյն թարախ է հոսել ականջից:
Այդ հիւանդին նման տգետները հաւասարել
են նրան, թէ գեղձախար չէ սիրել մորին և
այդ պատճառով էլ թարախ է հոսել:

Բայց միայն մեզանում չէ, որ զոյութիւն
ունի մնալաշառութիւն: Ուրիշ երկիրներ էլ
աղատ չեն նրա աղդեցութիւնից:

Թերմանիալի խուլ անկիմներում շատ
անգամ կտրում են հիւանդի մազերն ու ե-
զունզները և մի առանձին կապոց շինելով՝ զը-
ցում են փողոցի մէջ տեղ: Ով որ վերցեց
կապոցը, նա էլ հիւանդանայ:

Ռուսաստանում և առնասարակ մեր ժո-
ղովրդի մէջ այդ միենոյն միջոցը զործածում
է զօրտնուկի վերաբերմամբ: Թելի վրա զոր-
տնուկի թուի համեմատ հանգոյցներ են ա-
նում և փողոցի մէջ տեղ զցում: ով որ վեր-
ցրեց թելը, նրան էլ կանցնի զօրտնուկը:

Ցան ունեցող հիւանդութիւնների ժամա-
նակ՝ մի փալասով սրբում են հիւանդի կաշու
վրայի ցանը—(նրան սարսափելի է)—և փա-
լասը դուրս են զցում, ենթալլելով, թէ ով
որ վերցնէ փալասը, նրան էլ կփոխուի հի-
ւանդութիւնը:

Կախարդութեան պատմութիւնը ուսում-
նասիրող բոլոր հեղինակները իշշատակում են

թալիսմանների և խորհրդաւոր խօսքերով
մարդկանց հմայելու մասին, որոնցով շատերը
դառնում են անդպայ գէպի տանջանքները:

Թրանք նոյն խսկ ամենասարսափելի տան-
ջանքների ժամանակ պահովանում են կատա-
րեալ հանգստութիւն և ոչ մի շարժումով, ոչ
մի նշանով չեն արտայայտում, թէ ցաւ են
զգում:

Այժմ գիտնական փորձերի շնորհիւ կա-
կարելի է այդ երեսով ճիշտ կերպով բացա-
տրել եւ խսկապէս, ներկայումս նոյն տեսակ
փորձեր կարելի է կատարել հիպնոտիսմի մի-
ջոցով:

Եթէ թալիսման ունեցող մի քանի մար-
դիկ բոլորովին չեն զգացել տանջանքներ, այդ
նրանից է, որ նրանք խսկապէս համոզուած
են եղել թէ իրանց մօտի թալիսմանը զեր-
բնական զօրութիւն ունի և այդ համոզմունքը
նրանց անզգայ է դարձրել:

Հիպնոսի ազգեցութեան շնորհիւ կարելի
է առաջացնել զգացողութեան որոշ փոփոխու-
թիւններ: Օրինակ վիրաբոյժ բժիշկը ասում
է հիւանդին, «Զեր ձեռքը կաթուածահար է
եղել» և դրանից յետոյ, առանց տանջանքներ
պատճուելու, սկսում է ծակծկել հիւանդի ձեռ-
քը, զժուարին օպերացիաներ կատարել:

Այդ միենոյն ձեռք կարելի է ներշնչել,
որ հիւանդը խինինը քաղցր շաքարի տեղ ըն-
դունէ, հասարակ չուրը—դառը օդիկ կամ
մեկօրի փոխարէն և այլն:

Վերջապէս հիպնոսի միջոցով կարելի է

այնպէս անելո, որ հիւանդը չտեսնի իր աշքի առաջ գտնուուած առարկան կամ ընդհակառակը, տեսնի նրա միւս կողմի առարկաները:

Հիւանսուելու ձեւերը բաւական նման են այն ձեւերին, որ գործ են ածւում կախարդանքի ժամանակ:

Բացի զբանից նեարդային ու հոգեկան հիւանդութիւններն էլ միշտ մեծ գեր են բաղցել նախապաշարմունքների հարցում:

Հնագոյն պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ երեսինքները ամեն տեղ համարուել են մի գերբնական ոյժի՝ գեւերի ու սատանաների ազգեցութեան հետևանք:

Հին ձեռագիրների մէջ, որտեղ որ պատհում է յիշտատկութիւն սատանայի ազգեցութիւնից առաջացած զլիի կամ ճակատի հիւանդութեան մասին—այդ բոլորը պէտք է վերագրել մեծ մասամբ հոգեկան հիւանդութեան:

Եւ առհասարակ, երբ մեր շուրջը մի արտակարդ գէպք, մի անհասկանայի երկոյթ է տեղի ունենում, միշտ էլ պէտք է զիմենք զիտութեան օգնութեանը, պէտք է բացատրութիւնը զարգացած մարդկանցից հարցնենք և ոչ խարերայ «Փալճիներից» ու տղէտ «հեքիմերից»:

Առհասարակ պէտք է անպայման հաւատալ, որ զիտութիւնը առաջ է ասանում մարդկանց ուղիղ ճանապարհով, որ զիտութեան իւրաքանչիւր քայլը ոչչացնում է մոլորութեան «մի հրէշ» և «մարգում»:

Ուրեմն ժողովրդի բոլոր խաւերի համար անհրաժեշտ են զիտութեան զինորներ:

Այժմ զիւղերում պէտք է զործեն քահանաները, ուսուցիչները և բժիշկները, բոլորն էլ զիտութեան լուսով զինուած:

Դրանց կամ զբանց նման կրթուած մարդկանց խորհրդին պէտք է զիմել կեանքի ծանր ըստիներում, մի որ և է փորձանքի կամ զբժուարութեան ժամանակ, որովհետեւ զրանք շատ բան են կարգացել, շատ բան սովորել...

Միայն զբանք կարող են իսկապէս փըրկարար ու առողջարար խորհուրդներ տալ առանց խարելու. կամ վախեցնելու:

Իսկ հմայքի և կախարդութեան բոլոր միջոցները, որ գործազրում են «հեքիմներն» ու «Փալճիները», ջրով, եղունգներով, մազերով կամ մի այլ բանով «թլիմամ անելը, ճնովքը ի կամ չարի գէմ» զիր անելը, «թլիմներով» հիւանդութիւն բժշկելը—այդ բոլորը խարերայութիւն է: Դրանց հաւատալ կարող են միայն տգէտ մարդիկ:

Իսկ հասկացող մարդիկ, կրթուած, ուսում առած մարդիկ երբէք չեն հաւատում այլպիսի յիմար բաների, այլ աշխատում են եկեղեցական քարոզներով, զպրոցական դասերով, խորհրդներով ու գրքերով, թիրթերով ու ամսագիրներով ազգել ժողովրդի քրա և հասկացնել որ անխելքութիւն է կախարդութիւնից, զիւղից ու սատանաներից զախենալը եւ եթէ զիւղերում ու քաղաքներում զարգանայ զիտութիւնը, զպրոցներ ու թատրոններ բա-

ցուին, գոնէ շարժական զբաղարաններ հիմունին և կարգացած ու կրթուած մարդիկ առաջ գան, այն ժամանակ տվառութեան և խաւարի ոյժը կոչչանայ զիտութեան լոյսի առաջ:

Միշտ զիտութեան դէնքը պահէք ձեր ձեռքում: Միշտ զիտութեան ջահը թող լուսաւորէ ձեր կեանքի ճանապարհը, որպէս զի չքնկնէք նախապաշարմունքի ու սնապաշտութեան կորստարեր անդունզը:

ԲԺ. Ա. Բուդուղեան



Բ Ժ Շ Կ Ա Ր Ա Ն

Այս կամ այն հիւանդութեան առաջն առնելու ամենալաւ միջոցն է զիմել բժշկի խորհրդագին, խոզել նրա օգնութիւնը, որովհետեւ միայն նա կարող է ճշտութեամբ որոշել հիւանդութիւնը և գոնել նրա զարմանը: Իսկ եթէ մի որեւ է պատճառով զա աննարին է, այն ժամանակ մի քանի գէպերում կարելի է օգտուել հետեւալ խորհուրդներից:

1. **Այրածք:** Եթէ այրած տեղը միայն կարմրել է, գովացնել անմիջապէս սառուցով կամ սարը ջրով և յետոյ վրան զնել քերած զեանախնձոր: Եթէ վերքեր են զոյացել քսել ձէթ, իւզ, կրի ջուր ձէթի հետ հաւասար չափով խառնած և յետոյ բամբակով փաթթաթել: Երբ այրուածքը ձեռքի կամ ոտի վրա է լինում, լաւ է վիրաւորուած անդամը բարձր պահել, որ արիւնը այրած տեղից հեռանայ:

2. **Սղիմի** հիւանդութիւնները մեծ ժամամբ լուծողութեամբ են արտայարաւում, ներարգելը թուլանում են, հիւանդը գունատում ու լզարում է, անդագար ծարաւ է ըզգում, ախորժակը կորցնում է և այլն:

Պատճառները բազմաթիւ են, որոնցից անկանոն սնունդը և մրսելը ամենից յանախ են պատահում:

ԽԱՅԱՄ: Բացի գեղերից, որոնք կարելի է միայն բժշկի միջոցով ձեռք բերել, մնացած բժշկականութիւնը նոյնն է, ինչ որ ստամորպ-սի հիւանդութիւնների ժամանակի Փորը յաւ է տաք պահել և առնասարակ զգուշանալ ցրտից:

3. Աշխացաւ: Նորածին երեխաները ծնուկելուց 1—2 օր յետոյ յաճախ աշքացաւ են ստամում, վարակուելով մօրից, զայեկից կամ մէկ ուրիշից: Աշքերը կարմըսում են, կո-պերը ուռչում և թարախով լցում են: Այդ հիւանդութիւնը վարակիչ է և մեծերին էլ կարող է վարակել, եթէ նրանք կեղտում ձեռ-քերով իրանց աշքերը տրորեն:

Հիւանդութիւնը չափազանց վասնգաւոր է և նրանից շատերը կուրանում են, եթէ կա-նոնաւոր կերպով չեն բժշկում:

ԽԱՅԱՄ: Մինչև բժշկի զալը հարկաւոր է աշքերը աղի ջրով կամ ջրախառն բորայի թթւուտով—նօրհան եւուլուտա—(1 թէյի գդալ՝ Ջրի մեծ բաժակին) լուանալ և այնպէս ջուրն ածել, որ աշքի մէջը մտնի և բոլոր թարախը միջից հանէ: Լուանալ հարկաւոր է շատ յա-ճախ, ժամը 1 անգամ: Եթէ աշքերից միայն մէկն է ցաւում, աշխատել, որ լուանալին ջուրը միւս աշքի մէջ չմտնի, եթէ ոչ առողջ աշքն էլ հիւանդանայ: Ուստի լուանալին զլուխը կախել այնպէս, որ հիւանդ աշքը ներ-քե մինի, իսկ առողջը—վերե:

4. Արիւնիութիւն: Փորը վէրքերից հոսող արիւնը դադարեցնելու համար հարկա-

ւոր է նախ և առաջ վէրքը մաքուր ջրով լուա-նալ և յետոյ բամբակով կամ մաքուր ջրի կտորով պինդ սեղմել և պահել այդպէս մի քանի բոռէ, մինչև որ արիւնը զաղացի՛ երբ արիւնահոսութիւնը բուրովին կանգնում է, հարկաւոր է վէրքը կապով փաթաթի՛:

Մէծ վէրքերից հոսող արիւնը միայն բը-ժիշկ կարող է կանգնեցնել, սակայն մինչև նրա զալը անհրաժեշտ է գոնէ թուլացնել ա-րեան կորուստը, հուպա տալով վէրքի վրա բամ-բակի կտորներով: Երբ արիւնը չափազանց առաստ է հոսում և բարձր ցայտում, անհրա-ժեշտ է վիրաւորուած անդամը կապերով պինդ սեղմել բայց անպատճառ վէրքից բարձր:

5. Քկացաւ: Հիւանդը կուլ տալիս ցաւ է զգում, ձայնը թանձրանում է, երբեմն ջերմ է լինում, իսկ ականջի առջևի խուլերը ուռչում են: Բերանը հնատագոտեիլս երկում են կարմը-բացած և ուռած թիմբը, նշնիկները, կատիկը և բմանը, տեղ-տեղ երկում են սպիտակ թա-ղանթներ: Լիզուն ուռչում է և սպիտակով ծածկում: Հասարակ բկացաւը երբեմն կարե-լի է շփոթել զիփտերիտի հետ, ուստի իսոհե-մութիւնը պահանջում է զիմել բժշկի խոր-հրդին, որպէսզի յետոյ ցաւալի թիւրիմա-ցութիւն չպատահի:

Հիւանդութեան պատճառը զիփտարապէս մրսեն է, բայց և ուրիշ հիւանդութիւններն ել են բկացաւ պատճառում, օր. քութէշը, ծաղիկը և այլն:

ԽԱՅԱՄ: Անկողին պատկել վիզը կապով

փաթաթել կոկորդը ողողել աղաջրով, բորա-
կամ կամ բերսուեաի թթւուտով (1 թէյի գդալ
մնձ բաժակ ջրի համար). ջերմի դէմ քինս
ընդունել (1—2 անգամ օրական), փորկապու-
թեան դէմ լուծողականներ, երբեմն լաւ է
ներզործում և քրտնելլ:

6. **Գիֆտերիթ-վարակիչ թկացաւ:** Հի-
ւանդը կուլ տալու ժամանակ ցաւ է զգում:
Դիտեք ցաւում է և ջերմ է լինում, բուկը
ուռչում և կարմրում է և սպիտակաւոճն փա-
ռով ծածկում. այդ փառը երբեմն պոկ է զա-
լիս և նրա տակը վերեք են բացւում: Հիւան-
դութինը տարածում է նոյնալիք քթի, ա-
կանջների և կոկորդի մէջ: Շնչառութինը
սկսում է գտնարանալ, և հիւանդը կարող է
մինչև անդամ բոլորովին խեղդուել օդի պա-
կառութիւնից: Դիֆտերիթ վտանգաւոր է
նոյնալիք սրտի համար. սրտի թուլութիւն
է առաջացնում, որից հիւանդը կարող է յան-
կարծամահ լինել:

Խնամիք.—Բժշկուելու գլխաւոր միջոցն է
հակաղիթակերիտական սրսկումը: Սրսկումը
միայն բժշկի ձեռքով կարելի է անել և որքան
շուտ, այնքան լաւ, որովհետեւ նրա աղքեցու-
թիւնը թուլանում է, եթէ հիւանդութեան
սկզբից չէ արուած: Անհրաժեշտ է նոյնալիք
քթի և բերանի մաքրութեան վրա հսկել (տես
քութէշ):

Մնունդը պիտի լինի թեթէ ջրալի կերա-
կուրներ, բուլիօն: Սրտի թուլութեան դէմ—
դդալով դինի:

Առողջները պիտի հեռացած լինին հիւան-
դից, որ չըվարակուեն: Երբ հիւանդութիւնը
վերջանայ, հիւանդի սենեակը և շորերը լաւ
մաքրել (տես «Ծաղիկ»):

7. **Թունաւորութիւններ:**—Թոյները լի-
նում են զանազան տեսակի, քիմիական կամ
բուսական: Կան թոյներ, որոնք ընդունելին
այրում են, այն օրգանները, որոնց միջով ան-
ցնում են (բերանը, ստամքոր և այլն)
և դրանով մարդուն մահացնում: Միւս թոյ-
ները միայն մէջ մտնելով են ներզործում,
ազդելով սրտի, ուղեղի և այլ օրգանների
վրա:

Խնամիք: Զանազան թոյների դէմ միջոց-
ներն էլ տարրեր են, այնպէս որ բոլորի հա-
մար անկարելի է խորհուրդ տալ. սակայն
իրք ընդհանուր կանոն նարկաւոր է ի մա-
սար, որ պէտք է աշխատել որքան կարելի է
շուտ կամ գուրս հանել, կամ թուլացնել ըն-
դունած թոյնը.

Թունաւորութիւն նախ և առաջ խնացնել
տաք(եթէ չկայ—սառը) ջուր և ապա հաւի
փետուրով կոկորդը խստեցնել, որպէսզի փրս-
խանք առաջանայ: Եթէ հիւանդը արգէն ու-
շագնաց է, շիել ամբողջ մաքրնը ձեռքերով
և երենին սառը ջուր սրոկել: Այրուած
օրգանների ցաւը մեղմացնելու համար ընդու-
նել տալ սառը խմիչքներ, սառոցցի մանր
կտորներ, ձուի պախտակոց ջրի մէջ հարած
(6—10 ձու մի շիշ ջրի համար): Ինչպէս վե-
րեկում ասացինք, թոյնի տեսակից է կախուած

բժշկութեան միջոցը: Այսպէս օրինակ:

—Մկան գեղով թունաւորուածին պէտք է տալ կաթ և ջրի մէջ հարած ձուի սպիտակուց:

—Ֆոսֆորով (լուցկիներից) թունաւորուածին արգելուած է կաթ և իւղալի խմիչքները: Խմացնել սկիսիտար (10—12 կաթի) ջրի մէջ խացնած:

Օպիտուով (խաշխաշ) թունաւորուածին սկ սուրճ (զայֆէ) խմացնել:

—Թունաւոր սունկերով թունաւորուածը պէտք է զգուշանայ քացախից:

—Կարրուպայով թունաւորուածին խմացնել մանրացրած կատիճ ջրի հետ, կաթ, ձուի սպիտակուց ջրախտան:

8. Թօսկով (չուանով)խեղուածին ազատել որքան կարելի է շուար կապից, զգեստներն արձակել և շնչառութիւնը զրգուել ինչպէս վերևն է ասած:

9. Խեղուած: — Ջրի մէջ խեղուած մարգուն ջրից հանելուց յետոյ, զգեստները հանել, որպէսզի նրան ոչինչ չձնչէ. բերանը տիղմից և քարից մաքրել (մատով) և բաց պահել, ապա սկսել շնչառութիւնը զրգուել. դրա համար նախ և առաջ զնում են մէջքի տակ մի բարձ, շորի փաթեթ կամ փայտի կտոր, որպէսզի կուրծքը փքուի և զլուխը յետ ընկնի, ապա վերցնում են խեղուածի ձեռքերը, մէկը զլիք յետեն են քաշում (որ կուրծքը լարնանայ և օդը մէջը մտնի), մէկը փորի վրա են ճնշում (որ օդը դուրս գնայ կուրծքից), այդպէս շարունակում են առանց շտա-

պելու, նոյն արագութեամբ, ինչպէս որ մարդը սովորաբար չնշում է և մինչև այն ժամանակ, երբ խեղուածը կըսկսէ կանոնաւոր կերպով և ինքնարերան շնչել. Գրա համար հարկաւոր է լինում երեւմն շատ երկար աշխատել, մի ժամ և աւել, սակայն երբեք չպէտք է յուսահատուել. եթէ խեղուածը կեանքի մի որեւէ նշոյլ է ցոյց տալիս, այն ժամանակ կարելի է նրան ուշքի բերել: Երբ եւեղբարածը ուշքի եկաւ, հարկաւոր է նրան փսիսցնել կուլ տուած ջուրը և յետոյ գինի, կամ թէյ, օդի խմացնել և առաք անկողնոսմ պառկեցնել:

10. Ծաղիկը վարակիչ հիւանդութիւն է. նա երկու ձեւ ունի—ծանր և թեթև, սկսում է սաստիկ չերմայ, փսխանքով, մէջքի և զիխացաւով. 2-րդ, 3-րդ օրը երեսը և ամբողջ մարմինը ծածկում է բշտիկներով (պալարներով), 7-րդ, 8-րդ օրը բշտիկները լցում են թարախով կամ արինով (ամենափանգտառը ձևը). 10—13-րդ օրի բշտիկները սկսում են չորանալ, իսկ 5—6 շաբաթը նրանք թափում են, չեչեր թողնելով իրանց տեղը (վարակուելու ամենավտանգաւոր ժամանակը):

Խենան: Ծաղիկի զէմ ամենալու միջոցը պատռաստումն է. ծաղիկց ազատ մնալու համար հարկաւոր է կրկնել պատռաստումը ամեն 7—8 տարին մի անգամ: Պատռաստած երեխաները կամ ամենսկին չեն հիւանդանում, կամ հիւանդանում են շատ թեթև կերպով, ուստի նէնց որ մի տեղ ծաղիկ է յայտնւում, անմիջապէս հարկաւոր է առողջներին հիւան-

դից բաժանել և բոլորի ծաղիկը պատռաստել: Հիւանդին անկողինը գնել զիւացաւի դէմ սառուց զնել ճակատին, փսխանքի դէմ—սառուցի մանր կտորներ կուլ տալ: Զերմի ժամանակ չպիտի քորել և պոկել, մարմինը և երեսը լաւ է ձեթով կամ իւղով (վազելինով) ծածկել:

Երբ մարմինը սկսում է թէփոտուել, հիւանդին պէտք է տաք վաննա նստացնել և կրկնել այդ մի քանի անգամ: Երբ թէփոտումը բոլորովին վերջացած է, այն ժամանակ միայն կարելի է հիւանդին առնից գուրս բերել և առողջների մօտ տանել: Հիւանդի բոլոր շորերը անհրաժեշտ է տաք ջրի և սապօնի մէջ լաւ եփ տալ, որպէսզի հիւանդութիւնը ուրիշներին չփոխուի. սենեակն էլ պէտք է լաւ մաքրել և երկար ժամանակ պատռահնենքը բաց պահել:

11. **Կարմրութիր վարակիչ հիւանդութիւն** է և գրեթէ անխուսափելի է երեխայական հասկում: Հիւանդութեան նշաններն են՝ հազ հարփուա, բկացաւ, աշքացաւ, ջերմ. 3-րդ կամ 4-րդ օրը կաշին գուրս է տալիս բծեր և մի քանի օր այդպէս մնում: Վերջը բծերը անհետանում են, իսկ կաշին սկսում է թէփոտուել:

Խնամք: Հիւանդին հէնց սկզբից անկողնում պառկեցնել և մըսերուց պահպանել, լուսամուտի փեղքերը կիսափակ անել, որովհետեւ լոյսը ցաւեցնում է աշքերը. հազի դէմ տաք կաթ խմացնել զելտերի ջրի հետ խառնած: Կերակուրը պիտի լինի թեթե՛ թերխաշ ձու,

կաթ, ոպիտակ հաց, շորփայ. ծարաւը յագեցնելու համար—լիմոնով և շաքարով չուր կամ լիմոնադ և այլն:

Եթէ հիւանդը շուտ չի առողջանում—դիմել բժիշկի օգնութեանը:

12. **Խիւրգի բօրբախումն:** Հիւանդը հազում է, ձայնը խսորու է գառնում կամ բոլորովին կորչում. կոկորդի մէջ խաղուում է. ընդհանուր առողջութիւնը քիչ է տուժում:

Հիւանդութիւնը առաջ է գալիս երկար խօսելուց կամ երգելուց, մանաւանդ բացօդիւցներ ընդունել (կաթ զելտերի ջրով), վիզը փաթաթել կապով, շնչել աղաջրի գուրշաւ:

Խնամք: Խստել տանը (երեխաներին անկողնում պահել), քիչ խօսել, չծիսել, տաք խմիչքներ ընդունել (կաթ զելտերի ջրով), վիզը փաթաթել կապով, շնչել աղաջրի գուրշաւ:

Երբեմն պատահում է, մանաւանդ գիշեր ժամանակ, որ երեխաները յանկարծակի հիւանդում են կոկորդի սուր բորբոքումով. սկսում է խստ հազ, շնչառութիւնը ճնշուած է գառնում, երեխան օդի պակասութիւն է զգում, կարծես խեղդուել:

Այսպիսի յանկարծակի գէպքերում (որոնք միշտ լաւ են կերցնուում), հարկաւոր է երեխային տաք գուրբշի շնչել տալ սամավարից), ոսները տաք ջրի մէջ պահել կամ մանաների սպեզանի զնել սրունքների վրա: Հիւանդութիւնը տեսում է մօտ $\frac{1}{2}$ ժամ, երեխան հան-

գստանում, քնում է և միւս առաւօտ բոլորովին առողջ ու զուարթ վեր կենում:

13. **Կովկասի մանկական հասակի հիւանդանութիւն** է. վարակիչ է, առում է սովորաբար 4—5 շաբաթ և մի անգամ լինելուց յետոյ այլ ևս չի կրնում: Հիւանդութեան սկզբում շնչը է լինում, որը 38°—38,5° վեր չի բարձրանում: Հիւանդութիւնը բնորոշում է ցընցաղական հազով, որ սկսում է բանկումի ձեռվ, իսկ վերջանալուց յետոյ երեխայի բերանից լրճիւն է գալիս և յաճախի էլ փսխում է պատահում: Հազի ժամանակ սուլիչ և վայնասունի նման ձայներ են լինում: Այսպիսի բանկումներ կրնում են օրը մօտ 15—30 անգամ, որոնցից յետոյ իւրաքանչիւր անգամ մի առժամանակ զարդ է լինում: Սյյդ ամենանպաստաւոր միջոցն է երեխային կերակրելու համար, այլապէս բանկումից առաջ կերածը ետ է արուում փսխումով:

Խնամք: Յատուկ բժշկութիւն չկայ, առողջներին հարկաւոր է նեռացնել հիւանդներց: Ներմը վերջանալուց յետոյ շատ օգտակար է երեխաներին զուրաը պահել մաքուր օդ շնչելու: Լաւ է ներգործում քինան, որ հարկաւոր է օրը 2—4 անգամ փոքրիկ քանակութեամբ խմացնել: Երեխայի բերանը ամեն անգամ հազից յետոյ պէտք է մաքրել լրճիւնից:

14. **Հարբուխ:** Անուանուում բթախորշի լորձամաշկի բորբոքումը, որ առաջ է զալիս թէ մրսելուց և թէ ուրիշ պատճառներից, որ. փոշոց, ծխախոտ քիթը քաշելուց, պատակար

զաղերից, զանագան հիւանդութիւններից, ինչպէս կարմրուկը, ինֆլուենցան, սեֆիլիս և այլն: Հարբուխի նշանները ամենքին յայտնի են:

Խնամք: Հարբուխի գէմ տնային միջոցներով կոռուկու համար կարելի է միայն խորհուրդ տալ՝ եթէ հիւանդը մըսած է, տաք գոլորշի շնչել քինա ընդունել և տաք հագնուել իսկ այն ջրերից և գեղերից, որ շատերը հարբուխի ժամանակ քթով ներս են քաշում բժշկուելու համար, մենք խստի նախազգուշացնում ենք, որինքնեւ բազմաթիւ են գեղքերը, երբ քթով ջուր քաշելուց ըորը բուելիս է եղել ականջի մէջը և լրջութեան համար շատ վտանգաւոր հիւանդութիւն է առաջ եկիլ: Ուսարի յամառ գէպքերում, երբ կերկար ժամանակ չի անցնում, անհարաժեշտ է բժշկին դիմել որ և կոտվորցնի, թէ ի՞նչ անել հիւանդութեան դէմ:

Ուրիշ պատճառներից առաջ եկած հարբուխը անցնում է, երբ սկզբնապատճառը հեռացնում է և հիւանդը փոխում է իւր կենցաղը:

15. **Դաւազած** մարդուն անմիջապէս պակեցնել զգեստը գոտին, օձիքը և այլն արձակել երեխին սառը ջուր սրսկել, երեսն ու մարմինը ձեռքերով շփել: Ուշքի զալուց յետոյ չպիտի յանկարծ վեր կենաւ այլ մի փոքր պանկած մասի, լաւ է մի քիչ զինի, օդի, թէյ կամ սուրճ խմացնել:

16. **Սառած մարդուն** չըրեկ տաք սենեկակը, այլ նով տեղում, նախասենհակում

դնել (ճանապարհին աշխատել մարմինը չծաւ-
լել, այլ ձիգ պահել): Ծորերը հանելուց յևսոյ,
սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով արորել, եթ
մարմինը կտաքանայ և անդամները կփափկեն,
այն ժամանակ հարկաւոր է նրան մի տաք տեղ
պառկեցնել և գինի, օղի կամ տաք թէյ խը-
մացնել:

Սառած մատը կամ ոտը նոյնպէս պէտք
է նախ և առաջ սառը ջրի մէջ պահել կամ
ձիւնով արորել և ապա կամաց կամաց տա-
քացնել. բորբոքուած մասերին քսիլ ձէթ կամ
սաղի ճարպ:

17. **Ասամակի կատարը** (բորբոքումը)
շատ տարածուած ցաւ է, նրա պատճառը
զիմանը անկանոն կենցաղն է: Հիւան-
դութիւնը արտայատում է նրանով, որ ստա-
մորում ծանրութիւն և ցաւ է զգացում: Փորը
ուռչում է, հիւանդը կորցնում է ախոր-
ժակը և զգուանք է զում դէպի կերակուր-
ները. յաճախ զկրտում է, երբեմն փսխում.
փորը լուծում է, բայց աւելի յաճախ կազ է
լինում:

Խնամք: Բժշկուել կարելի է կանոնաւոր
կհնցաղով: Ուտելու ժամանակ պիտի դեկա-
վարուել որոշ կանոններով: Վնասակար է
շատ ուտելը, լաւ է օրական 2 անգամ թիթե
և 2 անգամ կուշտ ուտել. ուտելիս կերակու-
րը լաւ ծամել:

Վնասակար են՝ իւղալի, թթու, կծու, աղի
կերակուրները, մեծ քանակութեամբ խմորե-
ղէնը ու կարտօֆիլը, ալկօնօլլը, շատ տաք ու

շատ սառը կերակուրները: Օգտակար են՝
կաթնեղէնը, ձուն (թերիսաշ), բուլիօնը (հա-
վից և նորթի մսից), նորթի, ճափ և որսի մի-
սը և այլն: Խմելու համար՝ ջուր, թէյ (ոչ
շատ), հացը լաւ է սովորակ տեսակից և կրա-
կի վրա չորացրած:

Հանդարձին ջրերն էլ շատ օգտակար են
կատարի համար, բայց նրաց գործածութիւ-
նը պէտք է բժշկի հսկողութեամբ կատարուի,
ուրեմն հարկաւոր է զիմել բժշկի:

18. **Փորկապութիւնը** մի հիւանդուտ
զրութիւն է, ուստի անհրաժեշտ է կոռուի
բայց ոչ լուծողականների միջոցով (որովհե-
տեւ ստամոքսը սովորում է այդ զեղին և շու-
տով լուծողականն էլ կորցնում է իր ազգե-
ցութիւնը):

Խնամք: Փորկապութեան դէմ ամենալաւ
միջոցը կանոնաւոր կենցաղն է: Առաօտ վեր
կենալիս խմել մի բաժակ սառը ջուր և յեղոյ
զուրս զալ մի փոքր գրօննելու: օրուայ մէջ
լաւ է ֆիզիքական աշխատանքով կամ մար-
մամարզութեամբ պարապել. ուտել մրգեղէն,
մեղր, կանաչեղէն և առասարակ ամեն աեսակ
կոպիտ կերակուր և սե հաց: Մարմինը սառը
ջրով շիկը, փոքրին մասսած անել և որոշ ժա-
մին ամենայն օր զուրս զալ հարկաւորու-
թեան համար, եթէ մինչև անդամ պահանջ
չզգացուի: Լուծողականներից խուսափել և
գործածել միայն անհրաժեշտ զէսքիերում:

19. **Փշացած օղից** (օր. վառարանը ժա-
մանակից շուտ ծածկելուց) ուշաթափուածին

մարուր օդը զուրս բերել, մարմինը տրորել ձեռքերով և շնչառութիւնը դրդուի (տես «Անդուած»):

20. Քարախսը (քոսը) առաջ է գալիս աչքով դժուար նշմարելի մի մակարոյցից—քոսորդից, որը կաշու մեջ ընակուելով և այնտեղ շարժուելով, անտանելի քոր է պատճառում: Կեղար և հակառողջապահիկ կեանքը նպաստում են հիւանդութեան տարածուելուն: Վարակիչ լինելով քորախտը երեխն ընկնում է ընտանիթի բոլոր անդամների վրա: Հիւանդութիւնը տարածում է անմիջական շփումից կամ շորերի և անկողնի միջոցով: Հիւանդութիւնից պատճուելու համար պէտք է, որ բոլոր հիւանդները միաժամանակ սկսն բժշկութիւնը, եթէ ոչ հիւանդ մնացածները նորից կվարակեն բժշկուածներին:

Խնամք: Վերցնել ծծումը մէկ մաս, վեց մաս ճարպ (խողի կամ ոչխարի), բաւ խառնել և տրորել և քսել այդ օծանելիքով կաշու հիւանդ մասերը 2—3 երեկոյ իրար վրա. յետոյ լուանալ ամբողջ մարմինը սապնով ու, տաք ըսով, որով և վերջանում է բժշկութիւնը:

Անհրաժեշտ է նոյնպէս լուանալ և մաքրել բոլոր հազնելիքը և անկորինները, որպէսզի մէջը քոսորդը չմնան և հիւանդութիւնը նորից չսկսուի:

21. Քորեքը վարակիչ հիւանդութիւն է. սկսում է ջերմով, կաշին գուրս է տալիս մանը բժեր, որոնք տարածում են ամբողջ

մարմնի վրա, ազատ թողնելով՝ միայն չանը, քիթը և շրթունքները. բուկը ցաւում է, միջի նշիկները ուռչում են: Մի քանի օրից յետոյ ջերմը թուլանում է, իսկ զուրս տուածը անհետանում: 10—12-րդ օրը կաշին սկսում է լախ շերտերով թէփոտուել: 2—3 շաբաթից յետոյ թէփոտումը վերջանում է, և հիւանդը կարող է քութէշց առողջացած համարուել: սակայն վտանգը զեռ անցած չէ, որովհետեւ քութէշը իրեկ հնատեանք զանազան հիւանդութիւններ է առաջացնում, շատ յաճախ՝ երիկամունքների բորբոքում: Այդ պատճառով առողջանալուց յետոյ էլ 2—3 շաբաթ շարունակ, հիւանդը պէտք է իրան զդոյշ պահէ, չմրսի, որովհետեւ երիկամունքների բորբոքումը հնեց այդ ժամանակ է յայտնուում:

Խնամք: Բժշկութեան համար զիսաւորն է մաքրութիւնը և պատշաճ մնունգը: Եթերանը և անհրաժեշտ է օրական մի քանի անգամ ողողել կամ ազաջրով, կամ ջրախառն բօրայի թթւուտով (борная кислота) 1 թէյի զգալ ջրի մեծ բաժակի համար: Մաքուր պէտք է պահել նոյնպէս քիթը և ականչները: Մարմնին քսել տաք ձէթ: Սնունդի համար վերցնել կաթնեղէնը, որ ամենից ապահովն է երիկամունքի համար: Միս կամ բուլիօն ամեններն շտայ: Խմելու համար հասարակ ջուր կամ լիմոնագի ձմեռ կարելի է տալ միայն հիւանդութեան չորսորդ շաբաթից: Երբ կաշին սկսում է թէփոտուել, հարկաւոր է հիւանդին 1—2 օրը մի անգամ տաք վաննա

Նստեցնել (15—20 բոլէ) և ամեն ջանք գործ դնել, որ տաք ջրից յետոյ հիւանդը չմրսի: Եթէ քութէշը առանց բարդութիւնների է, հիւանդը կարող է երեք շաբաթից յետոյ ոտքի կանգնելու իսկ տանից զուրս գալ կարող է միայն թէվը վերջացնելոց յետոյ: Քութէշի ժամանակ առողջ երեխաններին պէտք է որքան կարելի է շուտ հնացնել, իսկ երբ հիւանդը լաւացել է, նրա շորերը կամ այրել, կամ եփ տալ սապնաջրի մէջ. սենեակը լաւ մաքրել:

22. **Օճի խալրոց:** Կծած անդամը վէրքից բարձր պինդ կապել, վէրքը ծծել, որ թոյնը զուրս գայ և կարմրած երկաթով այրել: Հիւանդին քրտնեցնել և օդի կամ գինի խմացնել:

ԲԺ. I. Քաղաքարեւեան

Ա.Ո.ՌԴ.Զ.Պ.Հ.Ա.Կ.Ա.Ն ԻՄՍՍՏՆԵՐ

Գլխիդ մազերը առողջ պահելու համար, իւրաքանչիւր շաբաթ սապնով և գոլ ջրով գլուխդ լուա, իսկ պատրաստի գեղեր մի գնիր և մի գործ զնիր:

Սննդեան գործարանի գաւիթը բերանը լինելով, —պէտք է նորան միշտ մաքուր պահել. առաւօտ և երեկոյ փոշիացրած կաւիճով փոքրիկ խոզանակով ատամները մաքրել և ա-

մնն անդամ ուտելուց վերջը բերանը ողողել մաքուր ջրով:

Սատաներին վնաս է և շատ սառը և շատ տաքը, մանաւանդ, երբ մէկը անմիջապէս գործ է զրուում միւսից յետոյ:

Կերակուրը հանգիւան կետը —թէ հոգեպէս և թէ փեղիքաղէս. բարկացած, խոռված սրտով ընդունած կերակուրը չէ մարսուում: Երկար ծամեցէք, որպէսզի զիւրացնէք ստամոքսի պաշտօնը:

Բաղանիք զնացիք գոնէ ամիսը մի անդամ, եթէ անհնար է շաբաթը մի անդամ զընալը:

Հոգ տարէք ազատ պահել ձեր բնակարանը և ձեր անձը փայտառջլից, լուից, ձանձից, մանաւանդ մոծակից և այլ այսպիսի միշաներից, իսրեւ անաւոր թշնամիներից, ուրովհնետն վերջինների միջոցով տարածւում է սարսափելի տեսնդը՝ մարտիան, իսկ առաջինների միջոցով՝ տիփը, խօմերան և այլն.

Սառը կամ երեսնոյ ոսենք ունեցողը պէտք է նոցա մաքուր պահի, զուգպէքը շուտ շուտ փոխի և ոսրով շատ ըջի:

Վեներական ախսիք պահպանելու համար երիտասարդը պէտք է լինի պահեցող և ողջախոն: Ողջախոնութիւնը ոչ միայն վնաս չէ կազմուածքին, այլ և օգտակար է:

Սեռական սղջախոնաւթեան պատուանդանը հոգւոյ և բարոյական ողջախոնութիւնն է:

Բնակարանը լինի լոյս և ընկնի արե.

ասած է, որ այն տանը, ուր կայ արև, բժիշկը
ոտքը չի դնի:

Թուռ Եւ լրաւանութ, ամառ—ձմեռ, բաց
պահեցէք, որչափ հնարին է. օդը ամենալաւ
միջոցն է վարակիչ հիւանդութիւնների սաղ-
մերը ոչնչացնելու համար:

Թիւակարաններգ լինին լայնարձակ, որ-
քան նեղուածք լինի, այնքան աւելի թոքախուը
բուռն կըդնի:

**Նեշարանիզ արև մտնի,—արեւդ չի խա-
ւարի:**

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Առատով Դ. Վ.

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ԱԶՔԵՐԻ ԹԱՐԱ- ԽԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

1. Նորածին երեխաններից ոմանք իրանց
կեանքի 2—5-րորդ օրը երբեմն չափազանց
վտանգաւոր հիւանդութիւն են ստանում: Նը-
րանց աչքերը բորբոքում են: Կոռպերը սաստիկ
ուռչում և կոպերի տակից առատ քանակու-
թեամբ թարախ է հոսում:

2. Աչքերի թարախալին բորբոքում է հի-
ւանդանում են այն երեխանները, որոնց մայ-
քերի սեռական անդամներից ծննդաբերութիւն
ժամանակ թարախանիւթ է հոսում:

3. Նորածին երեխանների աչքերի և նրանց
մայքերի ծննդական անդամների թարախային
բորբոքում զլիսաւոր պատճառը այն միջրոյն
է, որ հապակաւորների սուսունակն է (*): առա-
ջացնում: Անա հէնց այդ պատճառով նորածին
երեխանների աչքերի թարախային բորբոքումը
կարելի է նաև աչքերի սուսունակային
բորբոքում անօւանել:

4. Հէնց որ նորածին երեխայի աչքերը
թարախային բորբոքում են ստանում, պէտք է
խսկոյն բժշկի օգնութեան դիմել՝ առանց ուշը
դարձնելու դայեակինների խորհրդի վրա:

5. Եթէ այդ հիւանդութիւնը թողնուի իր
ընական ընթացքին, այն ժամանակ աչքի խըն-
ձորները փշանում են և երեխան ընդմիշտ
կուրանում:

6. Դժբաղդ կոյրերի 1/3-ականից աւելին
իրանց կուրութիւնն ստացել են սուսունակա-
յին բորբոքումից—իրանց կեանքի առաջին
օրերում:

7. Նորածին երեխանների աչքերից հոսած
թարախը չափազանց վարակիչ է և եթէ մատ-
ների, թաշկինակի միջոցով կամ մի այլ ճա-
նապարհով դիպչի առողջ աչքին (ինչ հասակի
էլ որ լինի), խսկոյն սաստիկ բորբոքում կա-
ռաջացնի:

* Սուսունակի հիւանդութիւն ունեցող մարդիկ պէտք է
չափազանց մատուր են զգոյ լինին, որպէսակ հիւանդու-
թիւնը ամենին չանցին: Անրածեան է միօտ լինել, ուր
այս դէպին նախակաւուների ամերի հիւանդութիւնը աւե-
լի ծանր են աւելի կորսաքեր է լինում, տան քէ նորածին
երեխաններին:

8. Պորտը կարելուց յիսոյ նորածին երեխային թոկոյն պէտք է լողացնել և աչքերը սրբել մաքուր շնորհ կամ բամբակով, ոչ թէ լողանալու, այլ մաքուր չնի մէջ թրջած:

9. Եթէ երեխայի մէկ աշքը հիւանդացել է, պէտք է միւս աշքը խնամբով նախապաշտպանել վարակուելուց: Այդ նորածակով խստիւ արգելում է առողջ աշքին դիպցնել այն ապրունզը, բամբակը կամ ձեռքը որ գործ է ածուել ցաւոտ աշքի համար: Այդ կարելի է անել միայն մաքուր ձեռքերով ու քիչ առաջ եռացրած սառը ջրի մէջ թրջած բամբակով:

10. Եթէ հարկաւոր է երկու աշքն ել լոււանար այն ժամանակ պէտք է նաև առողջ աշքը լուսնալ և ապա ցաւոտը:

11. Երբեմն թարախը ցաւոտ աշքից հոսում է դէպի առողջը: Այդ կարելի առաջն ապնելու համար պէտք է երեխային պառկեցնել հիւանդաշքի կողմը և յաճախակի—(իւրաքանչիւր 4—10 բովին մի անգամ) քնշութեամբ սրբել թարախը եռացրած սառը ջրում թրջած բամբակով, սրբ պէտք է քիչ բամուած լինի:

12. Հարկաւոր է հիւանդութիւնն սկսուելուն պէս սառը փաթեթներ դնել ցաւոտ աշքի վրա, որպէսզի բորբոքումը թուլանայ և կողերը շատ չուսչին: Փաթեթները պատրաստում են հատեսալ ձեռվ, —վերցնում են 2 կտոր հիպոսկապիական բամբակ կամ բաթան, թըրջում են չափազանց սառը ջրում, թեթևակի բամուած են և ապա գնում մէջքի վրա պառ-

կեցրած երեխայի կոպերի վրա: Փաթեթները պէտք է իւրաքանչիւր 1,2—1 բովի փոփել որովհետեւ 2—3 բովից յիսոյ փաթեթը արդէն տաքանում է, իսկ տաքացած փաթեթը բորբոքին հակառակ նկրովործութիւն է անեւ նույն այսինքն օգուտի փոխարեն վսար և հացնում:

Սովորաբար փաթեթներ դնում են իւրաքանչիւր օր՝ օրական 4—6 անգամ, իւրաքանչիւր անգամին 1/2—1 ժամ, իսկ ծանր դէպերում՝ մի քանի ժամ շարունակ անցնդնատ:

13. Հաւաքուած թարախի և երկարատե փաթեթների փաստակար ազգեցութիւնից պաշտպանելու համար, լաւ է կապերին քիչ մակար քանի լուսութեամբ ապնդիւս, որ կապերի նկրսի կողմու աշքերի մէջը չլցուի:

14. Պարզ է, ի հարկե, որ եթէ յիշ կիսը մի որ և է ոչ սովորական պրտաթորում ունի, պէտք է իր ժամանակին լրժշկուի, որ նորածին երեխայի աշքերի փաստպաւոր բորբոքման առաջն առնի:

15. Միայն բժիշկը կարող է բժշկել նորածին երեխաների աշքերի բորբոքմանը, ուստի որքան շատ դիմել նրա օգնութեանը, այնքան լաւ է, իսկ մինչ այդ, կարելի է օգուտել պաջ իւրած խորհուրդներով:

Բժշկապետ Տիգրեգիկիան

ՅՂԻ ԿՆՈՉ ՄՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ *

Յղի կինը սիրած կերակուրներից, մինչև
անգամ պահրից, մսից զգւում է և, ընդհակա-
ռակը, ամենադժուարամարս կերակուրներ է
ցանկանում ուտել, ինչպէս լորի, մախոխ, չո-
րացրած հոն, տանու թթու դրած բռւսակն
ուտելիքներ (կարամբ, ծիծակ, բոխ և ալյո):

Մեր ժողովրդի մի մասը այնպէս է մտա-
ծում, որ յղի կինը ինչ որ պահանջի ուտելու,
պէտք է տալ: Այդ սիալ է, և այդ պահանջին
չպէտք է միշտ բաւարարութիւն տալ այլ
պէտք է միշտ ի նկատի ունենալ թե նա ի՞նչ
է պահանջում և նրա մարսողութեան գործա-
րանները ինչ դրութեան մէջ են: Եթէ նա օ-
րական մի քանի վարունգ է ուտում և փրս-
խում, ի հարկէ, պէտք է համոզել, որ չուտէ,
որովհետև նա հինգ այդ պատճառով ուրիշ կե-
րակուրներ չէ կարող մարսել: Աւելի լաւ է որ
նա ուտի մսի սուպ, լաւ եփած գառան կամ
հաւի միս, թերխաշ ձու, բրնձով գմուռ, թա-
նէ սպաս, թարմ ձուկ, (բայց ոչ չորացրած
կամ դոշ, որոնք շատ դժուարամարս են): Ե-
փած կանաչեղէններ, ինչպէս կանաչ լորի,
բաղրջան կարելի է ուտել, իսկ կարմիր լո-
րին, սիսեռը արգելուած են: Մըգեղէններից,
այն էլ լաւ հասած, կարելի է գործ ածել հե-
տեւեանները: Կեռոս, սալոր, ձմերուկ, թուզ և
խաղող (ի հարկէ կորիգները չպէտք է կուլ

տալ): Իսկ ծիրանը, գեղձը և սեխը—շատ չա-
փաւոր քանակութեամբ, այն էլ շատ լաւ հա-
սածները: Կարելի է տալ նոյնպէս և խնձոր
ու տանձ, որ պէտք է լաւ հասած լինին ու
փոքր քանակութեամբ: Իսկ զկեռը և սերկել-
լը բոլորովին արգելուած են:

Մեկանում սովորութիւն է խորոված կամ
տապակած միսը գերազանելը ձշմարիտ է, խո-
րովածը կամ տապակածը տելի համեղ է, և
աւելի մննարար, բայց դժուարամարտ է,
ուստի, երբ յղի կինը կերածը դժուար է մար-
սում, պէտք է լաւ խաշած կերակուրներ զործ
ածի, մանաւանդ երբ ատամները պակաս են և
լաւ ծամել չէ կարող: Յղի կանայք, որոնց
մարսողութիւնը թոյլ է, չպէտք է գործ ածեն
ճաշի ժամանակ հում կանաչի, բողի, փարունգ,
որովհետև սրանք գժուար են մարսում, և կա-
նաչեղնի և մանաւանդ բողի մէջ զոնուած
կծու նիւթերը կարող են աղիքները և երիկա-
մունքները գրգաւը: Ենոյնպէս արգելուած է կե-
րակուրների հետ պղպղել, մանանեխ և նման-
ները գործ ածել:

Ամենալաւ ըմպելիքը ջուրն է, բայց յղի
կանանցից ով սովորութիւն ունի զինի փառ-
լու, կարող է այդ գործ դնել, միայն շափառը
քանակութեամբ: Թէյ և սուրճ-թոյլ և, եթէ
հնարաւոր է, կաթով խառնած, իսկ արագ-
կամ արագով պատրաստած խմիչքներ ամե-
նին չէ կարելի գործ դնել:

Բժապ. Գ. Տեր Գրիգորեան

* Տես 1904 թ. «Ալովչ, թերթ» № 6 լաւելուածը:


ատամներ: Ուրեմն հասակաւոր մարդու ատամների գասաւորութիւնն այսպէս է: 5.1.4.1.5

5.1.4.1.5

Այսինքն 4.4 կտրիչ վերևում և ներքեւում, 1.1 ժանիք իւրաքանչիւր ծնօտի իւրաքանչիւր կողմում և 5.5 սեղանատամ:

Ատամի տեսանելի մասը կոչւում է՝ պսակ, իսկ այն մասը, որ մենք չենք տեսնում և որը ամրացած է ծնօտի մէջ, կոչւում է ատամի արմատ:

Ատամի պսակը դրսից ծածկուած է փայլուն սպիտակ կարծր նիւթով, որ կոչւում է էմալ:



Մարդու մօսական ատամները

Աչ կողմեց եւկու իշխները, եւուրդ մանիք, իսկ մնացած 5-ը փուլ եւ մած սեղանատամներ:

Էմալի տակ զանուում է ոսկրային կամ ատամի նիւթը: Նա այնքան սպիտակ և փայլուն չէ, ինչպէս էմալը:

Ատամի մէջ աեղուում դանւում է փոսիկ որտեղ աեղաւորուած է ատամի կաղզանց: Դա կազմուած է արեան անօթնելից և ներպե-

ԱՏԱՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԻՍԾՔԸ ԵՒ ԱՌՈՂՋԱ- ՊԱՀՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Կազմակերպ: Հասակն առած մարդը՝ունի 32 ատամ: Մարդը ծնւում է առանց ատամների և յետոյ 6 կամ 7-րդ ամսուում դուրս են զալիս երեխայի առաջին ատամները, որոնք կոչւում են կաթնատամներ, և աստիճանաբար աւելանուում են մինչև 2—3 տարեկան հասակը: 7—9 տարեկան հասակուում այդ ատամները թափւում են և նրանց տեղը գուրս են զալիս իսկական ատամները Մարդուս ատամները երեք տեսակ են լինուում. առաջին ատամները կոչւում են կտրիչներ և 8 հատ են՝ չորսը վերսի ծնօտուում, չորսն էլ ներքեւի: Կտրիչների կողին գտնւում են 4 ժանիքները: Մնացած ատամները կոչւում են փոքր և մեծ սեղանատամներ՝ թուով 20 հատ, այսինքն՝ 5—5 հատ իւրաքանչիւր ծնօտի երկու կողմերուում: Երեխաները մինչև 7 տարեկան հասակը մինչյն 20 ատամ ունին, իսկ մնացած 12 արժատական ատամները զուրս են զալիս առաջի մշտական ատամների հետ:

Ամենայինին մեծ ատամները, որոնք թուով չորս հատ են, զուրս են զալիս 17—40 տարեկան հասակուում և կոչւում են իմաստութեան

ըից, սրոնք մտնում են ատամի մէջ այն անցքից, որ գոնսամ է կրաքանչիւր, ատամի արձամանի ներքեխ մասում:

Եմալը շատ մեծ նշանակութիւն ունի ատամի համար, որովհետեւ նա պահպանում է նրան փշանալուց և հստելուց:

Առաջապահութիւնը: Ատամի փշանալը սովորաբար առաջ է զալիս նրանից, որ Եմալը և ապա ատամի ոսկրային մասը սկսում են կամաց կամաց քայլայութիւն և կտոր կտոր ընկնել, այսինքն ատամն սկսում է փշրութիւն:

Յաճախ զա առաջ է զալիս այն դէպրում, երբ թուքը որեւէ պատճառով թթուանում է և քայլայում, փշացնում է ատամները:

Քանի որ Էման է փշրութ, ատամի ցաւ չենք զգութ, բայց երբ բացւում է ատամնային նիւթը և սկսում է փշրուել, այն ժամանակ ատամը սկսում է ցաւել տաք և սառը ջրից, կերակրից, քաղցրեկնից, կերակրի մնացորդների մնչումից և այլն: Իսկ երբ այդ էլ փշրութ է և բացւում է ատամի կակլանը իւր ներքերով և բարբուդում, այն ժամանակ ցաւ արգէն շատ սաստկանում է:

Ատամները առողջ պահելու համար հարկաւոր է խնամել նրանց հետեւալ կերպով, ատամները պէտք է մաքուր պահել, ամեն անգամ ճաշից յետոյ բերանը ողողել և ամեն օր, գոնէ երեկոյան, մաքրել ատամները ատամնափշշիով և խոպանակով: շաբաթը երեք անգամ կարելի է բերանը ողողել հետեւալ միջոցով՝ երկու մաս սալու, իննառուն մաս սպիրտ

և ատամ-տաս կաթիլ զալձի և մեխակի իւղ վերցնել և սղողելու համար լցնել 20—25 կաթիլ ջրով բաժակի մէջ, կարելի է նոյնպէս զործածել բօրնի թթուատ կէս թէյի գդալ խառնած 1 բաժակ ջրի հետ, որով ուտելուց յետոյ հարկաւոր է ատամները միշտ ողողել:

Առանասարակ բոլոր շարտօնեալ միջոցները վասակար են, որովհետեւ, նրանք աւելի վաճառականական նպատակ ունին, քան թէ առողջապահական: Դրա համար չպէտք է գործ ածել և առնել առանց բժշկի խորհրդի: Իսկ եթէ մենք մեր ատամները չմաքրենք և բերանը չողողենք, այն ժամանակ մեր ատամների մէջ կմնան կերակրի մնացորդները, կհոտեն և զրանից առաջ կզայ թթուու, որից էմալը կը փշանայ և ատամը կսկսի փշրուել:

Բայց զրանից պէտք է զիտենալ, որ շափականց տաք և պաղ կերակրութները և խմիչքները շատ վասակար են ատամներին, նամանաւանդ տաք տեղից յանկարծակի ցուու տեղ գնալը, զրանից մամի վրա կարող են առաջ դալ ճնշուածքներ, որից ատամը չուտով կըսկսի քայլայուել:

Նոյնպէս վասակար է շատ կարծր բաներ ուտելը, որովհետեւ ատամը կարող է կոտրուել:

Եթէ արգէն ատամի վրա վսս կայ, պէտք է զիմել ատամնաբուժին և ատամը պէտօմը անել, այսինքն փոռը լցնել տալ այնպիսի նիւթով, որ պահպանում է ատամը յետագայ քայլայումից և ցաւից: Իսկ եթէ ատամը չի կա-

բելի լցնել, այն ժամանակ պէտք է հանել:
Անհրաժեշտ է հոգ տանել աստամների
պահպանութեան վրա նաև այն տեսակէտից,
որ միայն առողջ աստամներով կարելի է կե-
րակուրը լւա ծամել, որը մարսողութեան հա-
մար անհրաժեշտ է:

Ցածախ ստամքուի բորբոքումը (կատարք)
արևեստական աստամներ դնելուց յետոյ անց-
նում է:

Աստամնաբոյժ Պ. Մակարեան



ԽՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԽՈԼԵՐԱՅԻՑԻՑ

Երբ մի յաղաք կամ զիւղ լուր է տոնաւ,
որ խօլերան^{*)} մօտենում է, ընակիչները պէտք
է հաւաքուին և միասին քննին իրանց զրու-
թիւնը: Գրագէտները, օրինակ ուսուցիչները,
քահանաները պիտի մողովրդի մէջ կարգան
զրոյիներ խօլերայի մասին և բացատրեն, թէ
ինչ օգուտ ունեն իշխանութեան և թժիշկների
առաջարկած միջոցները: Իսկ մողովրդը
պարտաւոր է կատարել այդ բոլոր խորուրդ-
ները և պահանջները, որովհետև ամեն ինչ
արւում է ժողովրդի օգտի համար:

Ամեն մէկը պարտաւոր է զգոյշ լինել և

^{*)} Քաղուածք քժ. Արծունու «Խօլերա» գրքոյից:

չընդունել իր մօտ կասկածելի տեղերից եկած-
ներին և աւճասարակ չփիտի որկից յարա-
բերութիւն ունենայ նըանց հետ:

Փողոցները և աները պէտք է մաքուր
պահել, ոչ ոք չփիտի փողոցը կամ բակը զցի
իր անմաքրութիւնները, իր զիբին ու աղբը,
այլ պարտաւոր է հաւաքել արկղների մէջ և
ամեն օր տանել քաղաքից կամ զիւղից զուրս
և թաղել հողի մէջ, նշանակուած տեղերում:

Բնակիչների ուներ մասը, իր սեփական
օգտի համար, պիտի օգնի աղքատ մասին,
ըաց անելով թէյարաններ, ձրի կամ էժանա-
զին անաշարաններ, հրաւիրելով թժիշկներ կամ
ֆէլշէններ մողովրդին ձրի թժկական օգ-
նութիւն հասցնելու համար: Ես ասում եմ «իր
սեփական օգտի համար», որովհետեւ պաշտ-
պանելով աղքատներին վարակումից, հարուստ-
ները զրանով խոկ պատում են և իրանց: Ո-
չնչացնելով վարակի օջախները, հարուստները
զրանով իրանց սեփական կեանքն են պաշտ-
պանում:

Խօլերան երբ երեւում է մի տեղ, բնա-
կիչները չփիտի սարսափահար լինին և փախ-
չեն, ընդհակասակն, ամենքը պիտի խմբուեն՝
ընդհանուր թշնամու զէմ կոռուկու համար:

Առաջին զրոձը պէտք է լինի հնացնել
հիւանդներին իրանց տներից և տանել հիւան-
դանցները, յետոյ անհրաժեշտ է ախտահանել
նըանց ընակարանները:

Իսկ եթէ այդ տեղում չկայ հիւանդանոց
և հիւանդը պէտք է թողնուի տանը, այդ դէպ-

բում պէտք է ձեռք առնել հետեւալ միջոցները:

1. Հիւանդի գուրս զնացածը և փսխածը ոչ մի գէպօւմ չպէտք է փողոց կամ բակ թափել այլ պէտք է հաւաքել առանձին ամանունը մէջ և թափել առանձին խոր փսխարի մէջ, որոնք փնտւում են բակում (Չընորներից հետո): Ամեն անգամ ել այս աղտառութիւնների վրա պէտք է ածել թարմ հանցլրած կիր և չոր ճող: Աւելի լաւ կլինի անմաքրութիւնները տանել քաղաքից կամ զիւղից զուրս, թափել յամապաէս փորած փսխարի մէջ և նոյնպէս ծածկել կրով և հողով:

2. Չէ կարելի խօսերայով հիւանդի սպիտակինը և շորերը լուանալ այն զետում, ուրից բնակիչները ջուր են վերցնում:

3. Անքամեշտ է, որ ճարեանները ոչ մի յարաբերութիւն չունենան վարակուած աների հետ, — ոչ իրանք զնան այնտեղ, ոչ ել ընդունեն ախտեղից եկածներին:

Երանքատեսութեան կարելի է անվնաս է զնալ միայն այն զէպրում, երբ զգուշութեան բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են տանում: Այդ միջոցները սրանք են. հիւանդի տեսութեան զնացողը ներս մտնելու միջոցն իր շորերի վրայից պիտի հագնէ երկաթէ շապիկ (խալաթ), որը պաշտպանում է նրան հիւանդի վարակիչ արտաթորութիւններից: Դուրս կալու միջոցին շապիկը պէտք է հանել. իսկ եթէ այցելած շապիկի չի հագնէ, պիտի փոխի շորերը: Չպէտք է զիազել ոչ հիւանդին ոչ էլ նրա իրերին:

Հիւանդի մօտից զուրս զալիս պէտք է լուացուել սապնով և տաք ջրով, ապա և մի որեէ ախտահանող զեղով:

4. Ամեն մէկը պարտաւոր է իր առողջութեան վրա հսկել հենց որ մի ամենափոքրիկ տկարութիւն, փսխում կամ փորլուծութիւն ունենայ, պիտի զիմէ բժեկին:

5. Չպէտք է թոյլ տալ ոչ մի չափազանցութիւն ոչ ուտելու, ոչ խմելու և ոչ էլ աշխատելու մէջ, իսկ միւս բաներում չպէտք է փոփել ալբուստի առաջուայ եղանակը, եթէ նա կանոնադր է եղել: Կերպակուրը պէտք է հեշտ մարսուող լինի և չափաւոր դժուար մարսուող կերպակուրները, օրինակ չափազանց իւղալիները, հում ընդեղէնները (բողկ, կազմը, շաղգամ, զազար), խոզի միսր, երշիկը (կալբաս) և առհասարակ ապիտուած (ծխով չորացրած) մսեղէնները, վատ պանիրը, թթուած կաթն ու մածունը, խմոր հացը խիստ արգելուած են:

6. Հում մրգեր խօլերայի ժամանակ կարելի է գործածել միայն այն գէպրում, երբ լուացում են մաքուր, ևի տուած և սատցրած ջրի մէջ, աւելի լաւ է վերցնել մի թէյի գգալ սալիցիկան կամ լիմոնի թթուու, խառնել մի շիշ ջրի մէջ և դրանով լուանալ մրգերը: Իսկ եթէ չի կարելի այս զգուշութիւնները գործ գնել, աւելի լաւ կլինի առ ժամանակ մրգեր բոլորովին չուտել:

7. Թոյլատրուած ուտելիքները, օրինակ՝ լաւ պանիրը, կարագը, խոզի ապուխտը պէտք

է պահուեն ծածկուած ամանի մէջ կամ փաթաթուած մաքսոր թղթի մէջ, որպէսզի ճանհները փարակի թոյնը չստեցնեն նրանց վրա: Խորհուրդ ենք տալիս նացը ուտելուց առաջ, մի քիչ զնել տաք փառարանի մէջ կամ թէ նրա կտորները մի քիչ պահել օջախի կամ սպիրուի լամպայի բացի վրա: ծալրային գէպքում պէտք է վերցնել վերեի կեղեր ու մասցածն ուտել:

8. Փողովլզի մէջ խօսք կայ, թէ սէտուր պահպանում է խօլերայով փարակուելուց, ուստի շատերը սխտոր են լցնում իրանց գրպանները և ուտում մեծ քանակութեամբ: Այս չնչէտք է անել: Այդպիսի քանակութեամբ սըխտոր ուտելը վնաս է, որովհետեւ սխտորը զրովուած է ստամուն ու աղիքները, ծարան է առաջացնեւմ և ճարկալզում է շատ ջուր խմել:

9. Խօլերայի ժամանակ ամենալաւ խմիթքը և սացրած և յիտոյ սատցընած ջուրն է: Զրին կարելի է աւելացնել քիչ զինի կամ որեւէ թթուատ (լիմոնի) կամ թթու սիրով (սովոր, ճոնի և ուրիշ): Աղջին զրերը (սօվուայի, ուլուտէրեան) վնասակար են: Պէտք է խուսափել շատ ուսան խմիչքից, պապուադակից, սառը բրտուից (ակրօշկայ) և այլն.

10. Փորս ու ոսմերը պէտք է տաք պահել: Զի կարելի քնել խճնաւ տեղ, պասկել խճնաւ հողով վրա: Խորհուրդ ենք տալիս զործ ածել բրդէ կամ ֆլանելէ փարկաս:

11. Սովորած մարզիկ կարող են լողանալ պէտում տաք եղանակներին, և թէ միայն զի-

տր չի անցնում բաղակուած թաղերի միջնով: Լողանալ կարելի է միայն ուտելուց 3—4 ժամ յիտոյ:

Միջնորդ բժշկի գործ: Խօլերայի ժամանակ ստամուր ամեն տեսակ խանգարուածներ պէտք է լուրջ կերպով բժշկել: Մյու պատճառով ամեն կասկածելի զէպրում իսկոյն պէտք է բժշկի զիմել: Մեր կողմից տալիս ենք չկունեալ խորհուրդները.

1. Հիւանդին իսկոյն անկողին պառկից-ը եր, փորին մանանեխ (գրանիու—սնարման) զրեր, կամ զրէք կանենի սերմից փաթեթ կամ թէ չէ մի պարկ, որի մէջ կլցներ տաքացրած աւազ կամ թեփ (օր, փայտի մանրունք, որ սողցելուց է զոյանում): Ժողովուրդը սիրում է տաքացրած ազուր ու խոտ, դրանք ել լուեն: Կարելի է նոյնպէս հիւանդի ոտների արանքը ու կողդերին ենման ջուր լցրած շիշեր շարել, որոնք պէտք է փաթաթուած լինին մաքուր շորով:

2. Եթէ հիւանդը փսխում է կամ լուծք ունի, առեւք խմելու շաքարաջուր լիմոնի կամ նուան հիւթով, իսկ աւելի լաւ զինի, եթէ խմեցնեք նրան մի բաժակ ջուր, որի մէջ կաթացրեք՝ 10—15 կաթիլ աղաթթմուս (օլիան բնուուա—acidiū muriciū): Եթէ փսխելը չի զարգարում, կտոր-կտոր սառուց առեւք կուկ տալու, իսկ եթէ այդ ել չի օնդում ե, աւելի և, եթէ լուծք է ակսում, պէտք է տաք թօմկինի կամ ինոզեմցէկի կաթիլներ (հասակաւորին 20—25 կաթիլ ջուր երկու-երեք ժամը

մի անգամ, և եթէ փսխելը յաճախ է կրկնուում,
նոյն իսկ ժամը մի անգամ):

3. Եթէ հիւանդի ոտերն ու ձեռները ձբգ-
ձգուում են (որ մեծ ցաւեր է պատճառում
նրան), պէտք է ցաւող անդամը մերսել մի
կտոր շորով, որ պէտք է թաթախել մասանե-
խի կամ քափուուի սպիրտի մէջ:

4. Ծնչարդելութեան ու սրտի բարախման
դէմ գործ են ածում վալերիանի և հոփֆմա-
նի կաթիլներ (15—20 կաթիլ օրական մի քա-
նի անգամ), իսկ նուազութեան և ուշազնա-
ցութեան դէմ, բացի այդ, պէտք է նաշատրի
ոգիով (նատարիան ըորու) հոտ տալ քթին:

5. Եթէ հիւանդի անդամները սառել են,
պէտք է տաքացնել տաք ջրէ շիշերով:

6. Երկէ չախտք է ականջ դնել հերկմնե-
րին ու պառաւներին, որոնք իրանց տպէտ
խորհուրդներով ու վասակար միջոցներով
կորցնում են ժողովրդին: Օրինակ, նրանք
հիւանդից արիւն են առնում, այն ինչ այդ
չափազանց վնասակար է, որովհետեւ աւելի ևս
թուլացնում է հիւանդին և ուղղակի կարող է
սպանել նրան, քանի որ առանց արիւն առ-
նելու էլ հիւանդը շատ ջուր է կորցնում լու-
ծելիս ու փսխելիս և նրա արիւնը արգէն
թանձրացած է:

Պէտք է խոյս տալ նմանապէս և զանազան
պառաւական բոյսերից ու «քոլերից», որոնցից
միայն վնաս կայ և եղբէք օգուտ:

ԲԺ. Վ. Արծրունի

ԿԵՆՍԱԲԱՐԱՆՈՒԹԻՒՆ *

Ինչու համար ենք ուսում

Ամենքին յայտնի է, որ երեխաները տա-
րեցարի ածում են, նրանց քաշը ծանրա-
նում է, մարմինի իւրաքանչիւր անզամը միծա-
նում: Բայց արգեօր ինչն է դրա պատ-
ճառը. ի՞նչն է այդպիսի փոփոխութիւն առա-
ջացնողը...

Կերպակուրը, գուցէ կպատասխանէ մէկը,
և դա միանզամայն ճիշտ կի՞նի: Լաւ կերպ-
կուրը նպաստում է մարդու աճմանը, ուրեմն
երեխաները ուսում են, որպէսզի ապրեն,
առեն-զարգանան:

Այդ երեխաների ծնողները և ուրիշ հա-
սակաւը մարդիկ էլ իւրաքանչիւր օր կերպ-
կուր են ուտում, բայց չեն ածում-միծանում.
ուրեմն ինչու համար են ուտում զրանք: Պար-
զենք:

Մեզանից իւրաքանչիւրը շոր է հագնում
և զիտէ, որ նա մաշուում և կարկատել ու նո-
րոգել է պահանջում: Այդ միենոյն բանը պա-
տահում է մեր մարմին: Երբ որ մենք աշ-

Մահօք. Քարուածօքէն քարզմանել ենք «Կայ յաւետ
հայու թելո» գրից, որ քարզմանուրին է անզիւեն մի
յատնի նողագրական գրուածից:

խատում ենք, խաղում, մտածում կամ քնում
ենք, մեր մարմինը մաշտում է: Մաշուած շորը
նորոգելու համար կարիքատան ենք զցում, կա-
րուում ենք թերփ, իսկ մարդու մարմինը կադ-
դուրելու համար կերպակուր ենք բնունում:

Ուրեմն մենք կերակրութենք, ուպիս-
փի վերանորոգենք: Եւ կազմաւենք մեր
մարմինը:

Կարող ենք արդեօք երկար ժամանակ ա-
ռանց աննդի մնալ:

Ո՞չ քաղցածութիւնը մեզ վաղ կամ ուշ
կստիպէ ուտելու մասին հոգ տանել: Եւ եթէ
անկարող լինենք իւր ժամանակին սնունդ
գտնել, մեր մարմինը հալ ու մաշ կլինի և կա-
րող է նոյն իսկ մահուան զոհ զառնալ, ուրե-
մբ մենք կերակրութենք, ուպիսփի մեր
մարմինը ուժասպառ լիներաց պատճին:

Բայց այդ գեռ բոլորը չեւ:

Քաղցած մարդիկ աւելի շուռ են զցում
ցուրտը, քան թէ կուշտ մարդիկ, որովհետեւ
սնունդը տարբացնում է մարմինը, ուրեմն
մենք կերակրութենք, ուպիսփի մեր մար-
մին մէջ ուռ սահութիւն պահպանենք:

Ահա այդքան մեծ և բազմազան է միրն-
դի նշանակութիւնը կեանքում:

Ի՞նչ ենք ուսում

Չմեռը, ի հարկէ, մենք այն կերակուրն
ենք գերազասում, որը աւելի տարութիւն կա-
րող է առաջ Օրինակ, հեռաւոր հիւսիսում ապ-

րող էսրիմոսը աւելի ախորժակով ուսում է
կետ ձկան ճարպը, աւելի հաճոյքով ճաշակում
է ճարպէ մոմբ, քան թարմ պատուներ կամ
քաղցր կերակուրներ: Եւ զա համանալի է,
որովհետեւ ձևարար կերակրութեամացնում
է մարմինը:

Բայց այդ գեռ չի նշանակում, թէ պէտք է
ճարպ ուտենք: Դրա փոխարէն կարելի է ընտ-
րել այնպիսի նիւթեր, որոնք ճարպալին մա-
սեր ունեն: Օրինակ, իւղը, միսը, կաթը, ըն-
կոյզը, շաղանակը և այլն:

Չափց կերակրութենք ել սահացնում
են մարմինը: Շատ մրգեր, պտուղներ, բոյսեր
ու բանջարներ քաղցր համ ունեն, որովհետեւ
իրենց մէջ շաբար են պարունակում օրինակ
տանձը, խնձորը, խալովը, ճակնդեղը, տակը,
շաբարաբայը և այլն: Հացահատիկները պա-
րունակում են իրանց մէջ մեծ բանակու-
թեամբ կրախամալ և զրա հետ միասին բաւա-
կան շաբար:

Կարխման ել սահացնում է մար-
մինը: Այս տեսակի կերակուրներից ամենա-
սովորականը հացն է, գետնախնձորը (կարտո-
ֆիլ) և բրինձը, աւելի լաւ է գետնախնձորը
ուտել խաշած և ոչ տապակած:

Սապէտ ութեան, ծառը, կրտիւմար
և բաղց կերակրութեր օգտակար են
նշանափ, ու սահացնում են մարմինը:

Բայց վնասակար է շատ ճարպու և քաղցր
կերակուր ուտելի, անուշագիր թողնելով միւս

Ները: Զէս որ կերակուրք միայն տաքութեան համար չենք ընդունում, այլ և մարմինը կազդութեու, վերանորոգելու համար: Ուրեմն չպէտք է մուսանանք սննդաբար սիւթերի մասին:

Այդ սեսակ նիւթերից ամենալաւը կարնէ է: Երեխան ամբողջ ամիսներ միայն կաթով է կերակրում և աճում մեծանում: Պարզ է, որ կաթը իր մէջ պարունակում է մեզ հարկաւոր բոլոր սննդաբար նիւթերը՝ ճարպ, շաքար և բուլոր միւսները: Բայց կաթ գործածիլիս ամեն կերպ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ նա մաքուր լինի և առողջ կովից կամ ոչ խարից:

Հացը մեր կեանքի անհրաժեշտ հիմքն է կազմում, մանաւանդ որ նա իր զնով մատչելի է և հարուստին և աղքատին: Հացը լինում է սկ և սպիտակ: Բայց աւելի սննդաբար և օգտակար է սկ հացը: Սպիտակ հացը հացանատիկների միջուկից է պատրաստում և համեմատաբար աւելի քիչ սննդաբար նիւթ է պարունակում:

Թիսն էլ պատկանում է ամենասննդաբար նիւթերի կարգին: Բայց պէտք է զգոյշ լինել: Հին փշացած միսը չափազանց վասակար է: Տաւարի միսը աւելի սննդաբար է, քան թէ ոչխարի կամ հաւի, բայց զառ փոխարէն նա աւելի ուշ և աւելի գդուաբութեամբ է մարսում, քան թէ միւսները: Խոզի միսը երբեմն վարակուած է լինում, ուստի և կարող է մեծ վլաս հացնել, նոյն իսկ մահուան պատճառ

դանալ: Գրա առաջն առնելու համար պէտք է ընտրել նախ առողջ միս և երկրորդ՝ լաւ խաշել կամ տապակել: Հում կամ կիսանի միսը վասնդաւոր է առողջութեան համար:

Լոբին, սիսեռը, օսպը և առնասարակ բանջարելինը նոյնպէս օգտակար նիւթ է, մանաւանդ երբ գործ են ածում խոզով տապակած: Նրանք իրենց մէջ պարունակում են մեծ քանակութեամբ սննդաբար նիւթեր:

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ

Գարսաղը և Երան բժօկելու միջոցներ

Գարսաղ կոչուածը մի խիստ վարակիչ հիւանդութիւն է, որ համարեա բոլորովին նման ձեւով յաճախ պատահում է որոնող անսունների և խոզերի մէջ, իսկ կաթի, լորձունքի, կրկլանքի միջոցով անցնում է սկա ձիւրին, թռչուններին և մարդուն: Զին սովորաբար շատ քիչ ենթակա է այս հիւանդութեանը: Մեծ եղջիւրաւոր անսունները գարսաղով հիւանդանում են երբեմն բերանից, երբեմն կճապակներից, երբեմն էլ երկուսից միասին: Շիխանների և խոզերի կճապակների արանքներում են միայն վերքեր զուրս գալիս: Երբեմն այս հիւանդութիւնը երեան է զալիս նաև մի քանի վայրենի կենդանիների մէջ:

Նախազգուշացնեցիք միջոցները, բժշկելի ու
պատուասելը:

Դարսադով հիւանդ կենդանուն շատ հեշ-
տութեամբ կարելի է բժշկել. ևս երբէք չի-
մունի այս հիւանդութիւնից:

Այս հիւանդութեան առաջն առնելու հա-
մար, կարեր է ամենից առաջ հիւանդ անս-
տուններին հնացնել առողջներից, զաշտ չու-
զարկել արածելու եթէ հիւանդութիւնը տա-
րածուել է արդէն զոմի անասունների մէջ,
պէտք է առողջներին անմիջապէս հնացնել
նրանց մօտից և ննար եղածին շափ հիւանդ-
ներին մասակարարել մաքուր օդ, խմելու և
բերանը ողողելու համար մաքուր կամ քիչ ա-
ղաթթւուա (օլոնայ բնուօտ) կամ քացաք խառ-
նած ջուր, տակները փուլու համար զործ ա-
ծել մաքուր, չոր և փափուկ փուռած՝ յարդ,
հնացնել այդպիսիններին առջնից պինդ և չոր
կերը և տալ զիւրամարսը: Ամենից յարմար է
ալիքից, թնդից կամ ազած բոյր հացանա-
սիկներից յափ տալ օրական 5—6 անդամ:
Օդակար է զործ ածել նաև խաշած շաղգամի
կամ կարտոֆիլի հետ խառնած ալիքը կամ
թնիք: Կարելի է տալ նաև լաւ հիւթալի խոտ
և առւոյտ, միայն ոչ շատ: Աղը հարկաւոր է
շուտ ջուտ զուրս թափել, որ զոմը մաքուր
լինի և որովհնեան հիւանդութիւն առաջացնող
քացիները աղը մէջ կարող են իրենց զոյու-
թիւնը պահպանել 8—14 օր և ոչ աւելի, անա
այս պատճառով պէտք է առողջանալուց այդ-

քան օր յետոյ միայն առողջ անասուններին
տանել գոմը: Որովհնեան այդ քացիները ապ-
րում են աղը մէջ, այդ պատճառով պէտք է
կամ բուրբովին հնացնել աղը, գոմը շատ
լաւ մարրել և կամ աշխատել ախտանինել:

Հետո որ մէկը նկատեց, թէ իւր անա-
սուններից մէկը կամ մի քանիսը հիւանդ են,
իսկոյն պէտք է բերանները ողողէ մաքուր
ջրով: Աւելի լաւ է ալյուսի գէպիերում մի
վեգոր մաքուր Ծրի հետ մի հացի գդալ կամ
մի շիշ ջրի հետ 2—3 թէյի գդալ աղպիթթւուտ
խառնել և այնպէս ողողէլ բերանը (մանաւանդ
լիկուն և բերանը) օրական երկու, երեք ան-
գամ: Օդակարը է ճանաչուած նաև քացախա-
խառն սառը ջուրը, որի հետ խառնում են
այնքան անհալ մեղք (օրովանի մեջ), որպէսզի
ստացուի մածուցիկ հեղուկը, որը և օրական
3—4 մակամ քսում են բերանի այլ և այլ մա-
սերին: Պէտք է խամցնել միշտ աղպիթթւուտ
խառնած մաքուր ջուր: Շատ օգտակար է վեր-
քերը թթչել 50/0 շիպաջրով և բշտիկները
տրափուելուց յետոյ մնացած վերքը, վեր-
ծուածքները և կճղակների վէրքու մասերը
օրական 2—3 անգամ հենց զրանով կամ կաղ-
նու կամ ուռենու կեղեցից պատրաստած եփ-
նաջրով (խաշած ջուր) էլ լուանալ:

Անասունների բերանի և ոտքերի վէրքերը
աւելի օգտակար է լուանալ օրական երկու
անգամ 20/0 կապոյա պիօկտանինով (շահի
ուօտանին): Լուծենով այդ զեղի երկու մասը
100 մաս պարզ ջրի մէջ: Փորձերը ցոյց են

տուել, որ այդ արժան գեղը մի երկու օրուայ ընթացքում բոլորովին առողջացնում է վերբերը^{*)}:

Դերմանացի յայտնի անասնաբոյժ ուսուցչապետ Դ-ը Վլինկիլը խորհուրդ է տալիս այս հիւանդութեան ժամանակ հիւանդ կովերի կաթը լաւ եկելուց յետոյ խմացնել նրանց մօտ եզր բոլոր առողջներին, որով վերջնները զժուարութեամբ ենթակայ կլինին այդ հիւանդութեան: Հորթերից, արջառներից և մողիներից իւրաքանչւրին հարկաւոր է տալ օրական 2—3 լիտր (4—6 շլշ), իսկ հասակաւոր անասուններին 4—6 լիտր (8—12 շլշ): Այս բանը պէտք է կրկնել 8 օր անընդհատ:

Հիւանալի և միենոյն ժամանակ ձեռքի տակ եղած միջոց է համարում հճակներին և նրա շուրջն եղած տեղերը մազեթ բանը (արևեսին դեղո լոփովայ ու բերեզովայ), Վերք եղած տեղերի վրա օրական 1—2 անգամ պէտք է քսել այդ մազեթից, իսկ եղջեւների արանքում պէտք է դնել մազեթի մէջ թաթախած քոլք (պակեվայ տամոն), որով վերջը շուտով կառողանայ: (Նոյնպիսի բարեյածող հետեանքներ կունենայ կրիջնի կամ կրիօզօլինի 3—5% լուծուածքը հարկաւոր է օրական 2—3 անգամ լոււանալ հիւանդների բերանի խոռոչը, նոյնպէս քսել հճակներին և դուրս տուած ստիճքին Վերջերը 5—8 օրուայ ըն-

*) Մի մօխալ պիօկտանին արձէ 15 կրաքի, այդ հօնակուրեամբ կարելի է մի հանի հիւանդ բաժկել:

թացքում կրծշկուին, իսկ հիւանդները կսկսեն բաւարար չափով կեր ընդունել):

Կճակները վասուելուց յետոյ հարկաւոր է ոտքի մերկացած մասերին քաղցրեր (գլիցէրին) քսել բայց եթէ կճակը բոլորովին ընկել է և հիւանդութիւնը արդէն հասել է մինչև յօդերը, ի հարկէ, ոչ մի բան չէ կարող օգնել և միակ միջոց մնում է կենդանուն մարդեկը:

Իսկապէս հիւանդութեան դէմ կոռւելու ամենաարդիւնաւոր միջոցը կենդանիների պատուասումն է, որը շատ հեշտութիւնմբ կարելի է զլուխ բերել չիւանդութիւնը երեսուն պէս հարկաւոր է վերցնել մի մաքուր շորի կամ աւելի լաւ է սպունգ և հիւանդ կենդանու բերանի մէջ թուրքով թրչելուց յետոյ կելոյն այդ շորի կառը լուսուն գոտի բանը ամբողջ հօտի կամ բուրոք անասունների բանի, նողերը նույն կը թունքներին: Կալեկի լիզուկին, նողերը նույն կը թունքներին: Կալեկի է նաև այս նապատակով վեր առնել մի փունջ լաւ խոտ, կոփել հիւանդ կենդանու թքու բերանը և դուրս հանելուց յետոյ ներս տանել առողջ կենդանիների բերանը: Երկու երեք օրից յետոյ պատուասուած կենդանիների վրա երեան կզան վարակուելու նշաններ, և թէպէտ հիւանդութիւնը բաւական արագ ընթացք կունենայ, բայց չափէտք է վախինալ, որովհետեւ թիւնեայ, այց չափէտք է վախինալ, որովհետեւ թիւնեայ, կառողանդը շուտով (մի երկու օթէ կանցնի և հիւանդը շուտով) կառողանդը: Պատուասուումը բարից յետոյ կառողանդը: Պատուասուումը բարից թիւթիւն կարճ միջոցով հիւանդութիւնն ևս պատճառելուց, այն միծ նշանակութիւնն ևս

ունի, որ կաթնատու կենցանիների կաթը չէ պակասում և իրանք էլ չեն նիհարում. բայց սրանից, պատուաստելուց յետոյ հիւանդութիւնը կարճ միջոցում, մէկ կամ երկու շաբաթուայ ընթաքում, բուլուսվին վերջանում է և անասունների ոռքերը պղատ են մնում վարակուելուց:

Դ. Պազաւեան

ԱՍՏՂԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Արեւը

(Պատ. Խնդր.)

Արեւի նօատեսկութիւնը: Անթիւ անհամար են ասալերը. նրանց միլիոնաւոր շարքերում արեւը միայն մի հապիկ էլ իր փառվով մեծութեամբ ու զօրսութեամբ շատշատերից ստոր: «Երկնային բանակում արեւը մի հասարակ գինւոր է»: Բայց այդ անհամար ասալերից միայն արեւն է բաւականաշափմատերին, որպէսզի նկատելի կերպով ազդէ կեմնքի վրա: Դժուար է գտնել մի բառ, որով կարելի լինէր զազափար տալ այդ ազդեցութեան մասին: Նա ամբողջ կեանքի շարժիչն է: Քիմիական, մեխանիքական և կենսական բոլոր երկութեները նրանից են ստանում իրենց ոյժը: Աչնչացրէք արեւի ճառա-

գալթները, և երկիրը կմեռնի, կեանքը զդադարի: Առանց լոյսի և տաքութեան չէր լինի բուսականութիւն. առանց բուսականութեան չէին կարող ապրել կենդանիներն ու մարդիկ:

Այս հնչյաց դա է պատճառը, որ բույրը ժամանակների մոտածողները խոստովանել և շեշտել են արեւի ազդեցութենութ նիւթեական կեանքում: Շատերի համար նաև նոյն իսկ պաշտամունքը առաջիայ է զարձել իրդի աստուածութիւն:

Այդ բույրից յետոյ զարմանալի չէ, թէ ինչու գիտական աշխարհը այն մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս գեպի այդ երկնային մարմինը, աշխատելով պարզել նրա էութիւնը, կազմուածքն ու ներգործութիւնը:

Հեռաւորաբիւնը: Արեւ մեր աշքին շատ փոքր է երկում: Բայց զիտնականները վաղուց արդէն հաստատել են, որ նա մի անազին մարմին է՝ 1,300,000 անգամ մեծ երկրից: Նա իր մէջ 330,000 անգամ աւելի նիւթ է պարունակում, քան թէ մեր երկրագուշնզը: Այդ անազին մարմինը մեղ անգան փոքր է երկում, որովհետեւ չափազանց հեռու է, չափազանց բարձր: Երկար տարիների ջանքերով, բազմաթիւ փորձերով գիտնականները հաշուել ու գտել են, որ արեւի հեռաւորութիւնը երկրից կազմում է մի տարածութիւն՝ 149,628,000 կիլոմետր երկարութեամբ: Այդ անսելի տարածութիւնը անցնելու համար մարդ պէտք է զոր դնէր 6,300 տարի, օրական 64 կիլոմետր գնալով: Իսկ եթէ երկակայննը, որ երկրագուն-

դից գէպի արկը մի երկար ուղի է շինած, ո-
րի գնացքները ժամը 92 կիօմետր տարածու-
թիւն են կտրում, այն ժամանակ գեշեր ցերել
ձանապարհ գնալով կարելի էր արևին հասնել
175 տարուց յետոյ: Երկրից արձակած թնդա-
նօթի գնդակը միան 9 տարուց յետոյ կհաս-
նէր արևին, եթէ կարողանար մինչև վերջը
շարժուել իր սկզբնական արագութեամբ:

Արեւի հետարութիւնը աւելի պարզելու
համար պրօֆ. Մինդինսկը առաջ է բերում
հետեւալ հետաքրքիր օրինակը:

— Երկարականը մի երեխայ, ասում է նա,
որ իր երկար ձեռքերը դիացնում է արևին և
այրում: Պարզ է, ի հարկէ; որ այրումից ցաւի
զգացմունք առաջ կը այ, բայց երեխայի վա-
ղուց արդէն ծերացած կիխի մինչև որ այդ
զգացմունքը կհանի նրա գիտակցութեանը:
Ան թէ ինչու. Հեմծօլցի և ուրիշ գիտնա-
կանների ասելով, ներփային մի որեւէ հոսանք,
օրինակ, ցաւի զգացմունքը անցնում է 100 ոտն.
տարածութիւն մի վայրկնանում կամ օրական
2,635 կիլոմետր, ուստի և անհրաժեշտ է 150
տարի, որպէսզի արևի կրակից այրուած երե-
խայի ձեռքը ցաւի զգացմունքը հասցնէ ուղե-
ղին: Անա այդքան հեռու է արեւը մեղանից:

Արեւի մակերեւութիւնը: Դիտել երկրին
կեանք աւող մարմեխն—արևի մակերեւոյթը—
ահա մի, հետաքրքիր զործողութիւն: Բայց
ի՞նչպէս. չը որ սովորական աշքը անզօր է
դրա համար, չը որ մարդկային գիտողութեան
ուժից վեր է մի այդպիսի դերը: Բայց մարդ-


կային խելքը գտել է զրա միջոցը: Գիտնական-
ները հնարել են այնպիսի հետաքրտակներ
(telecions), որոնց շնորհիւ կարելի է լուսնի,
արեւի ու աստղերի մարմինն էլ առարկայ
զարձնել: Եթէ վերցնենք մի այդպիսի հետա-
գիտակ և նայենք արեւին, այն ժամանակ մեր
առաջ կրացուի մի հետաքրքրաշարժ պատ-
կեր Արեւի մակերեւոյթը միատեսակ, միապա-
ղաղ չէ. նա բաղկացած է չափազանց փայլուն
հատիկներից, որոնք խումբ-խումբ կամ շեր-
տերով լողում են խաւար միջավայրում: Հան-
դարս չեն այլ հատիկները, այլ շարժուն, տա-
տանուսդ: «Արեւի մարող մակերեւոյթը, ասում
է պրօֆ. ինչպէս իւր տեսքով շատ նուան է
նկարչական կոպիտ թղթին կամ նոր մակար-
դուած կաթին»:

Կրտակէ ամսիւր: Մի շարք գիտնականներ
գտել են, որ արեւն էլ իր շաւը մամպեր ունի:
Սակայն այդ ամպերը բաղկացած են ոչ թէ
ջրային մանրիկ կաթիխներից, ինչպէս մեզա-
նում է, այլ հալուած մետաղի կաթիխներից.
Նրանք լողում են արեգակային մթնոլոր-
տում, որը մի այրող բոց է, որ աղմկում է
աներեկակայել ուժով և կատաղութեամբ: Այն,
ջրից չեն ցոյանում արեւին շրջապատող ամ-
պերը, այլ կրակից: Նրանք կրակէ ամպեր են:

Արեւի բծերը: Փայլուն ու կրակոտ է
արեւի մակերեւոյթը, բայց միատեսակ չէ այդ
փայլը ամրող տարածութեան վրա: Այնտեղ
կան և մութ կետեր, խաւար կտորներ, որոնք
յայտնի են դարձել «արեւի բծեր» անունով:



Լուսնի մասնակի բնածած
(1883 թ.) Բիու:



Տաճախի գիտական հիման
վրա առաջարկութեան առաջանակ ըստ
Բիու: Ա. Հայուրդի ամենահայտնի մասնակի ըստ
լուսնի և այլ առաջարկութեան:

Գեղ շատ հին ժամանակներում մարդկանց յայտնի էին այդ բժիշրբ: Զինական արքայութիւնների մէջ են յիշուում նրանց մասին: Մեր ժամանակներում զի՞սնականները փարձերով եկան այն եղբակացութեան, որ այդ բժիշրբ փոփոխական են և շատ նման ամսղերին: Երանք սովորաբար բազկացած են լինուում երկու մասից՝ խաւար կենարոն, որ կոչուում է սրուեկ և քիչ լուսաւոր բոլորակի որ կոչուում է կիսասպաներ: Երկար կեանք չունին այդ բժիշրբ միջին հաշուուղ 2–3 ամիս: Բայց շատ անզամ անյայտացող բժիշեկ հակոյն յայտընւում է, մի ուղիղը, նրա տեղ երրորդն և այլն:

Երբեմն արեի բժիշրբ աճագին մեծութիւն են ունենում, օրինակ 1858 թ. նկատել են մի ընդ 230,000 կիլոմետր լայնութեամբ: Նա ծածկել է արեի 1/10-րդ մակերեսութիւնը: Նրա տրամագիծի երկարութիւնը 18 անգամ երկար է եղել երկրագնդի տրամագիծից:

Մի քանի գիտանկանների կարծիքով այդ բժիշրբ բաւական խոշոր ազդեցութիւն ունին երկրային կանքի վրա, նրանք ազդում են երկրի կլիմայի, փոխորիների ու անձրեսների վրա: Բայց այդ հարցը դեռ վիճելի է համարւում և կարող է վերջնական լուծում ստանալ միայն նորանոր փորձերից յետու:

Ա. Եփի քազը: Յայտնի է, որ մեր երկիրը իր լոյսը ստանում է արեից և հրը լուսակի մասնում է արեի ու երկրի մէջ տեղը, այն ժամանակ տեղի է ունենում արեի խաւարում: Աւշաղը է բնութեան այդ երսոյթը, մանա-

անդ այն լուսաւոր շերտը, որ երկուում է արեկի շուրջը, արեկի թագի է կոչում նաև Եթէ խաւարման ժամանակ երկինքը պարզ է, լուսինը երկուում է իրրե սկ գունդը, իսկ նրա շուրջը ճառագայթների ցանցից բաղկացած մի պահի: Գիտնականներին երկար ժամանակ զբաղեցնել էր տալիս այն հարցը, թէ որտեղ է գոյանում այդ լուսափայլ՝ պատկր՝ արեկի մթնուրտառում, լուսնի մթնոլորտառում, թէ իրկրին մօտիկ: Երկար վէճներից ու փորձերից յետոյ, վերջապէս 1869 թ. պրօֆ. Սօրներ Խարենսը և Ինըզը հաստատեցին, որ լուսինն ու երկիրը մաս չունին այդ գործում. ինքը արեն է իրա համար թագ պատրաստողը:

Լոյսն ու ռաքուրիներ. Վերեկում ասացինք, որ արեկ երկրային կեանքի շարժիչն է: Միանգամայն պարզ կլինի այդ իրողութիւնը, եթէ աչքի առաջ ունենանք, որ միայն արեն է լոյսի և տապութեան ոկզինական աղբիւրը: Եւ նրբան մհծ է նրա ոյժը. նրա տուած լոյսը հաւասար է 175,000,000,000,000,000,000,000,000,000 մոմերի լոյսի, նրա հառագայթների լոյսի աստիճանը 34 անգամ ուժեղ է, քան թէ եւերական լոյսի աստիճանը: Հապա տաքութիւնը, Թօգիտափի զիտանականի հաշուով արեկի մակերեսոյթի զրա 8եւսիուսի 10,000° տաքութիւն կայ: Դա մի այնպիսի ոյժ է, որ մի բովուում կհալիցնէ 58,2 աստիճանի կամ 17,7 մետր հաստութեան սառուցի շերտը:

Ձ Ի Զ Ի Ք Ա

Խոնչ է բամի

(Պրօֆեսոր Վագներ)

Քամու հօանակարիներ. Երկար, շատ երկար ժամանակ մարդիկ աշխատել են իմանալ, թէ ի՞նչ է քամին, որտեղից է զալիս և ուր է գնում: Նրանք զիտել են օդի մէջ կատարող բոլոր փոփոխութիւնները. օրէցօր, տարեցտարի նկատել են, թէ որտեղ քանի աստիճան ցուրտ կամ տաք է լինում, որքան անձրեւ ու ձինչ է զալիս, ինչպիսի քամիներ են իջում և այդ բոլորից յետոյ զանել են քամու պատճառուն և էութիւնը: Այս, զիտանականները այնքան փորձեր են արել, այնքան աշխատել, որ այժմ մարդիկ կարող են հեշտութեամբ իմանալ, թէ երբ և որտեղից քամի պիտի փչէ և ինչպիսի եղանակ նա պիտի բերէ:

Տաք երկրներից նա տաքութիւն է բերում, ցուրտ երկրներից զովութիւն: Ծովերից նա չուր է վերկարձրացնում և ամապիք զարձնում: Ամպերից անձրեւ է ձիւն է թափուում: Առանց քամիների մի տեղ չափանց տաք կլինէր, մի ուրիշ տեղ ցուրտ, մի տեղ չափանց չունց չոր, մի ուրիշ տեղ խօնաւ: Եւ այդպի-

սով ցամաքը կդառնար ամայի անապատ՝ առանց բոյսերի և կենդանիների։ Այդքան մեծ է քամու նշանակութիւնը։ Բայց այդ գեղ ըուլը չէ։

Քամին է, որ զարդարում է երկինքը պէս-ալէս ամսերով և նրա տեսքին մի առանձին գրաւչութիւն տալիս։ Առանց քամու ցամաքի վրա կլինէր շարունակ կապօյտ երկինք՝ առանց ամսերի, իսկ ծովիրի վրա մութ ու մոայլ մառախուզ։

Ո՞րենից եւ ո՞ւր է փշաւմ բամին։ Յայտնի օրէնք է, որ որքան շատ լինի ճնշումը, նոյնքան մեծ կլինի դիմադրութիւնը։ օրին, զդը որքան մեծ ճնշման է ենթարկուած, նոյնքան մեծ ուժով կաշխատի լայնանալ-ազատուել ճնշումըց, եթէ վերցնենք երկու շիշ-մէկը նուսրը ու թեթե օգով, իսկ միւսը խիստ ու ծանր օգով և մի խողովակով միացնենք նրանց, այն ժամանակ երկրորդ շնչ օդը արագ հոսանքով կանցնի գեղի միւս շիշը, որտեղ ճնշումը աւելի սակաւ է։ Այդ միենայնը կատարում է և բնութեան մէջ։ Քամին միշտ փշում է այն տեղերից, որտեղ ճնշումը մեծ է, և դէպի այն կողմը, որտեղ օդը աւելի քիչ է ճնշուած։

Քամու վրա պղող ուրիշ պատճառ էլ կայ։ Օդը տաքանալուց լայնանում է, թիթիանում և երկրից վերի բարձրանում։ Այդպիսով երկրի վրա օդը ճետզնեատէ թիթիանում է, ոսորանում, իսկ վերեինը ծանրանում։ Վերեի ծանրացած օդը նորից վար իշնել չի կարող որովհետեւ ներքից ատքութեան աղղիցու-

թեան աակ շարունակ նորանոր շերտեր են վերի բարձրանում։ Այդպիսով վերեի օդը ճնշում է դէպի այն կողմը, որտեղ ճնշումը քիչ է։ Հենց այդ հոսանքն է քամին։ Նա ծնունդ է առնում վերեւում—այստեղ, որտեղ ամպերն են լողում, որտեղ ճնշում չկայ։


Երկրի երեխն էլ քամի է զոյանում, երբ ցուրտ տեղերից ճնշուած օդը անցնում է դէպի տաք երկիրների։

Այսպէս ուրեմն, քամին փշում է երկրի երեխն՝ ցուրտ տեղերից դէպի տաքը, իսկ երկրի վերեւում տաքից դէպի ցուրտը։

Սարափելի բամինեւ։ Քամին սովորաբար միատեսակ ուղղութեամբ չէ շարժուած, նա միշտ պայտաներ է անում։ Բայց այդ պըտոյտները չափազանց մեծ են։ Որքան փորք են պայտաները, նոյնքան փոփոխակն է լինում քամին։ Նա փչում է մերժ մի կողմից, մերթ-միւս երբեմն էլ չարածնի երեխայի նման խաղեր է անում։ հաւաքում է ճանապարհի փոշին, ծառերի տեղեները, և կլոր սիւն գարձրած փշում—տանում այս ու այն կողմը։ Փողովուրզը դրան «աստանի քամի» է ասում։ Զենոր նոյն ձեռվ նա ձիւնն է բարձրացնում։ Սակայն հեռաւոր երկներում, անապատներում նա այդպիսի փոքրիկ խաղերով չի բաւականանում, այլ բարձրացնում է աւազի անազին կոյտեր և փշում տանում է առաջ ու առաջ։ Իս բարատ քամին է։

Վայ այն մարդկանց կամ անաստներին, որոնք կպատահնեն այդ քամու ճանապարհին,

աւազը կլցուի նրա քիթն ու բերանը և մի
ակնթարթում կխեղսէ; Հեռաւոր Արարիայում
և Սախարայում պատահել են շատ դէպքեր,




Թարսու առաջնական առաջնական գործը առաջնական գործը:

երբ այդ քամին ամբողջ քարաւաններ է
կործանել: Տես պատկեր եր. 196:

Դրանից աւելի սարսափելի են լինում
այն վոլորդինները, որոնք պատահում են տաք
երկրներում, բաց ծովի վրա: Այդուղի տաքա-
ցած օդը, ներքեցից վերև բարձրանալով, շատ
անդամ չի հնապահում, չի ցրւում, այլ մնում է
կանգնած, իսկ որոշ ժամանակից յետոյ սար-
սափելի արագութեամբ վար է լինում: Ներ-
քեցից էլ նոյն արագութեամբ վերև է բարձ-
րանում ներքեցի օդը: Այդ ժամանակ ծովը
կատաղի կերպով կարծես եռում է, իբրև մի
մեծ կաթսայ: Փրփուրի գէզերը ծածկում են
ջրի մակերեսովթը, եղանակը մոալլուսմ է և
մի անեղ կերպարանք ընդունում երբեմն
անդուսպ քամին բարձրացնում է ջրախառն
փրփուրը վերեցից էլ ամպերն են իջնում ձա-
գառի նման և այսպիսով ամպ ու ջուր՝ մի
ամբողջ սիւն դարձած, զոռում-գոչինով ա-
ռաջ են շարժում, ինչպէս որ պատկերացրած
է հետևեալ նկարում:

Բարերախտաբար գիտնականների կատա-
րած փորձերի շնորհի մարդիկ կարող են
նախագուշակել այդպիսի քամինների մօտենալը
և զգուշութեան միջոցներ ձեռք առնել, օրի-
նակ. փախչել եթէ հնարաւոր է, նաւե-
րի վրայից թնդանօթ արձակել և հաւա-
րուած ամպերը ցրուել, օդի հոսանքը փոխել
և այլն:

Պատահում են դէպքեր, երբ այդ միջոց-
ներն էլ չեն օգնում կամ ժամանակին չեն



Թարթառ Տամբին ծովի շուրջ Վերի և բարձրոցի պիտույքներ:

Համսում և կատաղած փոթորիկը ահազին
վասներ է հասցնում:

ԲՆԱԳԻՑՈՒԹԻՒՆ

ԹՅօւրեան ահեղ երեսյրեներ

Բազմաթիւ ու բազմազան են բնութեան երեսյրենը և նրանք ունին իրանց պատճառն ու հետևանքը: Եթէ վերցնեսք իւրաքանչիւրն առանձին և ուզենանք պարզել զիտութեան տուած բացատրութիւններով—այդ մեզ շատ հետուն կտանէր. ուստի այս անգամ բաւականանք միայն երկուսով:

ԵՐԿՐԱԿԱՐԾ ԻՆ ԵՐԱԲԱԼՊԻ—ահա այդ երկու ահեղ երեսյրենը, որոնք այնքան վնասներ են հասցնում մարդկութեանը, այնքան ահ ու սարսափ ազդում և նոյնիսկ սնապաշտ հաւատալիքների առիթ տալիս: Ո՞ւմ յայտնի չէ 1900 թուի երկրաշարժը, որ քարուանդ արեց Ամսալրաւարը ամբողջ գաւառը: Ո՞վ չի յիշում 1902 թ. երկրաշարժը, որ կատարեալ աւերակ գարձրեց Շամախի քաղաքն իր շըջականերով: Եւ այդպէս անվերջ օրինակներ կարելի է իրշել նաև օտար երկիրներից, հեռաւոր անցեալց:

ԵՐԿՐԱԿԱՐԾԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆՆԵՐԻց մէկը պնդում է, որ նրա հաշուով՝ 7 տարուայ մէջ, այսինքն 1850 թուից մինչև 1857 թիւը՝ ամբողջ հողագողի վրա 4620 անգամ երկրաշարժ է եղել, կամ ուրիշ խօսքով տաճ՝

տարեկան միջին թուռփ 4620; 7=660 երկրաշարժ: Մի ուրիշն առում է, որ հազիւ թէ մի օր կամ մի ժամ լինի, որ հողագնդի վրա՝ մի որեկցէ առ երկրաշարժ չպատահի: Վերջապէս երրորդը համազուած է, որ երկիրը ոչ մի բոպէ հանդարտ չի մնում, այլ շարունակ տատանում է, բայց մենք իսկապէս նկատում ենք միայն շատ ուժեղ հարուածները: Մեզ յարտնի է, որ մեր երկրի 2/3 մասը ծածկուած է ջրով և միայն 1/3 մասը կազմում է ցամաքը: Մենք սովորել ենք հաշուի առնել միայն ցամաքը տատանող երկրաշարժները, առանց հաշուելու ջրի վրա կատարուածները: Ուրեմն, ցատարուայ ընթացքում ոչ թէ 4620 անգամ, այլ աւելի երկրաշարժ պէտք է պատահած լինի:

Արտեղ են պատահում:—Եթէ դուք հարցնէք, թէ ամենից շատ որ երկրներում են լինում երկրաշարժները, կպատասխանենք, — երկրաշարժն աւելի շատ է պատահում լեռնոտ երկրներում, քան այն տեղերում, որտեղ գրեթէ բարձրավանդակներ չկան և գետինը ներկայացնում է հարթավայր, ինչպէս օրինակ Ռուսաստանում:

Երեւան Գիտնականները իմացել են, որ երկրաշարժները պատահում են աւելի յաճախ ձևուր՝ քան ամառը, գիշերը՝ քան ցերեկը: Նկատուած է նմանապէս, որ անձրիհյն եղանակին, փոթորիների և կատաղի քամիների ժամանակ, երկրաշարժը աւելի յաճախ է պատահում: Գուցէ այս բոլորը շատ էլ հետա-

քրքիր է, բայց առ այժմ պատճառը յայտնի չէ: Հարաբուղիւ:—Հարաբուղի կոչում են այն լեռները, որոնք երբեմն իրանց միջից զուրս են տալիս քուլայ-քուլայ ծուխ և կրակ տախն-քըն հուր են բղխում: Եթէ ցանկանում էք ի-մանալ, թէ այդ ինչ ծուխ ու կրակ է, լսեցէք հետևել պատճութիւնը:

Միջերկրական ծովում, Սիցիլիա կղուու վրա մի հրաբուղի լեռ կայ էտնա անունով: Ամառնային տաք երեկոյ էր. լուսինը լուսաւորում էր կղուու վրա գանուած քաղաք-ներից մէկի շրջակայքը և բնակիչների աչքերի առաջ պարզ կերպով սկսեց պատկերանալ էտնա լերան մոայլ, ալեզարդ կերպարանքը: Նրա ձիւնապատ գագաթը պսպղում էր լուսնի լուսով և գեղեցկուհի էտնան սարսափ չէր աղդում դէպի ինքը, այլ սեր:

Բայց յանկարծ գետնի տակ լուսեց մի խուլ զոռոց, որի վրա առաջին անգամ ոչ ոք ուշագրութիւն չգարձրեց: Մի քանի քուպէից յետոյ՝ զոռոցը աւելի սաստկացաւ և գետնի տակ մի բան որոտաց. կարծես ապակեայ և յախճապակեայ հազարաւոր ամաններ ընկեր էին անունդը և այնտեղ չարդ ու փշուր գարձել: Գետինը շարժուեց, նրա տակից գարձեալ լուսեցին որոտմաւքներ, զլրպաց խացնող ձայթիւնը: Էտնան զողդողաց հիմքից և նրա ձիւնի նման սպիտակ, անապին գագաթը պոկուեցաւ սարից, մանշերով սլացաւ օդի մէջ, կտոր-կտոր եղաւ և թափուեց գետնին: Տեղի ունեցաւ երկրորդ հարուածը, ապա երրորդը



Էտապի հարթություն (Մեջիկա լեռնա կղզաւ վրա):

և ժայթքումը պատկերացաւ իր ամբողջ գեցեցկութեամբ։ Մահացու սարսափը պատեց

բոլորին։ Գոլորշու ամբողջ քուլաներ ահազին սիննի ձևով բարձրանում էին էտնայի պատռուած զագաթի վերեր։ Լերան լանջի վրա երեսում էր մի լայն, ու շերտ։ Դա ճեղքուածք էր, որ լերան վրա գոյացել էր ստորերկրեայ զօրեղ հարուածից և գոլորշիների ճնշումից, որոնք ճանապարհ էին որսուում գուրս զալու զետնի հաստ կեղեկի տակից. գոլորշիների հետ՝ հարթուղիմ զագաթի վրա գտնուած փառից սկսեցին գուրս պրճնել զանազան զաղեր։ Այդ զագերը ժայթքման միջոցին սաստիկ աւերումներ են անում, որոնց հետ միասին սովորաբ լւում է սարսափելի զոռոց, մորնչիւն, ճայթիւն և շշւոց։ Հրաբուղիմ զագաթի խորշը, առասարակ, համնում է մինչև նրա ձմիքը և առա զնում խորը զետնի մէջ։ Այդ խորշը ձագուի ձև ունի ենրա պատերն ևս կազմուած են միննոյն նիւթերից, որոնցից բաղկացած է և ինքը լեռը, և որոնք սովորաբ անուանում են հանճային նիւթեր։

Գոլորշիներից և զաղերից յետոյ՝ էտնայի վերեւ մի ահազին ամսութերեաց, որ սկսեց տարածուել լերան զագաթի վրա։ Հրաբուղիմ պատերը, որոնք բաղկացած էին ամուր քարեց, ճայթելով կոտրուում էին և վերեւ էին բարձրանուում օդի մէջ։ Քարերի խոշոր կարոները սաստիկ մանրուում էին, բարձրանուում լերան վերեւ և այստեղից կարկտի նման գետին թափուու։ Դեռ այդ բաւական չէ։ Այդ քարերն ուղղակի փշուում, փոշի էին զառնուում և հենց այդ փոշին նման էր թանձը և մթին

տամպի, որ ծածկում էր լոյսը, առաջացնում էր սարսափելի մառախուղ և աւելի մեծ երկիւզ ու սարսափ ազդում մարդկանց: Միենայն միջոցին գոլորշիների սիւնը հետզինուէ բարձրանում էր: Կարծես մի մոայլ ոգի լերան հիմքի տակ թագուաւած՝ անհաւատալի ուժով նրան դէպի վնը էր մողում: Գիշերը մի տեսակ կարմրութիւն պատեց ամբողջ երկնակամարին: Հրաբուղիսի վրա մի ահապին հրեղէն սիւն էր կանգնած, որի ծայրը կարծես երկնքին էր հասնում: Դա հէնց այն «կրակն» էր, որի մասին նոյնպէս միշտ յիշում են՝ հրաբուղիսի ժայթքումը նկարագրելիս:


Բայց բանը նրանութե, որ դա բոլորովին կրակ չէ, քանի որ խկապէս ոչինչ չի փառում լերան տակ, քանի որ այդտեղ ոչինչ բոց չկայ և գոյուար թէ կարող է լինել: Աւելին դա ի՞նչ է: Դա «լաւան» է, որ եռում էր հրաբուղիսի մէջ և զրա տեսքը արտափայլ լելով լերան գաղաթին եղած գոլորշիների մէջ՝ երկում էր հրեղէն սիւնի ձևով: Բայց ի՞նչ բան է լաւան: Դա զանազան քարերի և հանքային նիւթերի հալուած զանգուեածն է, որ իր արտաքին տեսքով շատ նման է տաքացած համծ երկաթին: Նոյն զօրութիւնը, որ գետնի խորքում տաքացնում է ջուրը և գոլորշի և գարձնում նրան, աւելի խորը զետնի մէջ հալցնում է բոլոր նոյնախանն և քարոտ նիւթերը և հալցըրած մետաղի նման է դարձնում նրանց:

Հրաբուղիսի բերանից երբեմն գուրս էին

թոշում լաւայի խոշոր կտորներ, որոնք օդի մէջ բոլորակ ձև ընդունելով՝ թափւում էին կամ նոյն իսկ հրաբուղիսի մէջ և կամ այդ լերան լանջերին: Հայած քարից կազմուած այդ գնդակները՝ կոչում են հրաբույային ունմքեր, երբեմն նրանք ունենում էին անագին մեծութիւն, կշռում էին ամբողջ պուռեր և մինչև անգամ տասնեակ պուռեր: Բայց լաւան միշտ այդպիսի խոշոր կտորներով չէր զուրս թռչում կտնայի բերանից, այլ մեծ մասմբ օգի մէջ փշտոքով, փոշի էր զանոնում, որը անուանում է հրաբույային մլիսիր:

Եղել են զէպեր, երբ քամին քչել է հրաբույային մոխիբը մի քանի հարիւր վերստ հնառ և քանասուած վերստ տարածութեամբ, երկու սամէն հասու շերտով ծածկել է դաշտերը:


Ռումբերի, քարակոյտերի, հրաբղիսային փոշու և մոխիրի ժայթքումը զգալի կերպով զագարելուց յետոյ՝ լաւան բարձրացաւ մինչև հրաբուղիսի բերանը, զուրս եկաւ նրա ափերից և կրակահեղանիւթը լայն շերտով վայր հոսեց կտնայի լանջերի վրայով: Այդ ահազին հրեղէն գետը ողողեց 14 քաղաք և գիւղ, որոնցից մի քանիսի բնակիչների թիւը 34,000-ից աւելի էր: Անա այլքան մեծ էին կտնայի պատճառած փասները: Պակաս աւելուած չեն պատճառել Վեզուվը, Արարատը և միւս հրաբուղիները: Բնութեան այդ սարսափելի ոյժը շատ ու շատ անգամ հողին է հաւասարեցրել



ամբողջ զիւղեր
ու քաղաքներ և
զոհ է գարձ-
ռել քաղմաթիւ
մարդկանց Այդ-
քան սարսափե-
լի է բնութեան
այդ անեղ ոյժը:

Վեպով նրաբուղիմի ժայրքումը 1834 թ.

Հարսւողիների թիւն ու տեսակները
Գուցէ կհարցնէք, թէ արգեօք շատ հրաբուղին-
ներ կան աշխարհին երեսին, արգեօք յաճախ
են լաւայ վիճում և թէ սովորաբար որքան են
տեսում այդ ժայթքումները: — Բոլոր հրաբուղին-



Ների թիւը աշխարհիս երեսին հաշում են 709, միայն թէ նրանք բոլորն էլ միանման չեն. նրանցից ոմանք, այժմս էլ շարունակում են վիճել, ոմանք էլ վաղուց մարել են: Այդ պատճառով առաջներին անուանում են գուծող հրաբուխներ: Բայց իրավունքի մարած հրաբուխներ: Գործող հրաբուխները նոյնպէս երկու տեսակի են բաժանում: Դրանց թիւը հասնում է 321-ի: Նրանցից ոմանք իսկապէս վիժում են, այսինքն բացի գոլորշիներից ժայթքում են և լաւայ, իսկ ոմանք ներկայում միայն «ծխում են»՝ այսինքն գոլորշի ու զարդ են արձակում, թէ կասկած չկայ, որ երրեմն—գուցէ շատ և շատ առաջ նրանք վիժում էին և լաւայ, և ոռոմքեր և մոփիր:

Վեպում ու Սարօմրովին այժմս էլ կարող են գործող հրաբուխներ համարուել, բայց օրինակ մեր Արարատն ու Արագածը այժմ ըրլորդին հանդարա են և գծուար թէ երբ ի լիցէ սկսեն գործել: Սակայն մի ժամանակ՝ այդ գեղեցիկ լեռներն են, մանաւանդ Արարատը, նմանապէս կատաղաբար ժայթքում էին: Դա շատ և շատ վաղ էր: Ասում են, որ Քրիստոսի 341 թուին, այսինքն սրանից 1563 տարի առաջ, Հայաստանի բոլոր լեռները, որոնց թուին պատկանում են և Արարատն ու Արագածը, սարսափելի երկարածից թնդացին և այդ երկարածը ոչնչացրեց շատ ժողովուրդ, և լեռներից «ծուխ» ու «կրակ» դուրս եկաւ: Մենք այժմ լաւ գիտենք, թէ ինչ ծուխ ու կրակ է զա:

Երկիր հալած լաւայ էր:—Մեր երկիրը, ասում են զիտնականները, մի ամենախոշուր գունդը է և կոչում է հողագունդ: Այդ գունդը սրանից շատ և շատ զարեր առաջ բաղկացած էր ամբողջապէս միենայն կրակահեղանիւթիւն զանգուածից, ինչպէս և լաւան, մի խօսքով նա ամբողջապէս հալած լաւայ էր: Ժամանակի ընթացքում նրա հրաշէկ մակերեսոյթը սկսեց սառչիւ—միտներգ բերէք այն կեղեց, որ շատ շուտով ձևանում է լաւայի հոսանքի գրա—և նա ամբողջապէս ծածկուեցաւ պինդ կեղենով: Բացի գրանից քանի գունդը սառչում էր, աւելի և աւելի էր հաստանում նրա կեղեց և հէնց զա է այն վեհահովը, որի վրա այժմ բնակւում ենք մենք: Բայց հողագնդի ներսում, նրան թանձր կեղեկի տակ, մինչեւ այժմ էլ կայ մի ամբողջ հրեղէն ծով, որ բաղկացած է հրաշէկ, հալած լաւայիլ: Այդ լաւան գետնի խորքումն է գունւում, շրջապատուած է կեղենով, որի հաստութիւնը ամեն տեղ միատեսազ չէ, կան տեղեր, ուր այդ հաստութիւնը 105 վերսատ է, և կան տեղեր՝ ուր 130 վերսատ է:

Այժմ անշուշտ հասկանալի է, թէ որտեղից է առնում իր սկիզբը և ինչպէս է ձևանում այն լաւան, որ գուրս է ժայթքում հրաբուղիների ճնշգերից և բերաններից թէ ցամաքի վրա և թէ ջրի տակ: Դա շատ վաղուցանից գոտնում է գետնի տակ, ստորերկրեայ չերմութիւնը չէ թողնում նրան սառչելու և նա ինքը հրաշէկ գրութեամբ մնացած մինելով իր

կողմից պահպանում, գուցէ և սաստկացնում
է ստորերկեայ ջերմութիւնը:

Սօրերկեայ զարքեին ու զազը: Յի-
շում էք արգեօք, թէ ինչ աճազին քանակու-
թեամբ գոլորշի ու գազ են արտաշնչում հրա-
բուդիները ժայթքման միջոցին: Նետաքրքրա-
կան է իմանալ, այդ ինչ կազեր են և որտե-
ղից են առաջանում—ի հարկէ, ծովերից ու
ովկանուներից: Բոլոր հրաբուդիները գարն-
ում են կամ կզզիների վրա և կամ ծովերի
ու ովկանուների ափերին, այսինքն ծովային
ջրից շատ մօտիկ: Ուրեմն, ոչինչ այնքան
հետաձեւ, որքան այդ թրի թափանցումը ափե-
րի և ծովային յատակի պատուածքների
միջով գէպի հրաբուդի պատուանգնը: Ի՞նչ
է անում ծովային ջուրը հրաբուդի լերան
ներսում: Շատ բան, նա գոլորշի ու գազ գառ-
նալով կազմում է այն ործը, որ ժայթքումի
ժամանակ մահացու սարսափ է գցում մարդ-
կանց վրա: Տեսէլ էք, ինչպէս է վեր-վեր
թռում ինքնահոսի վրա ղրուած թէյանոցի
խոսքը, երբ ջանի տանտիկինը խօսքի բըռ-
նուելով հիւրերի հետ, մոռանում է իր ժամա-
նակին քայր բերել նրան: Ինչից է առաջա-
նում զաւ-նըանից, որ թէյը եփ է եկել և
գոյացած գուրըշները՝ ուղենալով գուրս պըրծ-
նել, ուժով բարձրացնում են թէյանոցի խու-
փը: Դրէք արկի տակ խցանով լաւ փակուած
մի շիշ լիմօնագ և շիշը կճայթի, կամ թէ
խցանը ուժով գուրս կթռչի նըա բերանից:
Լցըք փամփուշտը օդով և դրէք փառած վա-

ուարանի մէջ և նա կճայթի: Վեցըքէք մի մեծ,
հաստ ափերով կաթսայ, կիսով չափ մէջը ջուրը
ածեցէք, փակեցէք նրան արնպէս, որ գոլորշին
բոլորպին չկարողանայ միջոցը գուրս գալ և
դրէք թէժ կրակի վրա: Գուցէ նա էլ չդիմա-
նայ և ճալթի այն օդով լցրած փամփուշտի
նման, որ գուր սպակ էլք վառարանի մէջ:

Դժուար չէ կրեակայիլ, թէ որքան ահա-
զին ոյժ պէտք է ունենան և որքան մասներ
կարող են տալ այն գոլորշիներն ու գազերը,
որոնք ահազին սիւնի նման գուրս են պըրծ-
նում հրաբուդիների բերանից:

**Հարուուխի և Երկրաւարժի պատ-
ճառ ներք:**—Ծովի ջուրը ճեղքուածքների մի-
ջից մտնում է խորը՝ հրաբուդիների տակ և
հաղորդակցւամ է այլտեղ գտնուած կրակա-
հեղանիթ լաւայի հետ: Մյու ջուրն արագու-
թեամբ տաքանում է և արտադրում ահա-
զին քանակնեամբ գոլորշի և գազի Դրանը
սասկութեամբ ճնշում են հրաբուդին մի
քանի անզամ և գետնի տակ թնդին է առա-
ջանում, որից յիշոյ հրաբուդին այլևս չի դի-
մանում այդ ճնշմանը, նրա գագաթը պոկում
է, գոլորշիներն ու գազերը իրանց համար ճա-
նապարհ են բաց անում, իսկ լերան բանչերի
վրա գոյանում են ահազին ճնդերը: Այժմ նը-
րանց գուրս գալու ճանապարհը բացւած է,
կապանքները խորտակուած են և գոլորշիներն
ու գազերը սկսում են իրանց աւերտւաները:
Նըրանք սուլելով ու աղմուկով գուրս են պըրծ-
նում և իրանց ճանապարհի վրա քանդում

Են հրաբուղիմի խորչի պատերը. գոլորշէների ու զաղերի զօրութեամբ քարի ահազին կտորներ պոկւում են հրաբուղիմի խորչից և փոշի են դառնում: Լաւայի ամբողջ կտորներ և ամենամանը ցայտուածքներ տանում են նրանք վերև, շատ վերև և դառնում են հրաբուղիմին ուումբեր և մոխիր. բոլոր լաւան յագնում է զոլորշիով ու գազով, որոնք սաստկապէս ձնշում են նրան, բարձրացնում են մինչև հրաբուղիմի ափերը և երբ նու թափում է ափերից, ներքեւ են քշում նրան՝ լերան լանջերի վրայով:

Եթէ գուք լաւ հասկացաք, թէ ինչից են առաջանում հրաբուղիմների վիժումները, այն ժամանակ ես կարծում եմ, որ հեշտ կհասկանաք երկրաշարժի պատճառները:

Դուք զիտեք, որ հողագնդի ներսում կայ կտականեղանիւթ լաւայի մի ամբողջ ծով: Եթէ դա ծով է, ուրեմն, նաև էլ ուրիշ ծովերի նման կարող է փոթորիկներ ու ալեկոծութիւններ ունենալ:

Եւ ահա այդ փոթորիկների ու ալեկոծութիւնների ժամանակ այդ հրեղէն ալիքները դիպչում են երկրի կեղեին և սաստիկ տատանում ենան:

Ահա ձեզ երկրաշարժի մի ուրիշ պատճառ էր Հրաբուղիմին վիժումների ժամանակ՝ գոլորշիներն ու զաղերը, որոնք գուըս զալու ժանապարհ են որոնում, ուժով խփում են հրաբուղիմի ստորոտին և տատանում են ոչ

միայն հրաբուղիմը, այլ և նրանից հեռու գոլորշուած զիանի մեծ մասը: Հենց այդ տատանումն ահա՛ երկրաշարժն է:

Վ. Լունկիվիչ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Լաւ կովի նշանները

Լաւ կովիրի մարմնի բոլոր մասերը պէտք է քննոյց ու փափուկ լինին, ինչպէս որ յատուկ է եղերին:

Սուածին անդամ նայելիս, պէտք է ուշադրութիւն դարձնենք, որ կովը մեծ և աչքի ընկնող պակասութիւն չունենայ:

Պարարտութիւն:—Եթէ մի կով վաղուց է ցամաքել՝ կաթից կտրուել և մաել է ծննդու կաթանը՝ նա պէտք է պարարտ լինի. Եթէ ցրանը՝ նա պէտք է պարարտ լինի. Եթէ նիհար է՝ այդ վատ նշան է. այդ նշանակում է, թէ կովը կամ հիւանդ է կամ քիչ սնունդ է ստանում:

Կաթնատու կովի նիհար լինելը վատ նըշան չէ, մասնաւանդ եթէ նա ամեն օր առատ կաթն է տալիս. ընդհակառակը՝ զա մի լաւ նշան է, որ ցոյց է տալիս, թէ նրա բոլոր կերածը կաթ է դառնում:

Կաթին եւ մազը:—Կովին առաջին անգամ մի լաւ նայելուց յետոյ, պէտք է մօտենալ և տեսնել թէ ինչպէս է նրա առողջութիւնը:

Հաւ կաթնատու և առողջ կովի մազը հարթ, ողորկ և քնքոյշ է լինում և ոչ թէ կոշտ ու վեր ցցուած. կաշին էլ նուրբ և քընքոյշ է լինում. Մի ցեղի կոսիրից ամենալաւ կաթնատուն նա է, որի կաշին ամենից նուրբ է ու քնքոյշ:

Տարիք:—Կովի տարիքը կարելի է որոշել ատամներից և եղջւրներից, եթէ մի քեչ լաւ նայենք կովի եղջւրներին, կաևսնենք, որ նրանց արմատի մօտերքը, ներքի մասի վրա, խորդուբորդ փորուածքներ կան, որոնք իրար վրա շարած օղակների նման են. Առաջին օղակը կազմում է կովի երեք տարեկան հասակում, երկրորդը՝ չորս և երրորդը՝ հինգ տարեկան ժամանակ. զրանից յետոյ տարին մի օղակ է աւելանում, այնպէս որ կովի տարերը կարող ենք խմանալ եթէ օղակները հաշուենք և ստացած թուին աւելացնենք երկու:

Բնարիւնը (խասիաթը):—Կովի մարմինը շօշափելուց կարելի է խմանալ նրա բնութիւնը:

Լաւ կովերը նրանք են, որոնք քաղցր և հանգարա բնութիւն ունեն և սիրով են թոյլ տալիս, որ մարդիկ իրանց մօտենան ու գուրզութենն:

Բոլորովին հաստատ է, որ շուշ գրգռող կովերի կաթը առատ չի լինում, նրանց վատ բնութիւր կարելի է լաւ ինամքներով ուղղել:

Սկանչենը:—Կովի ականջները պէտք է լայն լինեն և խիտ մազով. ծածկուած. մնձ նշանակութիւն ունի, երբ ականջի ներսի ե-

րեսը ծածկուած է լինում մի տեսակ ճարպոտ նիւթով, որին ասում են ականչալոց կամ սմոկի. Որքան շատ լինի այդ աղար, այնքան էլ կովի տուած կաթը պարարտ ու կարագոտ կլինի:

Առատ կարագ տուոս կովերը մի ուրիշ նըշան էլ են ունենում, այդ նըանց մորթի գեղին գոյնն է. Այն կինդանիները, որոնց կաթի մէջ շատ կարագ կայ—մուգ գեղին գոյնի մորթ են ունենում:

Աւել:—Մասթափ ուսերով կովը չաղանալու ձգուում չի ունենում, այլ աւելի նիհարուում է. այդ նշանակում է, թէ ստացած մընունը նրա մարմնի մէջ ճարպ չի զանուամ, այլ կաթ, ուրեմն ուսերի այդպէս լինելը անուղղակի կերպով ցոյց է տալիս, թէ կովը լաւ կաթնատու է:

Բայց այս մի բացարձակ բան չէ. անպատճառ հարկաւոր չէ, որ կովը նիհար ուսեր ունենայ՝ լաւ կաթնատու լինելու համար:

Խործել զարգացած ու խոշոր պիտի մնի:

Փոր:—Կուրծքի նման փորն էլ պէտք է խոշոր լինի, որ սննդական գործարանները լաւ զարգանալ կարողանան և կենդանին ախորժակավ ուտի, որ շատ կարենը է լաւ կովերի համար:

Աղնասարը կազմուած է իրար շատ մօտիկ գոնուող հատիկներից, որոնց ասում են ողներ, երկու ողների արանքում եղած պա-

բապ տեղերին կամ ակօսներին ասում են կաթի վերին դուեր կամ այբիւներ:

Այս կաթի գոները թէև ամեն ցեղի կով չունի, բայց եթէ պատահեց, որ կովն ունեցաւ—լաւ նշան պէտք է համարել:

Կոնիք:—Անպայման հարկաւոր է, որ կովի կոնքը լայն լինի և ընդարձակ, որ ազդրերն իրարից հեռու լինեն և նրանց մէջը մի ընդարձակ բաց տեղ մնայ:

Ծծերն իրանց խողովակներով այդ տեղն են բանում, գրա համար էլ, որքան տեղն ընդարձակ լինի, այնքան էլ ծծերը լաւ կկազմուեն, լաւ կզարդանան:

Պօչք:—Երկար պոչը լաւ նշան է համարում:

Ծծերը:—Յայտնի է, որ կաթը ծծերումն է պատրաստում, գրա համար էլ շատ հասկանալի է, թէ ինչու այն կաթնատուն են լաւ համարում, որի ծծերը մեծ ու զարգացած են լինու:

Շատ անգամ թէկ ծծերը մեծ է երեսում, բայց և այնպէս կովը քիչ կաթ է տայիս, պատճառն այն է, որ այդ տեսակ ծծերի մէջ գեղձերի վրա զարգացած են իւղային մասեր, որոնք թէկ ծծերը մեծ են ցոյց տալիս, բայց արգելում են շատ կաթ պատրաստելուն. այդ տեսակ ծծերին ասում են շատ ծծեր:

Շատ հեշտ է մսու ծծերը ճանաչելը. նըրանց ծաւալը չի փոքրանում կթուելուց յետոյ, փոխանակ սեղմելիս սպոնսդի նման հուզ դալու, նրանք թւում են պինդ և ուռած:

Դժերի Խրակները:—Ծծերից գուրս եկող երակների զարգացումը մեծ նշանակութիւն ունի:

Որքան այդ երակները լայն լինեն, այնքան էլ նրանք շատ զործ կկատարեն, այնքան էլ կովի կաթը առատ կլինի:

Երակների քննութիւնը բոլոր նշաններից աւելի կարեոր է, որովհետեւ նրանք հաստատ և ապահով նշաններ են:

Կարնանիք:—Կովը հարկաւոր է զիտել քամակի կողմից, գրա համար պէտք է պոչը բարձրացնել, որ յետակողմի բոլոր մասերը լաւ երեան:

Ուշադիր դիտելով այս մասերը, մենք տեսնում ենք, որ սրանց մազերը միշտ միկոյն ուղղութեամբ չեն գնում:

Ցածից վերև գնացող մազերը աւել կամ պակաս տարածում են ծծի յետակողմի մասերի և միջնայիշի վրա. այսոտեղ նրանք կազմում են զանազան ձեր պատկերներ, որոնց ասում են կարնանիք:

Ընդհանրապէս ամենից յարգուած են այն կաթնանիշները, որոնք տարածում են ծծի ներքեւի մասերի վրա:

Գ. Մեծանուրեան



իւշով Պէտք է կերպարել կողերին, ՈՐ-
Պէսջի լԱՀ ԿԱԹ ՍՏԱՑՈՒԻ

Որբան շատ մննդարար կեր արուի անա-
ստաներին, այնքան աւելի շատ կաթ կսա-
ցուի և աւելի թանձը կլինի. ընդհակառակը,
որբան կերը վատ լինի, այնքան աւելի պա-
կաս քանակութեամբ և ջրալի, թոյլ կաթ կըս-
տացուի. Անասուններին ամառը խոտով կե-
րակրելին՝ պէտք է խոտի ընտրութիւն անել,
որովհետեւ գիւղաւնտեսութեան մէջ սա մնձ
նշանակութիւն ունի: Նկատուած է, որ ամե-
նալաւ տեսակի կաթ կստացուի այն ժամա-
նակ, եթէ անասունները արածել են չոր ա-
րօններում, ուր կան թիթեանաձն և քաղցր
հասակաւոր ու հոտաւէտ խոտեր: Կաթի յատ-
կութեան վրա նոյնպիսի շատ լաւ ներգոր-
ծութիւն են ունենում այնպիսի խոտերը, ո-
րոնք ժողովուած են լինում բարձրավանդակ
տեղերից: Ցածր հարթութիւնների վրա ըստ-
սա մի քանի տեսակ խոտերը, ինչպէս են
պարաւածագլիքները (օօօռ), եղեգները, կա-
տուազի (խօօչի) կոչուած բոյսերը, ընձախո-
տերը (լուտրը), ճահճալին խոտերը (ռալյու-
նուի), վայրի եղինաները (ըրծենիւ) և ու-
րիշները կաթի վրա վասակար ներգործու-
թիւն են ունենում: Անասուններին այդպիսի

բոյսերից բաղկացած խոտերից կերակրելիս
նրանցից ստացուած կաթից չկ եսրելի ոչ հա-
մեղ կարագ և ոչ պանիր պատրաստելու կաթի
համար աւելի շատ վասակար են համարուած
օշինդրը (ոլմին), վայրի սովոր և ապիկոց
խոտը (ըրբեկա): Արմատապտուղներից ճակն-
գեղը և զագարը կաթի յատկութեան վրա
խիստ լաւ ներգործութիւն են ունենում: Կար-
տոֆիլը, մանաւանդ, եթէ գործ է ածուած մնձ
քանակութեամբ և հում, նմանապէս և կովակա-
ղամբը (նրօեա), շաղցամը փչացնում են կաթը
և իւղին մի տեսակ անհաճոյ համ են տալիս:
կաթի յատկութեան վրա վատ ազդեցութիւն
է ունենում նմանապէս և անասուններին մնձ
քանակութեամբ կաղամբով կերակրելու: Պէտք
է միշտ մաքուր և հոսող ջուր խմացնել:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ինչ յատկութիւններ պիտի ու-
նենայ

Երբեմն սխալմամբ կկարծէին թէ առանց
երկրագործական ուսման և կը թութեան կա-
րելի է լաւ երկրագործ ըլլալ:

Անշուշտ երկիրը մշակողը պէտք է կարիճ
և լաւ բանւոր ըլլայ, բայց պէտք է իր կա-
տարած զործողութիւններուն վրա ալ աղէկ

դատելու և տրամաբանելու կարող ըլլայ: Եթէ
ոչ՝ սովորամոլներու հիներուն նման՝ պիտի
աշխատի, առանց գիտնալու և հասկանալու—
ըրածն ու թողածը:

Երկրագործութիւնան ամենին կարեոր հարցն
է բոյսի սպացանումը, որու մասին չսորվող
երկրագործերը տեղեկութիւն բնաւ չունին.
ըոլոր անոնք, որ ճշմարիտ և յատուկ ծանօ-
թութիւնները չունին այս հարցին վրա, կմշա-
կեն ըոյսերը առանց ճշմարտապէս զիտնալու
ի՞նչ ընենին, չեն գիտեր, թէ ի՞նչու աղը և
պարաներ կզործածեն և այլն: Ուրեմն լաւ
երկրագործական կրթութիւնը անհրաժեշտ է
երկրագործին համար: Բայց երկրագործու-
թիւնը բազմաթիւ ճիւղերու բաժանուած բարդ
գիտութիւն մէ և երկրագործ մը հաղի թէ
ըոլոր ճիւղերուն վրա հմտութիւն ունենայ:
Բնական է, որ յաճախ շատ մը կարեոր խրն-
դիրներ լուծելու համար պիտի շոււարի և զը-
ժուարութեանց պիտի պատահի. այս պարա-
գային՝ պէտք է դիմէ մասնագէտներու, խոր-
հուրդ հարցնէ և միշտ կարդայ երկրագործա-
կան գրեիր ու թերթեր *):

*)**Մանօք.** Պ. Մեծասուրեան նրանակում է «Գուրան»
երկրագործական եւ գիւղանեսական նանկէսը, որը նասս-
ում է մեր երկրագործ հասարակութեան արևետագիտա-
կան զարգացմանը:

Պ. Մեծասուրեան ձեռնարկել է նաև գիւղանեսական
եւ գիտական մը մասնագրակի նրանակութեան, որը
պիտի բաղկանաց բազմաթիւ նատուրենէցի եւ պիտի լրացնէ
մէշ գրականութեան ամենամեծ պականենէց մէկը: Թէ
«Գուրան» է մատենադարանի նատուրենէր զնել ուզողներին

Գործանելուրիւն: Երկրագործական աշ-
խատութիւնները զանազան և շատ տեսակ են.
պէտք է ճշտութեամբ կատարուեն, որոշ եղա-
նակներու ու ժամանակներու մէջ. եթէ միայն
քանի մը օր ուշ մնան կատարուելիք գործերը՝
կրնան կարեոր կորուստներու պատճառ զա-
նալ:

Յաճախ անլարեկառութիւնները, օրի
գատութիւնները կիանգարեն երկրագործի
ծրագիրները, այդ պատճառով պէտք է շատ
գործութեայ ըլլայ, օրը օրին կատարէ աշխա-
տութիւնները և այսօրուայ ընելիք գործը վա-
զուան չի ձգէ:

Կարգ-կանոն: Երբեմն ծրագիրներ կշինէ
երկրագործը, մեծ և կարեոր աշխատութիւն-
ներու կուգէ ձեռնարկել, որոնք երկար ժամա-
նակի կլարօտին և այլն: Բոլոր այս գործողու-
թեանց միջոցին մշակը պարտի կարգով ու
կանոնով գործել, կարգ ու կանոնը լաւ հո-
ղագործի ամենապլիաւոր յատկութիւններէն
մէկն է Անիկա պէտք է իւր բոլոր ծրագիրը
կարգապահութեամբ պատրաստէ և ըլլա միշտ
կարգապահ իւր բոլոր աշխատութեանց, գնում-
ներու, վաճառմանց և ծախսերու ժամանակի:

Խնայողութեան սեր: Հողագործը այն-
պէս պէտք է կարգադրէ իւր ծախսերը, որը
ըլլան հարստութեանը համեմատ: Մեծ շահ
չի ընել անիկա, բայց մեծ ծախսեր ալ ընե-

«Լոյսի» խմբագրութիւնը կարող է տալ ամեն տեսակ կի-
րարիններ:

միք տեղեր չունի. իր ցորենը ալիւրի կվերածէ, իւր պարտեզէն կրադէ պտուղներ ու բանջարեղիներ, հաւացոցէն կստանայ ձուեր և վատիներ, տաւարեն ալ միս ու կաթ: Երկրագործը եթէ խնայողութեան սէր չունենայ, իր ըրած շահը շուտով ալ կսպասի:

Խնայողական սննդուկները մեծ ծառայութիւն կմատուցանին երկրագործին, ուր կրնայ իւր զրածն տօկոսը ստանալ, թէ և ոչ մեծ, բայց ապահով:

Գենել և վաճառել զիմանալ: Շատ պարագաներու մէջ երկրագործը միաժամանակ առետրական է, կանէ կենդանիներ, սերմեր, երկրագործական զործիքներ, մեքենայներ և այլն. կիվաճառէ հատիկներ, կենդանիներ, զանազան բերքեր և այլն: Պէտք է ուրեմն, որ անիկա ունենայ առեւարականի բոլոր յատկութիւնները, այսինքն պէտք է լաւ գնելու և լաւ վաճառելու կարող ըլլայ:

Խոհականութիւն: - Հողագործը անխոնհեմ ցանկութիւն ունենալու չէ մեծ ծախսերով իր հողը բարեկարգել կամ իր ապարակին մէջ նորութիւններ մտցնել:

Պէտք է օտա խոհենութեամբ հաշուէ և որիէ բարենորոգումն չի կատարէ իր հողերուն վրա, եթէ յաջողութեանը մօտաւորապէս վասան և հաստատ համոզմունք գոյացուցած շրջայ:

Եւրոպական խոհեմ երկրագործները կապահովեն իրենց անգարակային շնչքերը, բեր-

քերը, ամբարները՝ կրակի դէմ, ցաները՝ կարկուախ, այնպէս որ չնչին ապահովագինով մը բոլոր արկածներու դէմ ապահովուած կըլլայ:

Գարեգիմ Մեծատուրեան

ՄԵՂՋԻԾԲՈՒԽՈՒԹԻՒՆ

I ՄԵՂՐԱՔԵՐ ԲՈՂԱՅԵՐ ՄԵՂՐԱՔԵՐ են կոչւում այն բոլոսերը, որոնցից մեղուները կարողանում են հաւաքել մեղը պատրաստելու համար նեկտար, ծաղկափոշի, ակնամոմ: Այդպիսի բողսեր բնութեան մէջ շատ կան, բայց մեղրաքերութեան տեսակէտից տարբեր են լինում. մի քանի բողսերից մեղուները հաւաքում են վերոյիշեալ Յնիթերիցն ևս, միւսներից երկուսը, իսկ ոմանցից միայն մէկը: Բոյսերի մեղրաքերութիւնը խիստ շատ պատճառներից կախումն ունի, բայց զիմանը պէս եղանակից և տեղի աշխարհագրական զիքքից: Կարելի է ցոյց տալ մեծ քանակութեամբ բոյսերը, որոնցից ստացում է շատ յաջող բերք:

Մեղուները մեղանում գարնոնը առատ պաշար են հաւաքում պտղատու ծառերից և զաշտային խոտերի ծաղիկներից: Ամառը լաւ պաշար են տալիս բանջարանոցի բոյսերը և լիոներում արքայամորին և այլն: Աշնանը մե-

զուները պաշար են հաւաքում դաշտային ծաղիկներից և մասսամբ էլ բանջարանոցի բոյսերից:

Պաղատու ծառերից ամենից աւելի մեղրաբեր է ճանաչում խնձորենին, պակաս չէ նաև բալենին, գեղձին, տանձենին, ծիրանին և այլն: Բանջարանոցի և պարտէզի բոյսերից մեղրուներին մեզք պատրաստելու համար առատ պաշար են տալրու. սեխը, վարունգը, մեխակը, սալատը, աստղածաղկիկը, լորին, սիսերը, որուրը, մեղուախոտը, աւելուկը, բողկը (թեմսե), կաղամբը, կոտեմբը, շուշանը, ծներեկը, սիստորը, զաֆրանը, շահպրակը, մաղտանոսը, գեղին ստեղղին, զաղարը, խաղողը, ուաղիան, կամսամեթը և այլն:

Բացի սրանցից մեղուանոցի շրջակալքը հարօսում պէտք է լինի միամեայ և բազմամեայ մեղրաբեր բոյսերով, այդպիսիներիցն են միամեայ խոտերից՝ յափրուկը (քչեցա), ապիկոց խոտը (ըրբնու), եղնակեզու, թուրինջ խոտը, խաշխարը, հոդկացորենը (գրչիխա), երիցուկի ծաղիկը և այլն: Մեղրաբեր են ճանաչուած հետեւել բազմամեայ խոտերը. մեղրածուծը (донашե), մարառոյտ կամ սապատը (մեցնիկ), կաթնածտղիկ կամ սատանի ջահրան (օւնանչիկ), զարատիր կամ հազի գեղիք (մատеринка или мать и мачеха), խուլ եղինջը (глухая краинка):

Եթէ մեղուանոցի շրջակալքը ինչ - ինչ պատճաներով ալքատ է լինում մեղրաբեր բոյսերով, այդպիսի գէպօւմ անհրաժեշտ է

մեղրաբեր բոյսեր ցանել: Այդպիսի բոյսեր կարել է ցանել շատ ազատ մնացած հողերում, արտերի միջակներում, առուների ափերին և այլն: Մեղրաբեր բոյսերի կարգին են պատկանում նաև այնպիսիները, որոնք ցանւում են իբրև կերպարուների համար. այդպիսիներիցն են՝ առուստի (եօնչայ) բոլոր տեսակները, կունգան և այլն: Այդ բոյսերը, որոնք ցանւում են յատկապէս մեղուների համար, հետեւեաներն են. հովտաց շուշանը, եղնակեզուն, սարախոտ կամ երուսաղէմի անանուիրը, ծովային բազուկը, շանկեզուն, վայրի ծներեկը, թուրինջ խոտ կամ զարբինջը, եղիսպակը, տարատերի կամ հացի գեղը և այլն:

II Մեղր պահելու միջոց: Փոքր քանակութեամբ մեղր պահելու համար սովորաբար գործ են ածւում ապակիս, կաւեայ և լաւ արձնապակիս ամաններ: Ինչպէս սրանք, նոյնպէս և ուրիշները չպէտք է ուռուցիկ լինեն, այլ զանձնեն, որպէսզի բիւրեղացման և սառչելու գէպօւմ ծաւալող մեծանալիս՝ ամանը չտրաքուի: Մեղրով լի ամանները պէտք է ծածկի թաց մագաղաթով և զնել չոր տեղ: Մեղր լաւ պահելու ամենալիխաւոր պայմանը չորութիւնն է: Մեծ քանակութեամբ մեղր պահելու համար խորհուրդ ենք տալիս գործ ածել թեղոլի փայտից (ցուկօօօ լեռեօ) լինած տակառները: Միայն տակառները պէտք է անպատճառ լաւ չորացրած փայտից շինան լինեն, որովհետեւ մեղրը փայտի ծակութիւներից ամբողջ ջուրը գուրս քաշելու յատկութիւն ունի, որի պատճառով և «ԼՕՑՍ» 1905 թ.

երկաթէ օղակները կարող են թուլանալ և
մեղրը ծորեր: Անա այս պատճառով նախ քան
փայտէ ամանների մէջ մեղր լցնելը, հարկաւոր
է երկաթէ օղակները լաւ ամրացնել, հազ-
ցնել նրա վրա, որպէսզի պատճերը պինդ գրկած
և մասները իրար հետ լաւ միացած լինեն: Մեղր
պահելու համար կարող են զործ ածութիւն նա-
նապէս և սպիտակ թիթեղից պատրաստած
արկղիկներ, որոնք շատ ծանր չլինելու պատ-
ճառով յարմար են տեղափոխութեան համար:

Գ. Դազարեան

ԹԻՇՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ճաւեր հանելը: Բնտանի թոշուններից
մեծ մասի մէջ ճուտեր հանելու ցանկութիւնը
երևան, է դալիք զարնանը՝ մեծ քանակութեամբ
ձուեր ածելու շրջանից յետոյ: Ճուտեր հանե-
լու կամ ինչպէս ժողովուրդն ասում է թուխս
հաստելու ցանկութիւն ունեցող հաւի փորը մեր-
կանում է, վերայի փետուրներն ու ազուամա-
զը թափում են, սովորաբար ինքը թոշունն է
զուրս քաղում և փոռում բնի մէջ իւր փետուր-
ները և ինքն էլ այստեղ մնում: Թուխս նստող
հաւը մի առանձին տեսակ կուղրդային ձարն
է արձակում—կլշխտում է: Հաւի մէջ թուխս
նստելու ցանկութիւն զարթեցնելու համար,

դնում են մի քանի ձու բռնկալ և նստեցնում
են այստեղ թուխսը, լաւ կլինի եթէ այն
թուխսամերը տախ (գահ, զառթ) հաւ լինի,
որ ուրիշ անգամ ևս ճուտեր է հանել: Խոր-
հուրդ են տալիս նոյնպէս թուխսներին կանե-
փի և եղինջի սերմել տալ: Այս ցոյց առւած
միջոցներով թուխս նստելու ցանկութիւնն ա-
մելի յաջող է զարթնում հնդուհաւրի մէջ:
Եթէ մէկը կամնառում է որ թուխս ընկած հա-
ւը թողնի իւր թուխս նստելու ցանկութիւնը,
պէտք է օրեկան մէկ-երկու անգամ լողացնել
ջրում և փակել աքաղաղի հետ միասին մի
այնպիսի տեղ, ուր ոչ մի յարմարութիւն չլի-
նի թուխս նստելու: Եթո հաւերն անժամանակ
ցանկութիւն են յայտնում թուխս նստելու,
զորա առաջն առնելու համար, պէտք է փակել
նորան մի մութ, սառն տեղ և թողնել այդտեղ
2—3 օր քաղցած: Թուխս դնելու ձուերը պէտք
է գրեթէ միաժամանակ ածած լինեն, որպանե-
տել թարմերից աւելի շուտ ճուտեր զուրս (1—12 ր.),
բայց ոչ լուսաւոր տեղ, և պաշտպանած պէտք
է լինի փոշուց: Թուխսի համար ամենալաւ
ձուն համարեամ է 1—2 շաբաթուայ ածած
ձուերը, երբէք երկը շամաթուանից հին չլի-
նի, ըրբան թարմ, այնքան լաւ: Պէտք է քննո-
րել այսպիսի հաւի ձուեր, որոնք խոշոր և
ծանր են, ունեն զարգացած կուրծք: Այսպիսի
ձուերից զուրս եկած ճուտերը առոյզ կլինին,
միւս տեսակ ձուերից կստացուին
թուլակագմ ճուտերը, որոնք շատ անգամ դժուար

կմեծանան, թուխսի տակ դնելիք ձուերը պէտք
է կարծր, կեղեմի վրա կոծիծներ չունեցող ձուեր
լինեն: Ցանկալի է, որ թռչունների տակ միայն
բեղմանաւորուած ձուեր գրուեն, բայց դժուար
է, որովհետեւ չէ կարելի այնպիսի ձուերը միւս
տեսակ կամ հոտած ձուերից որոշել Չուեր-
ըից դժուար է որոշել նաև ապագայ ճուռերի
սեռը: Սովորաբար թուխսի տակ պէտք է զնել
այնքան ձու, որքան կարող է նա տեղաւորել
իր տակը: Հաւի, բաղի լայտահաւի (Ասքարա)
տակ կարելի է իրենց ձուերից տեղաւորել
մատառապէս 15 հատ, սազի տակ իր սեփա-
կան ձուերից կարելի է զնել 10 հատ, իսկ
հաւի տակ սազի ձուաններից միմիայն 4-ը
կարելի է զնել: Տարրեր թռչուններ տարրեր
չափով են նստում իրանց ձուերի վրա:
Հաւը 21 օր Փասիանը . . . 27 —
Հնդուհաւը . . 28 — Սազը 29 —
Խայտահաւը . . 27 — Սիրամարգը . . 30 —
Բազը 29 — Աղաւնին 18 —

Բայց այդ ժամանակամիջոցները քիչ կա-
րող են փոխուել ձուերի թարմութեան առ-
տիճանի և թուխսի տակ նղած ժամանակ նո-
ցա ունեցած տարութեան համաշափութեան
պատճառով: Զուերից ճուռեր զուրս գալու
ժամանակամիջոցը կախուած չէ այն բանից,
թէ թուխսը ինչ տեսակ թռչուն է: այսպէս օ-
րինակ (հաւ է թէ ննդուհաւ, այդ միենոյն է)
ընալի (հաւ է թէ ննդուհաւ, այդ միենոյն է)
որովհետեւ վրա 21 օր միայն կարելի է
հաւել, որից յևսոյ զուրս կզան ճուռերը: Ըս-
տել, որից յևսոյ զուրս կզան ճուռերը: Ըս-

իբրեւ ամենալաւ թուխս հաւի ձուերից ճու-
ռեր հանելու համար: Թուխս նստած ժամանակ
ընից ոչ ճեռու պէտք է լինի ջրի և կերակու-
րի պաշար, նաև մի փոքրիկ կոյտ չոր աւազ,
որտեղ թաշունը կսկսէ փորփել: Թուխս նրա-
տած ժամանակ թաշունը պէտք է շատ հան-
գիստ լինի, այդ պատճառով բունը պէտք է
տեղաւորել ընդհանուր թռչնաբնից ճեռու և
ազատ պէտք է լինի շոգերից և պայծառ ա-
րեգակից: Եթէ թխարները (արկղները) թուլ
քիչ են, պէտք է բաց թողնել, բայց եթէ շատ
են, պէտք է ծածկել և օրական երկու անգամ
հանել կերակրելու համար՝ առաջառ և երեկոյ,
ամեն անգամ 10 րոպէ: Կերակրելիս մանա-
ւանդ առանձին ուշադրութիւն պէտք է դարձ-
նել ննդուհաւերի վրա, նմանապէս և թուխս
նստելու վերջին օրերում ընից զուրս գալուն,
եթք սովորաբար սազմի համար թուխսի այդ-
պիսի կարճ ժամանակուայ բացակայութիւնը
օգտակար է: Թռչունին ընից վերցնելիս պէտք
է նայել, որ այնտեղ միջանունը չլինեն և թուխս-
սի տակ կոտրուած կամ չափչախուած ձուեր
չլինեն: Կարեւոր գեպքում կեղաստուած բունը
պէտք է փոխարինել մի ուրիշով: Եթէ պատա-
հարար թուխսը ստակի, կտրելի է ձուերը
զնել մի ուրիշի տակ, միայն այդ փոխագրու-
թիւնը շատ շուտ պէտք է կատարել, որովհետ-
եւ նոյն խակ առաջնին երկու շաբաթում ձուե-
րը միայն մի քանի ժամ հազիւ կարողանուեմ
են պահպանել իրանց կենսունակութիւնը, նոյն
խակ ոչ չոր բարեխառնութեան մէջ եթէ

թուխսը երկար ժամանակ բացակայի, ձուերը
կարող են անմիջապէս ստոչել:

Երևանական եղանակով ձուեր հա-
նելը: Վերջերս բելգիական մի գիւղատնտես ա-
ռաջարկում է ենթանիների աղբի միջոցով ար-
հստական եղանակով ձուերից ճուտեր հանել
Սա մի շատ հասարակ միջոց է և յիշեալ գիւղա-
տնտեսի ասելով խիստ զործնական: Պէտք է
վեր առնել սպիտակ թիթեղից ոչ շատ խորը
մի աման: Յատակն և կողքերը պէտք է ծած-
կել բրդէ ցնցուիներով և ձուերը համաշափ
կերպով պէտք է դասաւորել այդ ամանի մէջ.
այս բոլորից յիտոյ ամանը պէտք է ծածկել
թիթեղեայ կափարիչով կամ բարակ քարէ
տախտակով, միայն ծածկոցի և ձուերի մէջ
եղած տարածութիւնը մի սանտիմութից պա-
կաս չպէտք է լինի: Վերջապէս հարկաւոր է
աղբի մէջ փորել մի փսո կէս մետր խորու-
թեամբ, որի մէջ պէտք է դնել ձուաներով
ամանը, որից վերնից զգուշութեամբ ծած-
կել աղբով: Աղբի տաքութեան աղղեցութեան
տակ սաղմերը սկսում են զարգանալ: Քսանե-
րորդ օրը պէտք է բաց անել ամանը և տես-
նել, թէ արդիօք ձուաները ձուերի կճեպը չեն
ծակել, եթէ ոչ, մի օր սպասել և յիտոյ նորից
նայել, մինչև որ ճուտերը զուրս գան: արհնո-
տական եղանակով ճուտեր հանելու համար
կատարած փորձերը ցոյց են տախտ, որ այս
եղանակը միւս բնական եղանակի համարած
առաջարկ առաւելութիւններ ունի: Եթէ ձուերը
զնում են հաւի տակ, շատ անդամ ճուտերը

սատկում են փոփոխական բարեխանութիւ-
նից, երբ թուխսը երկար ժամանակ հետանում
է բնից, մինչդեռ աղբի մէջ միակերպ բարե-
խանութիւն է տեղի ունենում: Ճուտեր հա-
նելու այս արհնոտական եղանակը չպէտք է
անուշագրութեան թոդնել, պէտք է անպատ-
ճան փորձեր կատարել, որովհետեւ անյաջողու-
թեան դէպում, բացի ձուերի փշանալուց,
որից վեաս չի կարող տեղի ունենալ: Եթէ
այս եղանակով ճուտեր հանելը բարեյաջող
հետեանքներ ունենայ, անկասկած շուտով մնա
ծաւալ կտտանայ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ,

Ո՞ւմ յայտնի չէ, թէ որքան դժուար է
զոյութեան կուրը, ով չգիտէ, թէ որքան ծանր
է օրական ապրուստ ձեռք բերելը: Եւ այդ
դժուարութեան ու ծանրութեան լծի տակ
տնրում են հազարաւոր ու միլիօնաւոր մար-
դիկ, անքում է մողովրդի մեծամասնութիւնը:
Ի՞նչ անել, ովհետից օգնութիւն խնդրել, որանդ
փրկութիւն գտնել: Մեր ժամանակներում հը-
րացներ չեն կատարւում, երկնրից մասնանայ
չի թափում, ունենոր մարդիկ եւ չափազանց
քարասիրտ են, չափազանց հսական: Ի՞նչ
անել:

Ահա մի ծանր հարց, որի լուծումը կարելի է գտնել միայն համերաշխութեամբ, փունաղարձ օդութեամբ: Ի զուր չէ ասուած, թէ «թշուառին միշտ թշուառն է կարելից», և փորձերը ցոյց են տալիս, որ միացած ոյժերով կարելի է շատ բաներ իրագործել, շատ բարիքներ առաջացնել: Այն, ինչ որ անհնարին է անհնարի համար, շատ ճշշտ իրագործելի է դասում խմբերի, հաւաքական ոյժերի համար:

Ահա հէնց դա է պատճառը, որ քաղաքար-կիրթ երկրներում, զարգացած ժողովուրդների մէջ, այնքան աճում բազմանում են պէս-պէս կազմակերպութիւնները պէս-պէս նպատակ-ներով:

Այդ տեսակ կազմակերպութիւնների շար-քին են պատկանում և սպառող ընկերութիւն-ները, որոնք կամաց կամաց զարգանում են նաև Ռուսաստանում, հավանաւորութիւն գլու-նելով կառավարութեան կողմից:

Սպառող ընկերութիւն *): —Դա մի կազ-մակերպութիւն է սեփական խանութով, որ ձգտում է իր անդամներին էժան գնով լաւ-ապահովեր մատակարարել՝ ստելիք, հագնելիք և այլ հարկաւոր ռուրդականներ: Բայց այդ բոլորը չեն նա ապատում է իր անդամնե-դեռ բոլորը չեն: Նա ապատում է փոքրիկ ինա-րին վաճառականների շահագործումից և նա-րաւորութիւն է տալիս փոքրիկ ինայոդու-թեամբ սեփականատէր զանալի: Մակայն այդ-

*) Այդ մասին աւելի մանրամասն գրել են «Մօսկվա լուգում» եւ անցեալ տարուայ «Ըստի» էջերում:

քան գեղեցիկ գեր կատարելու համար սպա-սող ընկերութիւնը պէտք է կազմակերպուած լինի կենսունակ հիմքերի վրա, խելացի ձևով, նպատակայարմար միջոցներով: Հակառակ դիպ-քում սա կարող է հիմաթափեցնել իր հիմնա-դիրներին:

Սպառող ընկերութիւնը պէտք է ինի հանրամատչելի: Այդ պատճառով պէտք է բաժինները (պայշեր) էժանագին անել —օրի-նակ 3—5 ըուրիմ և զումարը վերցնել ոչ թէ միանուագ, այլ մաս-մաս: Անզիւյում մնալու-նուած է բռուական խելացի մի ձեւ, ապահով սպառող ընկերութեան անդամ գարձող իրա-քանչիւր անհատ սկզբում վճարում է միայն մի շիլլինգ, այսինքն 40—50 կոպ., իսկ մնա-ցածը մաս-մաս, ամսէ-ամիս: Շատ գէպիերում էլ յետազայ վճարումները զուրս են զալիս ան-դամին հասանելիք շահից —դիվիդենտից: այդ-պիսով միայն 40—50 կ. վճարով մարդ կարող է սպառող ընկերութեան անդամ, խանութի-րաժնեատէր զանալի:

Ընկերութեան բոլոր անդամները պէտք է ունենան հաւասար իրաւունքներ, որպէսզի զրանով զարգանայ ընկերական համերաշխու-թիւնը և վերանայ նրա զանակարգային նա-խանձն ու տարբերութիւնը:

Կանայք էլ պէտք է հաւասար իրա-ւութեան վայելին աղամարդկանց եւս, ո-րովհեակ նրանց ձեռքին է տան ամբողջ արն-տեսութիւնը, զիսաւորապէս նրանք են նար-կաւոր նիւթեր զնողը կամ զնել տառըր, հե-

տեապէս նրանք աւելի շատ գործնական օգուա
կարող են տալ քան թէ տղամարդիկ: Իրբէ
տպացոյց կարելի է վեցնել Անդիման, ուր
կանայք ահազին զեր են խաղում սպառող ըն-
կերութիւնների գործերում:

Խոլոր ասպամեները հաւասար ձայներ
պիտի ունենաս, չնայելով բաժինների քա-
նակութեանը: Եթէ դրա հակառակը լինի, այ-
սինքն եթէ շատ բաժին ունեցողը շատ էլ
ձայն ունենայ, այս ժամանակ ընկերութեան
գործերը վերջ է վերջոյ կկենցընանան մի
քանի հարուստների ձեռքում: միւս անդամները
քորցնեն իրանց հետաքրքրութիւնը: առաջ
կգան զգոնութիւններ, որոնք կարող են նոյն
բոլ քայլայման ննիմարկել ընկերութիւնը:

Զուտ արդիւնքը պէտք է բաժանել զբ-
նած ապրանելի հասակի հաւանաս, այսին-
քն արգիմքից որոշ գումար պէտք է յատ-
կացնել պայերին իրեն դրամարյակի տօկոս, մի-
**մասը պահեստի գումար զարձնել, իսկ մա-
տրով բաժանել այնպէս, որ ընկերութեան
խանութից շատ ապրանք գնողը շատ էլ փող
ստանայ: Օրինակ, եթէ անդամներից մեկը աս-
րուայ ընթացքում 100 ր. ապրանք է գնել,
իսկ միւսը 50 ր.—այդ գէպքում առաջինը եր-
կու անգամ էլ աւելի բաժին պէտք է ստանայ
զուտ արգիմքից:**

Սպամենքը պէտք է ծախին միացն կան-
իմիկ փաղով, վարձով (կրեղիտով) կամ ուրիշ
խօսքով ասած նիսիա տուած ապրանքը կո-
րած պէտք է համարել եթէ չկայ վատանելի

երաշխաւորութիւն: Եթէ սպառող ընկերու-
թիւնը այդ ճանապարհի վրա կանգնի, շուտով
իրա ունեցածը կրամանէ սրան-նրան և ինքը
կմաս առանց գրամագիտի, որով և ստիպուած
կլլնի իր գոյութեան վրա խաչ դնել:

— Եւրաքանչիւր սպառող ընկերութեան
խանութի վրա, իրաւացի կերպով նկատում է
պրօֆ: Օգերով, պէտք է նշանագրուած լինի
հնուկեալ նշանաբաննը.

— Վարկով տուուուր անելը կարող է
կարծանել ընկերութեան զայտըինը:

* *

— Գեղեցիկ, զուցե՛ բացականչեն ընթեր-
ցողներից շատերը, բայց զործի հեց սկզբում
հարկաւոր է զրամագլուխ: որտեղից ձեռք բե-
րել, հարկաւոր է իշխանութեան թոլլատու-
թիւն-ինչպէս և ումիից ստանալ: Այն, իրա-
ւացի հարցեր են գրանք, բայց հնշառ յուծելի:
Նախ մարդ որբան էլ որ աղքատ լինի կկա-
րողանայ շաբաթական մի քանի կոսէկ ինսյան
և 3—5 րուբլի զրամագլուխ կազմել և երկ-
րորդ՝ համերաշխ ընկերակցութեամբ կարելի է
ստանց դրան էլ զործը գլուխ ըերել: Ահա թէ
ինչպէս, սպառող ընկերութիւն կազմել զան-
կացող մարդիկ, պայմանւորուում են մի կամ
մի քանի վաճառականների հետ, որպէսզի
դրանք սովորականից պակաս զեղչով բաց
թողնեն իրանց ապրուստի համար անհրաժեշտ
դիւթենէնները, իսկ իրանք պարտաւորուում
ն պայմանաւորուած ժամանակի ընթացքում

սպառել այդ ապրանքները, կանոնաւոր և
մաս-մաս վճարելով համապատասխան ար-
ժեքը: Հենց այդ զեղչի գումարն էլ զառ-
նում է նրանց սեփական խանութիւն սկզբ-
բնական գրամագլուխութ: Այսինքն պայմանաւո-
րուած քանակութեամբ առլանքներ սպառե-
լուց յետոյ ընկերութեան անդամները վաճա-
ռականի մօտից վերցնում են համապատաս-
խան զեղջը և գրանով բաց անում սեփական
սպառողական խանութը:

Այդ ձևը գործազրել են շատ ընկերու-
թիւններ և դրական հետևանքի հասել: Հե-
տուն չփնանք, օրինակ վերցնենք հէնց Ռու-
սաստանի կենաքից: Մոսկուայի «Փոխազարձ
օգնութիւն» ընկերութիւնը այդ ձևով մի տա-
րրայ ընթացքում ստացել է 3000 ըուբ. զեղջ:
Նոյն ճանապարհով է հիմնուել Պետերբուրգի
«Թնայորդութիւն» անունով սպառով ընկերու-
թիւնը, որը այնքան արագ կերպով զարգացրել
է իր գործունէութիւնը:

Առաջ ընկերածից պարզ երկում է, որ բարի
ցանկութիւնն ու համերաշխութիւնը կարողեն
հարթել փողային հարցի գժուարութիւնը:
Մնում է ուրեմն սպատաճաւոր թոլլատու-
թիւն ստանալը:

Դրա համար ընկերութեան հիմնադիրները
հաւաքական ստորագրութեամբ տեղական նա-
ճանգապահն միջոցով խնդիր են տալիս նկր-
քին գործերի մինիստրի անունով հաստատու-
թիւնն ներկայացնելով իրանց մշակած կանո-

նադրութիւնը *), Գործը հետացնելու և ա-
րագացնելու համար աւելի լաւ է ներկայացնել
արդէն հաստատուած մի կանոնագրութիւն՝
սպագային թողնելով նրա ցանկալի փոփո-
խութիւններն ու լայցումները:

Այդ ճանապարհով հաստատութիւն ստա-
նալուց յետոյ ընկերութիւնը կարող է սկսել
գործը, բայց միշտ բարձր պահելով հաւասա-
րութեան և համերաշխութեան գեհ գրօշակը:
Դրանք են եղել ընկերութեան հիմնաքարր,
զրանք ել պէտք է զարնան նրա գոյութեան
շարժիչն ու ոյժը:

Ե. Թոփէկան

Ի՞նչ Պիտի Անէ Կինը

Կեանքի պայմանները հետզհետէ աւելի ու
աւելի գժուարացնում են ապրուսը, աւելի
զօրեղ, աւելի լարուած մրցում են պահանջում
մարդկանցից, ուստի կինն էլ իբրև մարդկա-
յին հասարակութեան անդամ, պէտք է նախա-
պատրաստի գոյուրինան կոռուի համար:

Այդ կառում միշտ էլ յալթող հանդիսանում
են աւելի ուժեղները, ընդունակներն ու
ճարպիկները, իսկ թոյլերը յետ են մնում,

* Ցանկացածներին կարող են նպասեն, ուղարկելով քէ
խնդրագի եւ քէ կանապարտիքան օրինակներ:

նեղութիւն կրում և սարկալան կեանքի ենթարկում: Երկար գարերի ընթացքում այդպէս է եղել կինը: Հասարակական որոշ պատմանների շնորհիւ նա յետ է մասցել տղամարդուց, զրկուել է աղատութիւնից, կորցրել է շատ ու շատ արտօնութիւններ և զարձել գրեխաւորապէս սեսական հաճոյքի առարկայ: Բայց այժմ, երբ զիտութիւնը իր լուսաւոր ճառագայթները սփռել է ամեն կողմ, երբ առաջարկմութեան ու աղատութեան տեսչը այնքան գորեղացել է հասարակութեան բոլոր խաւորում, կինը պէտք է զգտի ջախչախել իր դաւադր սերկուրեան շրաները, պէտք է դիմէ դէպի աղատուրիւն:

Այդ նպատակին հասնելու համար նա պէտք է աշխատի տնտեսապէս անկախ զիճակ ստեղծել: Մինչէ այժմ մեզանում տիրապետող կարծիքն այն է, թէ կնոջ ապրուսաի գիճաւոր ճանապարհը ամուսնութիւնն է: Եւ անա մի կտոր հացի համար տեղի են ունենում բոլոր վիճակներում անհամապատասխան ամուսնութիւններ, որոնց հետեւանքն է մինում ընտանեկան անվերջ գոթորիկներ, դժբաղդութիւն ու գժտութիւն: Անհրաժեշտ է որ առաջ դրա առաջն առնել և այդ հաւցում ամենից շատ աշխատողն ու բաղսրողը կինը պէտք է լինի:

Բայց ի հարկէ, զատարկ բողոքը արժէք չունի, եթէ գրա հետ կապուած չեն զրոժնական միջոցներ: Կինը ինքը պէտք է լինի իր զրութեան մասին հոգացողը, իր վիճակը բարոքողը, ուստի և նա գեռ մանկական հասակից

պէտք է նախապատրաստի անտեսապէս անշկախ կեանք վարել, նա չպէտք է խորչի աշխատանքից, միշտ աշք պատաջ պէտք է ունենալ, որ ամուսնութիւնը փոխադրձ աղատ սիրոյ հնտիանը է և ոչ ապրուսաի միջոց, որ ամուսնութիւնը հաւասար չափով ընդունակ պէտք է մինչև միմեանց հասկանալու և օգնելու, որ ընտանեկան երջանկութեան հիմքը՝ փոխադրձ սէրը օգնութիւնն ու համերաշխութիւնն է: Հէնց այդ տեսակէտից անհրաժեշտ է, որ կինը ձգտի րէ իր ընդունակութիւններով, րէ զիտուրեամբ և րէ գործունեութեամբ յիւ ընթա տղամարդուց:

Մեզանում կանանց գաստիարակութիւնը զեա սխալ հիմքի վրա է գրած: Շատ շատերը համոզուած են, որ կինը միայն տղամարդու հաճոյքի համար է ստեղծուած, որ նրան պէտք է զաստիարակել այդ հաճոյքի պահանջների համեմատ: Ահա այդպիսի սխալ համոզունքն է պատճառը, որ շատ ընտանիքներում աւելի լաւ են համարում իրանց աղջիկներին գեղեցիկ շարժուել ու հագնուել լաւ պարել ու նուազել սովորեցնել, քան թէ մի որ և ե զբական գիտութիւն, որ կարող է պէտք գալ գործնական կեանքի սկ օրերում:

Իսկ եթէ չի աջողուում սպասած ամուսնութիւնը կամ մի որ և է զժբաղդութիւն է պատահում աշխատաւոր տղամարդուն, ինչ անէ կինը, ինչով կերակրուի և կերակրէ իր զատակներին: Այդ ժամանակ բաց են նրան պաջ կատարեալ թշուառութեան դոները, եթէ

նա ընդունակ չէ աշխատելու, ապրուստ հայթայթելու Ուրեմն իւրամանչիւր կիև ամենից առաջ պէտք է աշխատի այդ ընկունակուրիւննին ձեռի բերել, եթէ չի ուզում պատահարների գէպօւմ թշուառութեան սաոր վիճակին ենթարկուել:

Ենութիւնը պարզեց է կնողը մի այնպիսի կոչում, որից զուրկ է աղամարդը: Նա զաւակներ է աշխարհ բերում և նրանց կրթում մեծացնում: Նրա ձեռքի տակով է անցնում մատաղ սերունդը, ապագայ մարդկութիւնը մերեմ անհրաժեշտ է, որ նա նախապատրաստուած լինի այդ կոչման համար: Դպրոցական ուսուցիչներից մենք պահանջում ենք մանկավարժական ընդունակութիւն, կրթական ցենտ, իսկ մայրերից ոչինչ: Նրանց առաջ նոյն իսկ փակում ենք գիտութեան զաները. շատ անդամ նոյն իսկ հասարակ գրագիտութիւն սովորելը շուայլութիւն ենք համարում:

Ահա այդ հակառակութեան, այդ անարդարութեան գէմ պէտք է զինուել բոլոր ոյժերով և այդ զիմագրող շարքերում ամենից առաջ պէտք է կանգնեն իրանք կանայք: Խրաբ ամեն կերպ պէտք է աշխատն լայն գիտարիւն ձեռի բերել եւ դրանու արժանաւոր կերպով ծառայել մայրական կոյմանը:

Կինը էլ տղամարդու նման որոշ ազգութեան անդամ է, ուրեմն նա պէտք է ընդունակ լինի իրագործել իր պարտաւորութիւնները այդ ազգի գերաբերմար: Նա պիտի իմանայ իր ազգի գերաբերմար: Նա պիտի իմանայ իր ազգի անցեալն ու ներկան, ցաւերն

ու կարիքները եւ ամեն կերպ ձգտի նրան օգնութեան հասնել:


Բացի զրանից կինը իբրև անհատ պատկանում է այն մեծ ընտանիքին, որի անունն է մարդկութիւն: Նա ունի բարոյական որոշ պարտաւորութիւններ այդ ընտանիքի վերաբերմարը, ուստի շարունակ պէտք է հետաքրքրութիւնի ընթացիկ հասարակական խնդիրներով եւ իր ջանքը գործ դնել մարդկային ընդհանուր առաջադիմուրեան համար:

Մի խօսքով, կինը իբրև մարդ—արարած տղամարդու հետ համահաւասար չափով պէտք է կատարելագործէ իր ոյժերն ու ընդունակութիւնները, պէտք է ձգտի զէպի առաջադիմութիւն և անկախութիւն:

Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ է տոկունութիւն և անդուզ գործունէութիւն: Իր զրութիւնը բարւորելու համար կինը ամենազմանուր զէնքր պէտք է զարձնէ ինքնօգնութիւնը՝ միշտ հուսատացած լինելով, որ խելացի ինքնօգնութիւնը հրաշճներ կարող է զործել:

Ե. Թոփէեան





ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

(Հայկ, տառերի գիւտի 1600-ամեակի առիրով)

Զորս հարիւթ երկուոն ինն թուականի
ձմեռն էր: Հայոց Մեծեկան ամիսը նոր էր
մօտենում իր կէսին և Սրարատեան մեծ զաշ-
տի վրա գեռ տիրում էր սաննամանիքների
մեսերութիւնը: Բայց մարդիկ ցուըրտ և անրդ-
գայ չէին բնութեան պէս: Նըանց մէջ սաստիկ
յուղունք էր նկատում: Պատահել էր մի
տխուր գէպք:

Վերջին տասը տարիների ընթացքում հայ
ժողովութերը մեծ մեծ կորուսաներ էր ունե-
ցել: Կորցընց թագաւորութիւնը, վերջացաւ
Սրակունիների տոհմը, կաթողիկոսական իշ-
խանութիւնը բլուեց Գրիգոր Լուսաւորչի տոհ-
մից, յանձնուեց վատ և արտաւոր օտարազ-
գիների: Վեց ամիսը գեռ նոր էր անցել, ինչ
խորին վասի մէջ մեռել էր զահից հեռացրած
հայոց կաթողիկոսը, Սահակ Պարթևը, որի
հետ վերջանում էր Լուսաւորչի հոչակաւոր
տոհմի հոգեւոր ամբապետութիւնը: Իսկ այժմ
այս կորուսաը, վերջինը, որ տաճում էր իր
հետ գեղեցիկ յիշատակները Զգում էին, որ
հայ աշխարհից վերանում է մի սուրբ, մի
նուիրական բան: Հաւաքուել էին մարդիկ,
մտածում էին, թէ Հայատանի մէջ ուր պիտի

սրոնել այն մի ափ հողը, որ այդ մարմինը իր
ծոցում ամփոփելու պատիճն ունենայ:

Եւ այդքան սիրուած և յարգուած հան-
գուցեալը իշխանաւոր չէր, մեծանուն մի տոհ-
մից չէր վարում իր ծագումը, պատերազմի
հերոս չէր կամ հարուստ մի կալուածատէր,
աշխարհ կառավարող, հրամանատար չէր եղել
ոչ իսկ այս աշխարհի հզօրներից մէկն էր:
Մօտ ութսուն տարեկան մի ծերոնի վարդա-
պետ - վարդապետ և ոչ իսկ եպիսկոպոս, - հա-
սարակ գիւղացու որդի - Մեսրոպ Մաշտոցն էր
նա, առաջին հայ ուստացիչը, որ գործել էր
երեսուն և հինգ տարի և այժմ, երբ մահը
խել էր նրա ձեռքից թուղթն ու գրիբ, հա-
յոց աշխարհը, առաջին անգամ իր պատմու-
թեան սկզբից, գլուխ էր իջեցնում այդ նոր,
մինչև այդ չեղած գործչի առջեւ:

Բայցուել էր վեստրուարեան օրը, բայց էին
և Վաղարշապատի գոները: Մարգկային զլուխ-
ների մի ամբողջ ծով զանդաղ, յորձանքներ
տալով, զուրս է թափւում: Նարժւում էր ծո-
վացած, լուրջ և մտախոհ ամբոխը: Պլազում
էին ճրագներն ու ջահերը, եկեղեցական եր-
գեցողութիւնը տիրապէս ծաւաւում էր պատ
օդի մէջ: Շանապարհին գիւղական խմբեր էին
միանում հանդիսին:

Առաջին հայ ուստացչի զագալը շրջապա-
տել էին նրա աշակերտները: Դրանք էին ա-
մենից շատ վշատցած, դրանք էին վէճ բացել
թաղման տեղի մասին: Վահան Ամատունին էլ
այս աշակերտներից մէկն էր: Բնական էր, որ

նա կամենար իր սեփական կալուածում թաղել իր սիրելի ուսուցչին: Իսկ նրա կալուածը այդ գաշտից քիչ բարձր էր գտնուամ — Օշական ամրոցը: Հայոց հազարապետը թաղման հանդիսի գրուին անցաւ: Նրա հետ էր այն ժամանակուայ առաջնակարգ և ազգեցիկ աղոնուական տան ներկայացուցիչը՝ Հմայեակ Մամիկոնեան: Վարդանի եղբայրը:

Դաշտը տեղի տուեց քարքարոս բյուրներին: Արագածի շղթայի առաջին ոտներն էին: Բազմութիւնը հասաւ ամենամեծ ըլքի գլուխը, իշխան Քաղաք գետի մեծ ձորը, նորից գէպի բարձր դիմեց: Օշականն էր: Այդտեղ իշեցրին զագալը, այդտեղ եկեղեցին հըաժեշտ տուեց իր վարդապետին, իսկ ժողովուրդը վերջին անգամ երկրպագեց իր ուսուցչին:

Գերեզմանը փակուեց: Եւ այն օրից Օշականի հոգը պահում է իր ծոցի մէջ ու Մեսրոպին *):

**

Անցան դարեր: Ժամանակը քայլայեց Վահան Ամատունու շինած տաճարը, ուստի Փիլիպպոս Կաթողիկոսը 1639 թուին ձեռնարկեց նրա նորոգութիւնը: Գէորգ Կաթողիկոսն էր կողմից հիմնական վերաշնութեան ենթարկեց այդ նորիրական տաճարը, որը և իր այժմեան տեսքն ընդունեց:

* Մանօք. 1:5, «Ս. Մեսրոպ» եր, 1-7, 1904 թիւ:

Օշական՝ հասարակ գեւդ չէ գա, այլ մի նուիրական վայր, որովհետեւ այնոնք է հայութեան առաջին ուսուցչի գերեզմանը:

Օշականի եկեղեցի՝ սովորական տաճար չէ գա, այլ մի մեծ սրբատեղի, որովհետեւ նրա ծոցումն է հանգչում ու Մեսրոպը՝ որ հայկական այրութէնն հնարեց և դրանով քաղաքակրթութեան մի նոր գուռ բացեց:

Մեծ էր նրա կատարած գործը, մեծ պէտք է լինի և յիշատակը: Մեծ ու անմոռաց:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

ԴԱՅԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՈՎԱԿԻՑ

(Մահուան 25 ամեակի առիրով)

Դրիմ թերակզու գեղատեսիլ անկիւնում ապրում էր մի ընտանիք Այվազովսկից անով: Ընտանիքի հայրը կաթողիկ էր, իսկ մայրը լուսաւորչական: Անա այդ ամուսնութիւնից ծնան հինգ զաւակներ, որոնցից երկուսը իրանց հանձարով մեծ անուն հանցին և փառք ու պատուի արժանացան՝ մէկն իրեւ աշխարհանոչակ ծովանկարիչ, իսկ միւսն իրեւ գրական գործիչ և հոգեւրական:


Յովհաննէս Այվաղովսկիլյ—ահա առաջին
անունը, որը միշտ էլ պարծաճողով՝ յիշուում
ամեն մի հայի կողմից:

Գաբրիէլ Այվաղովսկիլյ—ահա երկրորդ ա-
նունը, որի հնա կապուած են հայ գրականու-
թեան ու անցեալի քաղցր յիշողութիւնները:

Մի այլ—պատշաճաւոր առիթի թողնելով
Յովհաննէս Այվաղովսկու կենսագրութիւնը,
վերցնեաք այժմ նրա եղբօրը և տեսնեաք, թէ
նա ինչ պայմաններում կըթուեց և ինչպէս
նախապատրաստեց այն զրիչը, որը տուեց
մեզ Կըլիտլի առակների գողարիկ թարգմա-
նութիւնը:

Այվաղովսկին ծնաւ 1812 թ. մայիսի 12-
ին: Նրա ծննդեան անունն էր Ալեքսանդր:
Փոքրիկ Ալեքսանդրը զեռ 5 տարեկան էր, երբ
նրան Հայոց ծխական դպրոցն ուղարկեցին
զրագիտութիւն սովորելու: Բայց ծխական
զպրոցի ուսումը չեր կարող բաւարար համա-
րուել, ուստի հոգածար հայրը 12 տարեկան
Ալեքսանդրին տարաւ Ղարանու Բաղար և աւ-
շակիրտութեան առաջարկեց ո, իջմածնի միա-
րան Մանուէլ վարդապետ Կիւմուշխանցու մօտ,
իսկ երբ վերջինս մերժեց, տարաւ Մխիթա-
րեան միարան Մինաս Վ. Բժշկեանի մօտ,
Այրակս երկու տարի մնարուց յիշոյ Ալեք-
սանդրին 1826 թ. ուղարկում են Վենետիկի ս.
Ղազարի վանքի գլուխում սովորելու:

Մինչ 30 տարեկան հասակը Այվաղովսկին
մնում է այդտեղ և Հ Մկրտիչ Աւգերեանի
նման հմուտ ուսուցիչների ղեկավարութեամբ



Գաբ. արքեպ. Արփաղովսկի

Տ. 0805 • 1905 Ինք.

լայնացնում է իւր մտաւոր հորիզոնը, հարբառացնում է իւր գիտութեան պաշարը: Միշնակարգ ընդհանուր ուսումը վերջացնելուց յետոյ նա նուիրում է աստուածաբանական բարձրագոյն գիտութեան և բացի գրանից հիմնովին իւրացնում է երրայերէն, պարսկերէն, իսկ նոր լեզուներից՝ խոալերէն, ֆրանսերէն, ուսւերէն և թիւրքերէն: կարգում ու հասկանում էր նաև գերմաներէն ու անգլիերէն:

Այդպիսի բազմակողմանի կրթութիւնը մի մեծ գրաւական էր նրա բեղմաւոր գործունէութեան: Նա կուսակրօնութիւն է ընդունում Թարթիէլ նոր անուան հետ և 1842 թուականից մինչեւ 1848 թ. Միշիթարեան միաբանութեան ամենաեռանդուն, ամենագործունեայ անդամ գառնում: Նա Միշիթարեան զպոցում աւանդում էր արեելեան և եւրոպական լեզուներ, աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն, 1843 թուին հիմնում և խմբագրում է «Բազմավիճ» ամսագիրը: բացի այդ բոլորից նա արբանօր 6 խորհրդականներից մէկն էր և ընդհանրական ստենագմիլ: Պարզ է, ի հարկէ, որ նա այդպիսի գիրը ու նշանակութիւն ստացել էր ոչ յանկարծ, այլ աստիճանաբար, մատոյած ծառայութիւնների համատառ: Նա դեռ 1836 թ. հրատարակել էր իր առաջին աշխատութիւնը՝ «Պատմութիւն Ռուսաց», իսկ 1841 թուին «Պատմութիւն Օսմանեան պետութեան» նշանաւոր գրուածքը:

Այդպովսկու կեանքում մի նոր շրջան է

սկսում, երբ 1848 թ. օգնական է նշանակւում Փարիզի Մուրաղեան վարժարանի տեսչ Ս. Վ. Թէոդորեանի, Վերջինս տեսնելով իր օգնականի արտակարգ ընդունակութիւններն ու պատրաստութիւնը, ամբողջապէս նըրան է յանձնում դպրոցի տեսչութիւնը, իրան վերապահելով միայն տնտեսական բաժինը, եւ Այլազովսկին լիուլի չափով արգարացնում է իր վրա դրած յոյսերը՝ Վարժառուն օրէցօք առաջադիմում է, նրա հոչակը բարձրանում. նոյն իսկ լուսաւորչական հայերը այդպես են ուղարկում իրանց զաւակներին:

Բայց աճա սկսում են զաւանաբանական ներ ինտերիզները: Միիթթարեանների արբանայրը հասովմի դրդամը հրամայում է, որ Մուրաղեան վարժարանի լուսաւորչական սահերը կամ գաւանափոխ լինեն կամ հեռաւեն դպրոցից: Տեսուչը հրամարում է այդ անարդար պահանջն իրագործելուց, աւելի լաւ համարելով թողնել պաշտօնը և նոյն իսկ հեռանալ միաբանութիւնից:

Բայց հասնում գործիչը հանդիսատ կետնքի սովոր չեր նա սիրում էր եռուն գործունէութիւնը, ուստի և 1855 թ. Թրանսիայի մայրաքաղաքում նա հիմում է «Մասեաց Աղաւենի Ընկերութեան» պատկերազարդ հայերէն և քբանսերէն հանդէսը: Շուտով Միիթթարեան միաբանութիւնից բաժանում են և երկու ուրիշ վարդապետներ՝ Մարգիս Թէոդորոսեան և Ամբրոսիոս Դալֆայեան, որոնք և զաւանում են Այլազովսկու ամենամօտիկ աշ-

խատակիցներն ու գործակիցները:

Դրանք երեքով որոշում են ուժեղ մքցում սկսել Մուրաղեան վարժարանի գէմ, ուստի և Փարիզում հիմում են մի նոր դպրոց՝ «Հայկազեան բազմալիղուեան վարժարան» անունով: Բայց նորահաստատ դպրոցը աջողութիւն չունեցաւ, որովհետեւ սուր էին նիւթական միջոցները, որովհետեւ կ Պօլի հայերը և պատրիարքանը շիբականացրին իրանց տուած առաջ խստապահութերը:

Այդ փոթորկալի ժամանակամիջոցում, երբ կաթոլիկ միաբանութեան և հեռացած վարդապահների մաքառումը հետզհետէ աւելի ու աւելի սուր կերպարանք էր ստանում, հայր Այլազովսկին իր ձիբքերի շորորն մի նոր միտր է յդանում—այն է՝ վերաբանալ հայրենիք և Հարաւային Ռուսաստանում ապրող հայերը համար մի նոր դպրոց հիմնել: Այդ մասին նա դիսպահաստան միջոցով նախօրօք հաւանութիւն է ստանում ուսւաց կառավարութեան կողմից և ապա ճանապարհ ընկնում դէպի Քետերբուրգ:

Շանը ժամանակներ էին: Վաթճանուել էր ներսէն Աշտարակեցին, թափուր էր մնացել էջմիածնի գահը: Շատ անդեռում նովիւ չկար, և եկեղեցական գործերը խճնուած վիճակի մէջ էին: Բայց ուսւ կառավարութիւնը ամենից շատ Հարաւային Ռուսաստանի հայերի մասին էր ինամբ ասնում, ուստի և նախապէս համաձայնութիւն կայացնելով էջմիածնի Ախնօղի հետ՝ Այլազովսկուն Բեսարաբիայի և նոր-

Նախիջևանի թեմի կառավարիչ է Կոշանակում:
Սկսում է գործունէութեան նոր շրջան:
Հայր Գաբրիելը կարճ միջոցում հաշտեցնում է
Նոր-Նախիջևանի շկուսակցութիւններին: Հայր
ապետեաններին և Խալիբեաններին, ձեռք է
բերում եկեղեցական գրամմերը և Խալիբեանի
օգութեամբ Թէոգոփայում հիմում է Խա-
լիբեան գվարցը և տպարանը: Այստեղ էլ նա
շարունակում է «Մասնաց Ազանու» հրատա-
րակութիւնը: Նոր շրջանը, նոր գործունէու-
թիւնը նոր թշնամիներ ու հակառակորդներ
է առաջ բերում: Սկսում են հարածանք Այգա-
գովսկով դէմ: Հալածանք թէ մասնաւոր մի-
ջնցներով և թէ հրապարակախօսական ձեռվ:

«Մասնաց Ազանու» դէմ են՝ Ա. Նազար-
եանցի «Հիւսիսափայլը», Թիֆլսի «Մեզու Հա-
յոստանին» և կ. Պօլսի «Մեղուն», բայց Արգա-
գովսկին անվիշտ կերպով շարունակում է իր
պայքարը, առակներով ու սրամիս ձեռվ պա-
տասխանելով հակառակորդներին:

Այգագովսկու տեսչութիւնը Խալիբեան
զպրոցում շարունակում է ընդամենը 7 տարի
(1858—1865): Նա հետացաւ այդ պաշտօնից,
երբ արձակուեց թեմակալութիւնից: Նրան
առաջարկեցին կառավարել Երևանի թեմը,
բայց նա ընդունեց այդ առաջարկը և աւելի
գերազան համարեց ապրել Թէոգոփայում—
ազգականների մօս և ամբողջապէս նուիրուել
գրական գրադմունքներին:

Այդ շրջանում նա հաւաքագրեց և հրատա-
րակեց Կրիլովի առակների գողտրիկ թարգ-

մանութիւր, որ մինչև այժմ էլ անգուստական
մի գործ է մեր զրականութեան մէջ: Այստ-
դպմակին թէն սկզբունքով հակառակ էր աշ-
խարհաբարին, բայց գործնականապէս նրա
մշակողներից առաջնը զարձաւ, տալով:

Հոդիդ սիրես, կնյահաւ,

Անուշ րոհ, հրամէ կեր...

(Թարութիւն գալաճթ)

Կայլ նմանօրինակ ժողովրդական զարձուածք-
ներով թարգմանութիւններ:

* *

Այգագովսկու կեանքում մի նոր շրջան է
սկսում, երբ 1867 թուին կաթողիկոսական
զան է բարձրանում Գէորգ Ա. բ. նա սիրա-
լիք վերաբերունք է ցոյց տալիս զէպի հա-
լածական փարզապետը, նոյն թօւին կափսկո-
պոս է ձեռնապրում և Սինօղի անգամ կար-
գում 1875 թ. նշանակում է նա իշմիածնի նո-
րաբաց ձեմարանի տեսուչ և միևնուն ժամա-
նակ ստանում է Վրաստանի և Իններեթի թե-
մակալութիւնն ու արքեպիսկոպոսութեան կո-
չումը: Ճեմարանի զեկը նա յանձնում է մի
ուն Գալրտեաննին, իսկ ինքը տեղափախում է
Թիֆլսի ընդարձակ թեմը կառավարելու: Դր-
առաքը էր այդքան հեռու տեղից հակիւ զպրո-
ցի քա, նշանակուած կարգապահն էլ անհա-
մապատասխան էր իւր պաշտօնին, ուստի
1878 թ. բռնկուեց առաջին աշակերտական
իստոնակութիւնը, զրան հետեւ երկրորդը, ու-

րոնք և պատճառ դարձան Այլազովսկու հրաժարուելուն:

Անա այդքան ալեծածան է եղել Այլազովսկու կեանքը, ալեծածան և մաշող՝ Մի կողմից ծերութիւնը, իսկ միւս կողմից կեանքի այդպիսի սուր ելեկչները վերջապէս քայրալում են նրա առողջութիւնը: 1880թ. ձեռորնա հիւանդանում է և ապրիլի 8-ին վախճանում թիֆլիսում:

Գումարեր լուրջ կայծակի արագութեամբ տարածում է քաղաքում: Բազմաշխատ գործիչի մահը ցնցում է հայ հասարակութեանը և նա հազարներով խմբում է, որպէսզի արժանի յարգանքը մատուցանէ նրա յիշտակին:

Ապրիլի 13-ին Այլազովսկուն թաղում են Վանքի բակում:

Քսան և հինգ երկար տարիներ են անցել այն օրից, մեր գրականութիւնը համեմատարար ծաղկել և բարգաւաճել է, մեր կեանքը առաջադիմել է, բայց և այնպէս ունեն թարմ են մնացել Այլազովսկու գործունեութեան հետքերը: Ընդհանուր առմամբ արդինաւէտ է եղել այդ գործունեութիւնը թէ զպրոցական և թէ զրական ասաբարեզում: Բայց երկու պարբերական հրատարակութեան («Բազմավէպ» և «Մասեաց Ազանի») հիմնադիր՝ իշրագիր լինելուց, նա գրել է մօտ 20 զանազան աշխատութիւններ («Խուսաց պատմութիւն», «Օսմանիան պատմութիւն», «Թանգարուունք հայերէն լեզուի», «Եօթն խօսք առտղայս», «Հասարանք կենցաղօգուտ գիտելեաց»,

«Նախակըթարան հայերէն լեզուի», «Առակը Կրիլովի», «Հազար և մի առակաւոր բանք» և այլն), որոնք իրրե անձեռագործ մի արձան միշտ վառ, միշտ կենդանի կողանեն իրանց հեղինակի յիշտակը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅՑ ՇՄԱԼՈՆԵԱՆ
(Հայ լրագրութեան 110-ամեակի սովորվ)

Ալբագիրը, ասում է մի յայտնի զիտնական, հասարակութեան վերաբերմամբ նոյն զերն է կատարում, ինչ որ երակները մարմնի վերաբերմամբ: Նա իրրե մոռաւոր օպակ կապում է հասարակութեան անդամներին, սուսնդ է տալիս մարդկանց մտքին ու սրտին և մատչելի է արձնական փոխագործ շփումն ու հաղորդակցութիւնը:

Քաղաքակըթութեան այդ նշանաւոր գործոնը գեռ ասանձինգերորդ գարի վերջերում մուտք է գործել Եւրոպա, իսկ հայերս, իրրե արևելցին մի փոքրիկ ազգ, աւելի ուշ ենք օգտուել նրա բարեխներից: Միայն 1794 թուականին լրյու է տեսնում հայ լրագրութեան մայրը՝ առաջին հայերէն թերթը՝ «Ազգարարը», և այն, ոչ թէ բուն հայաստանում, այլ Հընդկաստանի հեռաւոր անկիւնում—Մադրաս քաքարում:

Ահա այդ նշանաւոր դէպքի հարիւթ տասնամեակն էր, որ լրացաւ անցեաւ 1904 թուականին:


Բայց ով էր նրա սկզբնապատճառը, ով էր հայ լրագրութեան հիմնադիլը:

—Մի համեստ քահանայ՝ Յարութիւն Շմաւոնեան, որի անձնաւորութեան մասին, դժբաղպարար, մանրամասն տեղեկութիւններ չունենք:

—Շմաւոնեանը, ասում է պ. Լէօն *), Պարոկաստանի Շիրազ քաղաքից էր, ծնուել էր 1750 թուականին և 1784-ից Մագրասի եկեղեցու քահանան էր: Սրբազն նա իր աշխատանքով, իր սեփական ծախսով հայերէն տառեր է պատրաստում, որոնց նա անուանում է «որդի գշտաց», ակնարկելով, երեսի, իր այն չարշարանքները, որոնք հասկանալի և անխռուսափելի էին այդ դէպքում, երբ ամեն ինչ ինքը պիտի պատրաստէր:

Նրա տպարանի տառջին պտուղն է «Պատմութիւն Մարիամէ կուսին» անունով վկայաբանութիւնը, որ սկսեց տպագրուել 1789թուականին և որ արտատպութիւն էր Կ. Պոլում անգամ մի օրինակից:

Երկրորդ զիրքը արգէն ուրիշ բան է՝ «Ոլլը Հայաստանիայց», հեղինակութիւն Զուղայեցի Թագէռու քահանայ Սօվինեանցի, աըսդուած 1791-ին: Թէ ինչ էր պարունակում իր



Տուր. Տամ. Շմաւոնեան

«Ա. ՈՅՈ» 1905 թ.

*). Տես «Հայկական տպագրութիւն» հան. II եր. 596—608:

մէջ այդ «Ողբը», մենք չգիտենք: Նրան հետեւում է արդէն շատ անզամ զանազան տեղերում տպագրուած և հայերի մէջ մեծ ժողովրդականութիւն փայելող «Յիսուս Որդին», ներսէն Շնորհալու հոգհոր բանաստեղծութիւնը:

1793-ին Շմաւոնեանը որտեղ ըերկրութեամբ, իբրև հնութիւնից մնացած մի թանկագին նշխար, տպագրում է յոյն փիլիսոփայ Պորֆիրիի «Ներածութիւն» ի գիրսն Արիստոտելից գործը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային վերագրւող մի հին թարգմանութիւն: Բայց արսակսի գործերով Մարքարի հայոց աւագերեցը շատ բան չէր լինի աւելացրած իրանից առաջ եղած տպագրութիւնների վրա: Դաւիթ Անյաղթի իրթին թարգմանութիւնները չզիտի կարգային հնդկաստանի փաճառական հայերը: Իսկ տպած գրքերի տարածելը անհրաժեշտ էր նախ և առաջ այն պատճառով, որ տպարանը նոր գործեր էր պահանջում: Նույն չէր կարող պարապ մնալ, մանաւանդ առանց ձախոսերի չէր գործի: Այդ պահանջը բարերախտութիւն էր մեզ համար: Հետեւեալ 1794 թուականին գտնուած էր նրան բաւարարութիւն տալու միջոցը, որ և անմոռանալի դարձութ է բաց անում մեր գրականութեան մէջ:

Օգոստոսի 7-ին երեան է գալիս մի տպագրուած թերթ, ուղղած «Բարեթաշտ Պարնաց և Մաքրակենցաղ Տիկնաց Մաղլասին Հայոց»: Այդտեղ Յարութիւն քահանան յայտնում էր,

թէ զիտաւորութիւն ունի ամեն ամսի վերջում իր տպարանից լոյս հանել մի տետրակ, որի անունը կլինի «Աղջարաբող» և որից ընթեցողը կիմանայ նոյն ամսուայ անցքերը, քաղուած թէ զանազան «կաղէթներից», թէ զանազան քարտէսներից և թէ զանազան զըրքերից, նոյնպէս և հարկաւոր ու քաղցրաբուր բաներ. տետրակի վերջում կարուի հնահեալ ամսի օրացոյցը, որի մէջ կլինեն սբերի տօները, լուսնի ծննդեան և լմման օրերը։ Յայտարարութիւնը վերջանում էր նրանով, որ եթէ այդ տետրակին գրուղներ լինեն, հրատարակութիւնը շուտով կախուի: Երկու ամիս չանցած, 28 բաժանորդներ կան, և Յարութիւնը քահանան հրատարակում է իր «Աղջարաբոր», առաջին հայերէն պարբերական հրատարակութիւնը:

Գործը կազմակերպուած է կանոնաւոր կերպով. կայ խմբագրութիւն, կան աշխատակիցներ: Յարութիւնը քահանան գտնում է Մալրասում մի քանի ուրախակից երիտասարդները, որոնք յանձն են առնում աջակցել առաջին հայ լրտպին: Այդ աշխատակիցները կոչում են վերակացուներ: Շմաւոնեանը միահեծան տէր չէ, իւրաքանչիւր գրուածք նախ և առաջ պիտի վերակացուների կամ, խօսերով այժմեան լեզուով, խմբագրական մարմնի հաւանութիւնն ստանայ և ապա միայն ուղարկուի տպարան: Եկեղեցու զանգակատան տակ մի արկդ է գրուածք, որի մէջ ամեն մէկը կարող է գցել իր այն գրութիւնը, որ նշանա-

կուած էր «Աղջարաբի» համար:

Աղջարաբը 18 ամիս ապրեց, կանոնաւոր հրատարակուելով մինչ 1796-ի մարտը: Ամբողջ այդ ժամանակամիջոցում հայ ընթեցողը ունել մի թերթ, որ ընթացիկ կեանքի պատկերն էր ներկայացնում, որքան միջոց և կարողութիւն ունել: Մի կողմից Փրանսիական յեղափոխութեան լուրերն էին տեղ զըտնում այդ լրազրի մէջ, միւս կողմից Ցովսէփ արքեպիսկոպոս Արքութեանի նամակները Պետերբուրգից, որոնց մէջ պատմուած էին 1791-ի սուս-թիւրբական պատերազմի անցքերը, հայերի գաղթականութիւնը: Թէկ «քերթողական արհեստին» հմուտ չէր Մարգարի անդրանիկ հայ խմբագրութիւնը, բայց և այնպէս, նրան աջողուում էր մի կենդանի գործ կատարել: Այդպէս է եղել մեր լրազրական պատմութեանը համարեա միշտ: «քերթողական արհեստին» հմուտ հայերը չէին գործ կատարողները, այլ նրանք, որոնց լեզուազիտութեան վրա ծաղրում էին այդ հմուտները: Այսօր էլ «Աղջարաբը» տալիս է մեղ շատ ապացոյցներ թէ իր ժամանակի հանգամանքներին ու հաւանողութիւններին նայած՝ նա շատ մեծ պատովի է տարել պարբերական մասուլի պարտաւորութիւնները:

1796 թուականից յետոյ Յարութիւնը քահանային մենք այլ ևս չենք տեսնում գրական և հրատարակչական ասպարէզում: Բայց նա երկար ապրեց և, ինչպէս ասում են, շատ դժբախտութիւններ տեսաւ իր ընտանեկան

կեանքի մէջ։ Այդ գժբախտութիւնների պատճառը զիսաւը այսպապէս այն էր, որ նրա աղջիկն ու փեսան Հնդկաստանի վշացած և անբարոյալան վարքն տէր հայերից էին։ Այդ ընտանիքի պատճառով էլ մեր առաջին խմբադիրը վատնում է եկեղեցական և ազգային գումարներ, գտառաստանի տակ է ընկնում և մնում է մի շատ ցաւալի մահով 1827 թուականին։

ՍՏԵՓԱՆՈՂ ՆԱԶԱՐԵԱՆ

(Մահուան 25-ամեակի առիրով *)

Երբ 1865 թուականին Ցիցիանովը մօհցաւ Սբարսի հովտին և ոռւսաց գօրքերը պաշտպահին Երեան, Խոյի և Սալմաստի կողմէր մի հայ զազմականութիւն եկաւ, անմերից մի հայ զազմականութիւն եկաւ, անոցաւ ոռւսաց հովը, որպէսզի ազատ լինի պարունական տիրապետութիւնից. զազմականների կական արբապետութիւնից։ Հազմականների մէջ էր Խոյեցի Եսայի քահանայ Նազարեան՝ որը բնտկուեց Թիֆլիսի Հաւլաբար թագը, որ բնտկուեց Թիֆլիսի Հաւլաբար թագը։

1812 թ. գեկտեմբերի 12-ին այդ քահանայի բնաւանիքում ծնուեց չորրորդ զաւակը, որը տուին Ստեփանոս անունը։ Նրանից արդին



Ստեփանոս Կոգուշեան

1880-1905 թ.

*) Մեծ ցափակ օքտոբերի եցի 1801 թ., Կազարեան» աշխատութիւնից։

սաջ ծնուել Եին Դիմիտրիսուր Հոփփովմէն և
Մարտիրոսը:

Տէր Եսային իւր ժամանակի լաւ հոգես-
ռականներից մէկն էր: Գոնէ զիտէր զրեւ կար-
դալ «բաւական ընտիր հայկաբանութեամբ»:
Ինչպէս երեսում է, նախապէս նա ինքն էր
զաս տալիս իր երեխաններին: Լինելով իրու-
հարը սրտարաց, սիբոզ, քնքշասիբար խնամա-
կալ, նա խստապահանջ էր, նոյն իսկ անզութ'
ինչպէս ուսուցիչ: Մանկավարժական այդպիսի
սիստեմի բոլոր բարիքները վայելել է Ստե-
փանոսը, նախ քան դպրոց մանելլ:

Տանը ստացած թթութիւնը, ի հարկէ,
այլուրենն էր, Սազմուր և ապա կտակարա-
նը: Ստեփանոսը անզիր էր անում սըսազն
զբուածքները, բայց բոլորովին մեքենաբար,
շնասկանալով անզիր արածի միարք:

Զգիտենք, թէ որրան ժամանակ նազա-
րեանցը զրագիտութիւն սովորեց իւր հօր
մօտ: Այսքանն է յայտնի, որ հայրը նրան և
Մարտիրոս որդուն յանձնեց Պօղոս վարդա-
պեաին, որ Ներսէս Աշտարակեցու բացած
նոր զպրոցի զեկավարն էր: Այսակեղ նազա-
րեանցը սովորում է հայկաբանութիւն Զամ-
շեանի քերականութեան վրա: Նազարեանցը
իր զասընկերների հետ վերջապէս 1824 թ. ան-
զափիւում է իսկական ներսիսեան զպրոցը:

1827 թ. փետրուարի 24-ին նա ներացաւ
Ներսիսեան զպրոցից, վերջացնելով ուսումը:
Մակարն ուսումն աւարտելուց յետոյ էլ նա-
զագրիանը յաճախում է զպրոց՝ պրօֆ. Շահան

на историю Гайканској Литературы до конца 13-го столѣтия» *վերնագրով*: Յաջորդ տարին այդ աշխատութիւնը ապառում է համալսարանի պաշտօնական օրգանի մէջ:

Անցնում է երեք տարի և Նազարեանցը հայ-պարսկական զպբութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար համալսարանին իրեկ զիսերտացիա ներկայացնում է յիշեալ աշխատութեան երկրորդ մասը՝ հայոց գրականութեան պատմութիւնը 14-րորդ դարի սկզբից մինչև 1840 թուականը: Սակայն մագիստրոսի աստիճանն էլ չի բաւականացնում աշխատասէր գիտնականին: Նա ձգտում է աւելի բարձրը, եւ ահա 1849 թ. նա ներկայացնում է մի նոր զիսերտացիա պարսկական բանաստեղծութեան մասին—(Ֆերգուսի և նրա «Շահնամէ»)։ և ստանում է գօկորի աստիճան։

Սակայն այդ բոլորը բաւարարութիւն չէ տալիք Նազարեանին: Նրան քաշում էր հայկական իրականութիւնը, նա հայ համարակառնութեանը ծառայելու էր ձգտում: Եւ ահա մի-մեանց յետեկից լոյս են տեսնում հայերէն զրուած աշխատութիւնները: Դեռ 1843 թ. նա պատրաստել էր «ընդհանուր պատմութեան անցքերի համառօսութիւնը» (*), իսկ 1847 թ. «Յաղագս փորձական նոգերանութեան հառ»-ը, որի մէջ աւելի նշանաւորը առաջաբանն էր, քան բուն հոգերանութիւնը: Այդ առաջաբա-

*) Այդ աշխատութիւնը սպազրուեց միայն 1851 թ. Կարենաների օգնութեամբ:

Զրաբետից ֆրանսերէն սովորելու համար վերջապէս Նազարեանին յաջողուում է զնալ Թօրպատ բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելու նպատակով: Ութ տարի անեց նրա զօրպատեան կեանքը: Համալսարան մտնելու համար պէտք էր պատրաստուել, քննութիւն ալ, և եթէ մենք յիշենք, թէ որքան խեղճ ու թիժե պաշարով էր նա զնացել Թօրպատ, հասկանալի կլինի, թէ ինչ հսկայական աշխատանք պիտի նա զործ զրած լինի՝ համալսարանական ուսանողին անհրաժեշտ գիտական պատրաստութիւնը ձեռք բերելու համար։

Թօրպատում Նազարեանը աւարտեց իւր ուսումը 1840 թուականին: Այդտեղ նա նշանեց զերմանացի մի օրիորդի հետ, ապա զնաց Գետերուրդ, ուր մասց երկար և վերպարձաւ նորից Թօրպատ՝ ամուսնանալու համար: Ամուսնացել է, ինչպէս երկում է, 1842-ին:

Պետերբուրգում, պատեսօր Վիլերի առելով, Նազարեանը ուսումնասիլում էր արքելեան իրզուները: Նա ձգտում էր Մուկուտայի Լազարեան ճեմարանի ուսուցչից զանալ, բայց այդ ձգտումն անկատար մնաց:

Այդ միջոցին Կազանի համալսարանում բացւում են հայերէնի դասեր և մինիստրը Նազարեանին նշանակում է ուսուցիչ՝ տարեկան 2300 ր. ոռնիկով։

1843 թ. Նազարեանը պրոֆէսորական միշտանում կարդում է մի դասախոսութիւն հայոց հին զրականութեան մասին՝ «Ենցայի Վզլրած

հում նազարեանը կրակոտ լեզով խօսում է հայ գրականութեան ու առաջադիմութեան մասին:

Դրանից յետոյ լոյս է տեսնում «Վարդապետարան կրօնի» գրուածքը, որ նազարեանի առաջին աշխարհաբար աշխատութիւնն է և չափազանց մեծ աղուկ հանեց հակառակորդների շրջանում: Բայց նազարեանցը հակառակորդներից վեցներու չեր: Նա ունէր որոշ համոզմունք ու նպատակ և դրանց թելալրած ճանապարհով առաջ էր զնում: 1853 թ. լոյս է տեսնում նրա մի այլ աշխատութիւնը՝ «Առաջին Հոգեղէն Կերակուր», որ առաջին աշխարհաբար գասագիրքն է մեզանում: Այդ էլ գեռ բոլորը չեր: 1857 թ. լոյս է տեսնում նազարեանի զարգանալի աշխատախրութեան արդինքը «Հանդէս նոր Հայախօսութեան» հոկայական գործը՝ երկու մեծ հատորներից հոկայական պարունակում են 1005 մերակացած, որ պարունակում է ծագիր երեսներ: Դրանից յետոյ լոյս է տեսնում Բէրնարդէն զը Սան Պիէռի «Պատել և Վիրգինիա» վեպի թարգմանութիւնը՝ «Հնդկական Խուզը» փոքրիկ պատմուածքի հետ միասին և վերջապէս Սատափ նշանաւոր «Գիւլիստանի» թարգմանութիւնը ուսւերէն լեզուով:

Բայց այդքան բազմաթիւ և բազմազան գրուածքները չեին նազարեանի անուան անմահայնուր, այլ հրապարակախօսական գործունէութիւնը, որի արտայայտիչն էր «Հիւսիսափայլ»:

«Հիւսիսափայլ»-ն չէ լսել այդ անունը, ով չգիտէ, որ նա մեր մտաւոր վերածնութեան առաջին կոչնակն էր, որ իւր շուրջը խմբց ժամանակակից լաւագոյն և ազատամիտ ոյժերին: Այդուեղ են սկսել գրել Ռաֆֆին, Գամառ-Քաթիպա, Սմբատ Շահագիզը, Սաղաթեանը և ուրիշները: Այդուեղ է իր փառվուն գրչի ոյժն այտայալակել Միքայէլ նալբանդեանը, որը նազարեանի ամենամօտիկ աշխատակիցն ու գործակիցն էր:

Բայց ինչպէս գոյութիւն ստացաւ այդ նշանաւոր ամսագիրը: Տեսնենք: Նազարեանը 1849 թ. մի անգամ ևս փորձում է բազով՝ և աշխատուը Լազարեանից պաշտօն խնդրելով Լազարեան ճեմարանում: Բարեբազգագրաբ այս անգամ փորձը աջողութեամբ է պասկեւում և նազարեանը տեղափակուում է Մուկուա: Ահա այսուեղ, Ռուսաստանի մտաւոր կենտրոնում, նա ձեռնարկում է «Հիւսիսափայլ» հրատարակութեանը 1858 թ.:

Գործը գծուար էր և մաշող աշխատանք պահանջող, բայց նազարեանը գժուարութիւնից ու աշխատանքից վախեցող չեր: Նա համարձակ կերպով ասպարէզ է մոնում և մի առանձին թափով քարոզում արդարութիւն, աղատութիւն ու ճշմարիտ առաջադիմութիւն: Նա ասում է, որ հայ հոգեորականութիւնը կարօս է բարենորոգման, որ գրաբարի փոխարէն պէտք է ծողովրդին մատչելի աշխարհաբար լեզու գործածել, որ պէտք է վերանորոգել այն ամենը, ինչ որ հին է և անպէտք,

ինչ որ խոչընդում է ազգային առաջապիլմութեան:

Սակայն այդ համարձակ պահանջները մեծ իրարանցում են առաջացնում պահպանողականների շրջանում: Օրէցօք աւելանում են «Հիւսիսափայլի» հակառակորդները, սաստկանում է թշնամութիւնը և վերջապէս գործը մատնութեան ու ստորոտիւնն է համում: Բարեբազարար նազարեանը կարողանում է պաշտպանել իր իրաւունքները, և «Հիւսիսափայլը» շարունակում է լրս տեսնել, թէկ ոչ երկար: Նրա բաժանորդների թիւը հետքնետէ նուազում է, նիւթեականի կարիքը ուժեղանում, ուստի և 1862 թ. դադարում է այդ հըրատարակութիւնը, 1864 թ. նորից վերականգնում և նոյն թուականի նոյեմբեր ամին դադարում ընդմիջում:

Դա զգալի կորուստ էր գիտակող հայերի համար: Բայց շատ քիչ էր այդպիսիների թիւը և նրանց ձայնը կորչում էր խաւարի մթնոլորտում, իրեն «ձայն բառբառոյ յանապատճու:

«Հիւսիսափայլի» դադարումից հերեք ասրի անցած նազարեանը թողնում է ուսուցչական պաշտօնը Լազարեան հեմարանում: Նա ուզում էր լինել հայ ժողովրդի հետ, աչսով՝ տեսնել նրանց ցաւերը, ականջով լսել նրանց հառաչները, ուստի և 1869 թ. ուրախութեամբ յանձն է առնում ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնը, որ և շարունակում է միայն երկու տարի:

1876 թ. նա մանապարհորդութիւն է կատարում ներպայում, իսկ 1879 թ. հիւանդանում և գաֆճանում Մօսկովյայում, ապրիլի 26-ին: Տեղական հայ հասարակութիւնը ցընցումով լսում է այդ քօթարեր լուրը և մեծ հանդիսով կատարում իւր ներոս-մշակի թաղումը: Իզուր չէր նրա դագաղի վրա բանաստեղծ Շահազիդն ասում:

Անձեռագործ դու մահարձան յեզ կանգնեցիր,
Ոչ հողանիւր, որպէս երկար որձաքար.
Հըգօր գրչով, սուրբ վաստակով ու անձանձիր,
Ջումէջ կենդանի եւ յետ մահուան դու
րովիր. .

— Նազարեան, իրաւացի կերպով նկատում է պ. Աէօն, զա մեր ներուն է, նա մարմարեց մի նոր, մեղանում զեռ չաենուած, տիպ, հասարակութիւնը առաջնորդող տիպը, նրանով զրական գործիչը հաստատուն, պատուաւոր անդ զրաւեց մեր հասարակութեան մէջ: Մինչև նազարեանը կային գրողներ, բայց չկային գրական նահատակներ: Առաջ զրում էին սոսկ զուարձանալու համար, իսկ նազարեանցը պատերազմում էր զրելով...



առ է մովելորդունը բանակ ուն այս առաջ
արքաւուն Այ թշրի ճայ և ուսպան և նուզան
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ առաջ
ԺԱՄԱՆԱԿԱՎԻՑ ԳԵՂՄՓԵՐ

I և 0

(Առաքել Բաբախանեան)

(Ծննդեան հօտամեակի ասիրով)

Շուշի քաղաքի յետ ընկած մի թագում
ապրում, էր գերձակ Գրիգորը: Նա ծանրա-
բեռնուած էր հոգսերով և հազիւ էր կարողա-
նում ընտանիքի օրուայ պարէնը հայթայթել:
Մանը ու մաշող էր նրա աշխատանքը, բայց
անշահաւէտ: Նա կարում էր գիշեր-ցերեկ,
բայց զարձեալ արքատ վիճակի մէջ մոռմ:
Ծնամանեկան ծանր հոգսերը ստիլում են նը-
րան վերջապէս փոխել պարապմունքը: Նա թէ-
հազիւ գրել-կարդալ զիտէր, բայց շատ
գրասէր և սկեղեցասէր էր, ուստի և որուում
է ժամկիչ զառնաւ, եկեղեցուն սպասարկել և
այդ ճանապարհով իր ապրուսան հայթայթել:
Նրա կինը՝ Եղիսաբէթը զիւղացի էր և անդ-
րագէտ, ուստի և անկարող էր բացի ընտա-
նիկան զործերը կատարելուց ուրիշ կերպ էլ
օգնել ամուսնուն:

Ահա այսպիսի չարքաշ ծնողներից 1860
թ. ապրիլի 6-ին ծնուում է մի զաւակ, զա Ա-
ռաքելն էր: Աղքատութեան ծանր լծի տակ է
անցնում նրա մանկութիւնը. հոգսերով է ծան-

թեամբ է ամպերից անձրե թափում, որ մա-
սախուզը կարելի է ցրուել էլեկտրականու-
թեան միջոցով: Նորագոյն հնտազուութիւն-
սերը ցոյց են տալիս, որ արհեստական ձեռվ
կարելի է էլեկտրականացնել ամպերը և անձ-
րե ստանալ կամ մաքրել մինուրութը ծխից ու
մինուրութից:

Խնայիկ ստուգել բազմապատկանմբ
գործարական միջոցով: Բազմապատկանմբ գոր-
ծողութիւնը ստուգելու համար սոլյուրաբար
գործ է ածւում բաժանուումը, բայց աւելի հեշտ
և ստոյգ կերպով կարելի է ստուգել նաև գու-
մարման միջոցով: Դրա համար հարկաւոր է
բազմապատկելի բոլոր թուանշանները գու-
մարել, եթէ ստացած երկու կամ աւելի թու-
անշանից բազկացած թիւ նորից գումարել և
այդպէս շարունակել մինչեւ որ վերջում ստա-
ցուի մի թուանշան: Նոյն ձեռվ պէտք է վա-
րուել նաև բազմապատկելի հետ և այդ երկու
թուանշանները միմեանց վրա բազմապատկելի:
Դրանից յետոյ պէտք է գումարել արտադրեա-
լի թուանշանները և եթէ այդ հետեանքը հա-
ւասար լինի վերել երկու թուանշանների
արտադրեալին, այն ժամանակ գործողութիւ-
նը ճիշտ է կատարուած:

Ահա օրինակ. $15,432,617 \times 114,581 =$
1,768,284,688,477: Այդ գործադութիւնն ստու-
գելու համար գործադրելով նկարագրած մի-
ջոցը, կտանանը հստեւելը. բազմապատկելիի
թուանշանների գումարն է $1+5+4+3+2+6+$
 $1+7=29$, $2+9=11$, $1+1=2$. բազմապատկելի-

չինը՝ $1+1+4+5+8+1=20$, $2+0=2$: Այդ
երկու թուանշանը բազմապատկելով կստա-
նանք $2\times 2=4$: Այժմ վերցնենք արտադրեալի
թուանշանները $1+7+6+8+2+8+4+6+8+$
 $8+4+7+7=76$, $7+6=13$, $1+3=4$: Ուրեմն
գործողութիւնը ձիւմ է կատարուած, որու-
հետեւ $4=4$:

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Մեղօփի խալքոցի դէմ լու ազգում է
սխառար կամ սոխը: Դրա համար հարկաւոր է
խայթած տեղի վրա կաթեցնել այդ բայսիրից
մէկի հրաթը, որը շուտով կմեղմացնի ցաւը և
կոչնչացնի ուռոյցը:

Քրեանձ ոսեերը եթէ մաքուր լուա-
նանք, չորացնենք, ծածկնենք այրած ու մանր
փոշիացրած շիպով (եւածու), ապա հագնենք
մաքուր գուլպաներ և այդ միջնոցը կրկնենք
մի քանի անգամ, քրտինքը հետզհետէ կնուա-
ղի և վերջը բոլորովին կոչնչանայ:

Քրից հսասդ արինը կանգնեցնելու հա-
մար պէտք է ձեռքերը վերև բարձրացնել, ձա-
կատի վրա գնել սառը փաթեթներ և շուտ
շուտ փոխել: Օգտակար է նաև քթով գոլ ջուր
ներս քաշելու:

Կարը չպէտք է խմել ջրի նման մի
անգամից միծ քանակութիւնը, որովհետեւ այդ

դէմքրում նա ստամքրում շուտով թթւում—
լու է զառնում և միծ գժուարութեամբ է
մարսում: Աւելի օգտակար է նմել կամաց-
կամաց, քիչ-քիչ:

Հարբուխից ազատ մնալու համար լաւ
է առաւօտեան և հրեկոյեան քթի մէջ քաշել
ջուր: Այդ ջուրը կորըէ քթի մազասային թա-
զանթը, կոչնչացնէ ներս մտած փոշին և կը-
պահպանէ մրսիլուց:

Ասկրացան ունեցանիերի վրա շատ լաւ
է ազգում իւրաքանչիւր օր մարմինը սառը
ջրով տրորիլը: Բացի դրանից պէտք է որոշ
գիշտ պարապանել՝ զինի և զարիջուր չխմել և
ուտել զիխսուրապէս ձկնեղէն, ձռ և թոչուն-
ների միս:

Այրուածի ցաւերը մեղմացնելու համար
պէտք է մի բաժակ ջրի մէջ լցնել մի գդալ
սովոր: այդ լուծուածքով թթչել քաթնի կտո-
ռը և զնել այրուած անդամի վրա և ապա փո-
րսը և զնել անգամ: Եթէ բշտիկներ են գո-
յացել—լու է վրան ցանել սօդայի և կարտո-
ֆիլի ալիւրի խառնուրդ—փոշի:

Անինութեան դէմ լու միջոց է համար-
ւում, անզլիացի բժիշկների ասկելով, հե-
տեալը, երեսորբիչ մի ծայրը թթչել ջրով:
պակելիս զնել ծոծրակի վրա և ծածկել ե-
րեսորբիչ չոր ծայրով, որպէսզի թացութիւ-
նը շուտով զգողորշիանայ: Այդ միջոցը լաւ
ներգրածում է մանաւանդ լարուած մտաւոր
աշխատանք, վիշտ կամ մտածմունք ունեցող-
ների վրա:

Լուծարականի հասք շատերին զգուանք
է պատճառում: Դրա առաջն առնելու համար
է բաժակի մէջ լցնել քիչ կօնեակ և ա-
պետք է բաժակի մէջ լցնել լուծողա-
պա դաստիքել ու անմիջապէս լցնել լուծողա-
կան և վրայից էլ մի բաժակ կօնեակ: Կոնեա-
կան հոտն ու համը բարձրովին կոչուացնէ լու-
ծողականի անախորժ ներգործութիւնը:

Զաղ մարդիկ Եիսարել կարող են որոշ
դիէտ պահանելով: Նրանք չպէտք է ուտեն
վիտշինա, իւղու միս, հում սեր, շաքար, կար-
տոֆիլ, բրինձ և առնասարակ ալիւրեղին կե-
րակուր: Անելի լաւ է ուտել գիսաւորապէս
ձկնորդն, ձու, թռչունի միս, կանաչեղին և
թարմ մրգեղին: Խմելիքներից արգելում է
կաթը, զարեհուրը և քաղցր գինին: Թէյ, սուրճ
և կակաօ կարելի է խմել միայն առանց շա-
քարի ու կաթի: Հանքային շրերը օգտա-
կար են:

ԳԻՒՑԱԿԱՆ ԶՈՒՄԲՃԱԼԻՔ

Ինչպէս պատրասել թենգալեան կր-
ւակիներ: Դրա համար անհամեշտ է աչքի ա-
ռաջ ունենալ նախ և առաջ հետեւել պայման-
ութը: Բոլոր նիւթերը պատրաստել պահել ու
վառել մեծ զգուշութիւնը: Ճեծել չափազանց
մաքուր հաւանքի (շուռա) մէջ, պահել չափա-
զանց չոր տեղում և իրար խառնել փայտէ
մարք պէտք է ոչ ձեռքով: Զանազան գոյների հա-
մար պէտք է վերցնել և զանազան բաղադրու-
թին, այն է,

Ապիտակ.—12 մաս բորակ (սելիտրա), 4 մաս
ծծումբ, 3 - ալիւր և 1 մաս ծծմբային սիւրմա
(շերտայ սորմա):

Դեղին.—20 մաս ազոտաթթուային բարեօն
(զօտոկիլի նարի), 2 մաս բերտոլէտեան աղ
(ներտօլետա սոլ): 1 մաս փայտածուխ և մի
քիչ ամբրայի փոշի (որօշուկ ամբր):

Կանաչ. 2 մաս օպիրմենտ, 3 մաս ածուխ,
5—բերտոլէտեան աղ, 13—ծծումբ և 80—ազո-
տաթթուային բարեօն:

Կարմիր.—20 մաս ազոտաթթուային սոսն-
ցի (զօտոկիլի սրոնի), 6 մաս ծծումբ,
5 մաս բորակ, 2 մաս ծծմբային սիւրմա և 1
մաս (կամ աւելի քիչ) ածուխ:

Կապոյշ.—60 մաս բորակ, 16—ծծմբային
սիւրմա, 8—ծծումբ, նոյնքան փառող, 4 մաս
օպիրմենտ և 1 մաս նարգոսի կուլ (լաւանցվու
օճածո):

Կրակ սոտանալու համար խառնուրդ փոշին
լցնում են երկաթի թիթեղի կամ քարի վրա և
այրում:

Մատանին օդի մէջ Վերցրեք թելը, թա-
թափեցէք թանձր աղաջրի մէջ և կորացրէք,
սպա նոյն գործողութիւնը կրկնեցէք մի քանի
անգամ, որպէսալի այդ աղը լաւ ծծուի թելի
մէջ: Դրանց յետոյ թելը ամերացրէք մի օդա-
կից կամ մեխից և ներքեի ծայրին կապեցրէք
մի թելի մատանի: Եթէ թելը այրէք, մատա-
նին դարձեալ կախուած կմնայ օդի մէջ որով-
հետեւ թելի մէջ ծծուած աղանիթը կպշողա-
կան օրէնքի ուժով կպահէ մատանին և թոյլ

չի տայ, որ ընկնի: Պարզ է, ի հարկէ, որ պալատնիքը չիմացող ականատեսներին այդ խառնը մեծ զարմանք կարող է պատճառել:

Հասարակ օգաճափ: Օդի մէջ կատարւող զանազան փոփոխութիւնները գուշակելու համար կարելի է գործածել հետևեալ հասարակ միջոցը: Պէտք է վերցնել հաւասար չափով քափուրի (ռամփօր), սելիտրա և նաշատիր, հարցնել մաքուր օդիով, նեղուշները իրար խառնելով լցնել մի սրուակի մէջ և բերանը պինդ փակել ու վրան քսել մեղքամոմ: Դրանից յետոյ սրուակը պէտք է կախել գէպի հիւսիս ուղղուած լուսամուտի առաջ: Եթէ սրուակի միջի նեղուշը մաքուր ու պարզ է, գա նշան է, որ լաւ եղանակ կլինի: Եթէ պղտորւում է՝ անձրեկ կզայ: Եթէ նեղուկի վրա փոքրիկ ամանման գոլորշի է գոյանում—դա փոթորկի նշան է: Եթէ թելքը են գոյանում—քամու նշան է: Եթէ սովորական ամպիք են գոյանում—փոփոխական կամ խոնաւ եղանակի նշան է:

Նամակների կենոք պատրաստելու համար պէտք է վերցնել մօտ 6 վերջոկ երկարութեան մի ձող, ներքինի ծայրին կպցնել մեխ կամ օդի ձող, կամ մի որմէ ծանրութիւն (քար, երդակ և կախել մի որմէ ծանրութիւն (քար, երկաթ և այլն), որպէսզի ջրի մէջ դրած ծայմանակ ձողի ^{2/3-ը} սուզուի: Չոզի միւս ծայրին պէտք է կպցնել կարտոնի մի փոքրիկ կտոր, ապա պէտք է վերցնել մի բանկայ ջուր, մուրաբայի ջրով լցնել և մէջը դնել յիշեալ ձողը: Մյու բոլորից յետոյ եթէ ձողի կարտոնի վրա դնենք մի լոտ, նա վար կիշնի և մինք

կկարողանանք ջրից հանելով որոշել այդ բանը՝ զանակով գիծ քաշելով: Եթէ 2 լոտ դնենք, աւելի խոր կսուզուի, և մենք կկարողանանք այդ էլ գծով որոշել: Այդպէս կարելի է մի քանի աստիճաններ նշանակել և հարկաւոր դէպքում նամակը քաշելով որոշել: Եթէ նա քանի լոտ է քաշում և քանի նամակադրոցմ է պահանջում:

Հ Ե Տ Ա Ք Բ Բ Ա Կ Ա Ն

Թօգուկների աշխարհը գանում է Ավրիլիայում կօնզօ, Արուվիմի և Սիմեկի զետերի շըշակայքում: Երկիրը ծածկուած է ըսկայական անտառներով: Անա նէց այդ անտառների մէջ են ապրում թղուկները՝ միայն 3—4 ոտնաշափ հասակ ունեցող մարդիկ:

Ճանապարհորդ Հայլի ասելով, դրանք բուլոն էլ զինուած են թունաւոր նիփակներով, որոնց թոյնը միքանի մամից յետոյ մաս է առաջացնում: Կերակրում են զրեթէ բացառապէս մասի և ատում են զիւզաննենական աշխատանքը: Միայն որսորդութիւն է նրանց զրադունքը:

Ոնիոզի: Եւ անմիտ մարդը: Ի՞նչեր չի անում մարդկային հնարագիտութիւնը: Շատ անգամ ատում են, թէ նա միայն մարդ ատեղծէլ չի կարուի բայց դա էլ ճիշտ չէ: Ապացոյցը վերցնենք Ամերիկայի կեանքից: Այդուղի վերջին ժամանակներս զործածութեան մէջ է մի մեքնայ, որ իր արտաքինով բոլորսպին չի

տարբերում մարդուց: Այդ մեքենայի՝ մարդը հազարում է վերջին մօդայով և ամերոյն՝ օրերով թափառում է փողոցների սալայատակների վրա, աչքերը շարժելով և մերթ ընդ մերթ ձեռքերը թափահարելով: Նրան շարժողը մի էլքարական գործիք է, որ թազցրած է փորի մէջ: Բաւական է լարել այդ գործիքը և մարդը կական է քայլել: Բայց այդ գեռ սովորը չէ. Նրա ներսում զրած է մի փօնօքրափ, այնպէս որ մարդը երբեմն-երբեմն կանգ է առնում և բարձրաձայն զովարանում այս կամ այն փիրմային, այս կամ այն ապրանքը: Մի խօսքով նա կատարեալ մարդ է, բայց չունի ոչ հոգի և ոչ միտ:

Այդ անհոգի մարդուն ամերիկացիները գործ են ածում բեկլամի համար, այսինքն նա մի բնորոշ գործիք է նորութիւններ յայտաբարելու կամ մի բան զովարանելու համար:

Ի՞նչ արժէ բնդանօրի մի հսկուածք: Մի թնդանօթ, որի խոսովակի լայնութիւնը հաւասար է 12 մատնաշատիի, իր բոլոր պարագաներով արժէ մօտ կէս միլիոն բուրի: Այդպիսի թնդանօթը կարող է արձակել 27 պուր ծանրութեան զնդակը—17 վերստ ճեռաւորութեան վրա: Խերաբանչիւր արդափսի զընդակ արժէ 2000 բուրի: Թնդանօթը 200 հատկանշից յետոյ փշանում անուշաբանում է, ուրեմն խերաբանչիւր հարուածին զալիս է 500,000—2500 ր. մաշուածք, ուրիշ խօսքով 200 ասած՝ արդափսի հսկալական

թնդանօթի իւրաքանչիւր հարուածն արժէ 2000+2500 ր.—4500 բուրլու: Գրագիւս ձիմ: Անցեալ տարի յուլիս—օգոստոս ամիսներին Բերլինում մեծ հետաքրքրութիւն զարթիցրեց: Ֆօն-Օստէն ագրարութիւն մի պարոնի ձի, որը կանոնաւոր կերպով զրում-կարդում է եկատարում է թուաբանական չորս զործութիւններ ամբողջ և կատորակ թուերով: Սկզբում այդ լուրը անհաւատալի էր լուսւմ, բայց երբ մի քանի զիտնականներ և նոյն խոկ լուսաւորութեան զործի մինիստրը-Շտուդտը այցելեցին Հանսին (այդպէս է ձիու անունը)—և տեսան նրա աբտակարգ շնորհքը, այն ժամանակ հսկաբըրքութիւնն աւելի սաստկացաւ: Բոլորն էլ ուղարկն էին տեսնել զրադէտ ձիուն, լսել նրա խօսքերը... Եւ ահա մի քանի օրում Հանսը համաշխարհային հոչակ է ստանում և մեծամեծ եկամուտների ազրիւր բաց անում իր տիրոջ համար: Նրա ամեն մի շարժումից, ամեն մի հնչիւնից երեւում է, որ օժտուած է արտակարգ ընդունակութիւններով, ունի լայիշողութիւն ու հասկացողութիւն. Նա այժմ 8 տարեկան է: Նրա ուսումը տևել է մի քանի տարի և այն ձևով, ինչպէս զպրացներում, ուրոշ սիստեմով ու ծրագրով:

Վառաւանի փախարէն ջուր: Հիւսիս. Ամերիկայում կայ մի փոքրիկ քաղաք Բօյզէ անունով և 15000 բնակիչներով: Ազտեղ ձմեռները սարսափելի ցրտեր են լինում, մինչհ-28° բէշբէրի: Այդ պատճառով էլ վառաւան-

ներ տաքացնելը ահագին ծախս էր նստում:
Բայց ահա մարդկային խելքը օդութեան է;
համսում: Գեմմինդ անունով մի գնդապետ
յանձնէ առնում փրկել հայրենի քաղաքը այդ
ծանր ծախսից. նա փորել է տալիս զետինը և
1000 ստնաշափ խորութեան վրա Ռէօմիւրի
40° տաքութիւն ունեցող ջուր է գտնում. ա-
ւելի խորը՝ այն է 1250 ստնաշափի վրա 50°
տաք ջուր և վերջապէս 2000 ստնաչ. վրա—83°:
Այդ ջուրը հաւաքում են ջրամբարներում և
ապա խողովակներով անցկացնում խանութ-
ների ու բնակարանների միջով. բացի զրա-
նից փողոցներն էլ ջրում են այդ ջրով, որով
և մեղմանում է օդի բարեխառնութիւնը:
Ահա այդպիսով ստորերկենայ ջուրը ըլո-
նում է վառարանների տեղը և 5 անգամ պա-
կասեցնում ժողովրդի ծախսները:

Պ Ե Ր Զ





ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ





«Ազգային գրադարան



NL0109867

